

ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ՀԱՄԱՆՇՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Ա Ռ Զ Ա Ր Ա Ն

Տերմինաբանության հարցերի լուծումն ու մշակումը նպաստում են լեզվի բառային համակարգի կանոնավորմանը: Եթե որևէ լեզվի գիտական տերմինաբանություն մշակված չէ, ապա խոսք չի կարող լինել այդ լեզվի զարգացածության մասին: Բացի այդ, թեև յուրաքանչյուր լեզվի տերմինաբանություն զարգանում է առանձին, մշակվում ու կատարելագործվում է այդ լեզվի ներքին օրենքներով, բայց դրանք կատարվում են՝ հաշվի առնելով համաշխարհային գիտական միտքը, դրան համապատասխանելու անհրաժեշտությունը:

Տերմինաբանության մշակումն ու կարգավորումն ամենից առաջ սկսվում են զուգահեռ գործածություն ունեցող տերմինների միօրինակացմամբ: Կարևոր են նաև տերմինային համանունության և բաղմիմաստության այն ձևերի մշակումն ու կատարելագործումը տերմինահամակարգերում, որոնք կկանխեն խառնաշփոթությունը և ավելորդ կրկնությունները:

Վերջին ժամանակներս որոշ մտավորականներ, հատկապես խոսքի մշակույթի, տերմինաբանության և թարգմանական հարցերով հետաքրքրվող մասնագետներ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում հայերենի մաքրության, տերմինաբանության հարցերի մշակման ու կարգավորման նկատմամբ: Հիշատակելի է հատկապես 1969, 1971 թթ. «Լրաբեր» հանդեսի մի քանի համարների էջերում հայերենի տերմինաբանության հարցերի շուրջ ծավալված բանավեճը¹, որը վկայում է մեր գիտնականների հոգատարության մասին այդ խնդրի հանդեպ: Իհարկե, հայերենի տերմինաբանության շատ կարևոր հարցերի հիմնական դրույթները, դրանց սկզբունքները տրված են դեռևս 1955 թ. ընդունված որոշումով: 1933 թ. գործում է ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն, որը զգալի աշխատանքներ է կատարում հայերենի տերմինաշինության, տերմինային համակարգերի մշակման, տերմինների միօրինակացման, ինչպես նաև մեր լեզվի քերականական որոշ կանոնների երկվությունները վերացնելու, պարզեցնելու ուղղու-

թյամբ: 1975 թ. կոմիտեն ավելի է ակտիվացրել իր գործունեությունը: 1978 թ. հրատարակվել է «Տերմինաբանական և ուղղադրական տեղեկատու» ժողովածուն, որը բովանդակում է նաև տերմինաշինության և տերմինաբանության նորմավորմանը առնչվող որոշումներ, հատկապես որոշ զուգահեռ գործածություն ունեցող ձևերը միօրինակացնող ցանկեր: Նկատելի է, որ այդ ցանկերում գերազանցապես ներառված են զուգահեռ գործածություն ունեցող տերմինների ազգային և օտար համարժեքներ: Սակայն հայերենում տարբեր գիտությունների տերմինահամակարգում շատ են նաև զուգահեռ գործածություն ունեցող տերմինների այլ տարատեսակներ (տարբերակներ, նույնանիշներ և այլն), որոնց միօրինակացումը ոչ միայն ցանկալի է, այլև անհրաժեշտ:

Տերմինների կարգավորումը, միայն մեկի ընտրությունը և կիրառությունը պետք է պարտադիր լինի բոլորի համար և հնարավորին չափ պետք է խուսափել անհատական տեսակետներից: Իսկ այդ պահանջում է տերմինաբանական կոմիտեի աշխատանքների առավել ակտիվացում, համընդհանուր քննարկումներ, քննարկման արդյունքների հիման վրա ընդունված որոշումներ, պարբերական բյուլետենների հրատարակում, գործնական օգնություն մամուլի և ընդհանրապես հրատարակչության աշխատակիցներին:

Տերմինաբանության հարցերի կարգավորման համար ամենից առաջ անհրաժեշտ է լեզվաբանների և համապատասխան մասնագետների համագործակցություն: Տերմինագիտությամբ զբաղվող յուրաքանչյուր մասնագետ նախ հաշվի է առնում այն, որ գիտությունը և տեխնիկային պետք է սպասարկել այժմյան մակարդակով, և ցանկացած տերմինահամակարգ պետք է համապատասխանի ժամանակակից գիտական մակարդակին: Այս առումով տերմինաբանությունը մշակվում է համաժամանակյա սկզբունքով: Հաճախ տերմինաբանները զբաղվում են նաև ոչ միայն տերմիններով, այլև անվանակարգային միավորներով, այս առումով ևս հետազոտողին հետաքրքրում են ոչ միայն տերմինները, այլև այն բոլոր լեզվական միջոցները, այն ամենը, ինչ օգնում են տերմինները կանոնավորելուն և մշակելուն: Հաճախ լեզվաբանը գիտության տարբեր բնագավառի մասնագիտական բառապաշարում նրկատում է ավելորդ ոճայնություն: Ինչ խոսք, լեզվաբանը պարտադիր է տերմինի համար, բայց հաճախ այդ «չլեզուք» տերմինի կամ անվանակարգերի կողքին հանդիպում են ժարգոնիզմի, հնաբանության, բարբառայնության, գոեհկաբանության երանգ արտահայտող ձևեր: Եվ ահա տերմինահամակարգերում հանդիպող այս տարատեսակ ոճայնությունը, որը հանդիպում է գիտական լեզվում, տարբերվում է ընդհանուր գործածություն ունեցող բառերի ոճական գունավորումից:

Հայտնի է, որ տերմինաբանությունը դիտվում է և՛ իբրև փակ, և՛ բաց համակարգ: Փակ է, քանի որ ամեն դեպքում, երբ տերմինային համակարգերում ավելանում են նոր բառեր, ապա դրանք տեղի են ունենում մյուս տարրերը փոփոխելու, վերադասավորելու հաշվին, իսկ հին տարրերը նորով փոխարինելը կատարվում է քիչ դեպքերում: Նթե այս դրույթը էական է մեծ քանակությամբ տերմինների համար, ապա ղուգահեռ գործածություն ունեցող տերմինները (դրանց բոլոր ձևերը՝ տարբերակները, համարժեքները, համանիշները) այս առումով առանձնանում են. դրանք ավելի հաճախ են ենթարկվում գիտակցական միջամբողջության՝ փոփոխության, որը կատարվում է մասնագետների կողմից՝ խիստ անհրաժեշտության դեպքում: Փաստորեն տեղի են ունենում մեկից ավելի տարրեր ունեցող շարքերի տարողության նեղացում կամ նոր անվանումների լայնացումներ: Իհարկե, այդ կատարվում է, հաշվի առնելով տերմինային համակարգերի պարփակվածությունը, նրանց տարրերի փոխադարձ համապատասխանությունները: Ահա թե ինչու նման ձևերի դասդասումը, նրանց ձևական և բովանդակային կողմերը հաշվի առնելը կարևորություն են ստանում: Բացի այդ, լեզվի տերմինային համակարգը քարացած ու անփոփոխ երևույթ չէ, մասնավոր, որ վերջինս ավելի շատ է ենթակա արտաքին միջամտությունների, քան բառապաշարի մնացած բառերը: Տերմինային համակարգերը, մասնագիտական բնագավառի պատկանող բառերն ավելի շատ կարիք ունեն մշակման և կատարելագործման, դրանց կարգավորումը անհնար է առանց անհրաժեշտ բարեփոխությունների. այն, ինչ ճիշտ կարող է լինել մի ժամանակ, որոշ ժամանակահատվածից հետո կարող է համարվել հնաբանություն: Այս առումով հայերենի տերմինաբանությունը առավել ևս պետք է գտնվի թե՛ լեզվաբանների, թե՛ այլ մասնագետների ուշադրության կենտրոնում, դառնա նրանց հոգածության առարկան, որովհետև տերմինաստեղծումը և տերմինակալմությունը մեր լեզվում ընթանում են գիտության զարգացման բուռն ընթացքին ղուգընթաց: Թեև մեր լեզվի տերմինաբանությունը գալիս է դարերի խորքից, բայց մինչև այսօր էլ այն անընդհատ փոփոխվում, համարվում և հարստանում է գիտական նոր հասկացությունների առաջացման և փոփոխման ղուգընթաց: Այստեղից բխում է լեզվաբանների և համապատասխան մասնագետների համատեղ աշխատանքի անհրաժեշտությունը՝ տերմինաբանական և տերմինաստեղծական աշխատանքը բարձր մակարդակի հասցնելու, այն պարզ ու որոշակի, ինչպես նաև կայուն ու միասնական դարձնելու համար:

Տերմինների միօրինակացման և կարգավորման հարցերը կապված են մեծ դժվարությունների հետ: Դրանք հաղթահարելու համար ամենից

առաջ անհրաժեշտ է հաշվի առնել տերմինների հետ կապված տեսական ու գործնական խնդիրների լուծումը, որը բխում է տերմինների համակարգային բնույթը, ինչպես նաև նրանց յուրահատկությունները հաշվի առնելուց: Այս առիթով ակադ. Գ. Բ. Զահուկյանը գրում է. «...Տերմինները, մի կողմից որպես բառեր, մտնում են լեզվի ընդհանուր համակարգի մեջ, և, հետևաբար, պայմանավորվում են տվյալ ազգային լեզվի պատմական տենդենցներով և առանձնահատկություններով. նրանք, մյուս կողմից, մտնում են տերմինային տվյալ մասնակի համակարգի մեջ և պայմանավորվում են տվյալ բնագավառի հասկացությունների փոխադարձ կապով ու տվյալ շրջանում այդ բնագավառի ընդգրկած գիտելիքների շրջանակով: Լեզվի համակարգը, որպես ազգի անդամների հաղորդակցման ընդհանուր միջոց, ձգտում է համազգայնություն: Տերմինային համակարգը, որպես տվյալ բնագավառի գիտելիքների ու հասկացությունների արտահայտություն, ձգտում է համամարդկայնություն»:

Տերմինների միօրինակացման և կարգավորման հարցում պետք է ուշադրություն դարձնել հատկապես հանձնարարելի և ոչ հանձնարարելի ձևերին, ընտրելիս հաշվի առնել ոչ միայն նրանց ուղիղ (բառարանային), այլև թեքվող ձևերի բարեհնչյունությունը, արտասանական առանձնահատկությունները, բառակազմական հնարավորություններն ու ճկունությունը: Այս հանգամանքը հատկապես վերաբերում է համարժեք տերմինների ընտրությանը, առանձնապես նրանց հոլովման ու խոնարհման հնարավորություններին, նրանց երկարության աստիճանին:

Տերմինային մենիմաստությունը մեր օրերի հրատապ հարցերից է: Ինչպես գրել է ակադ. Գ. Սևակը, «Տերմինաբանության միասնականությունը և հաստատուն հասկացությունների համար մենիմաստ տերմինների օգտագործումը համապետական անհրաժեշտություն է, ինչպես և գիտության ու տեխնիկայի վերընթաց շարժման նախադրյալ»:

Տերմինային բազմիմաստությունից և համանունությունից առանձնապես կարգավորման կարիք ունեն ներհամակարգային բազմիմաստությունը և համանունությունը: Դրանց առաջացումը հաճախ կապվում է թարգմանության ժամանակ տերմինների համակարգային կապերը հաշվի չառնելու հետ: Տերմինի հաճախ անհարկի, ոչ միասնական թարգմանությունը հասցնում են այն բանին, որ նույն տերմինահամակարգերում տարբեր հասկացությունների համապատասխան տերմինները թարգմանվում են միևնույն հնչյունակազմ ունեցող տերմիններով, ստեղծում ավելորդ համանուններ մեկ տերմինահամակարգի սահմանում, առաջացնում խառնաշփոթություն, օրինակ՝ փաստաթղթավարության մեջ հաճախ կիրառվում են հետևյալ համանունները, որոնք կարիք

ունեն կանոնավորման և վերանվանման. **проект**—**նուրվագիծ** (պրոսպեկտ), **схема**—**նուրվագիծ** (սխեմա), **абрис**—**նուրվագիծ** (ուրվանկար), **эскиз**—**նուրվագիծ** (էսքիզ): Կամ ուսերենի **контраст**, **антитеза**, **оппозиция**, **противопоставление** տարբեր տերմինները հայերեն հաճախ տրվում են մեկ տերմինով՝ հակադրություն: Վերջինս իր տարողությամբ դառնում է բազմիմաստ տերմին, որն իր մեջ բովանդակում է մի շարք իմաստներ, որոնք կիրառվում են միեւնույն գիտության համակարգում (լեզվաբանություն), բայց համապատասխանում են տարբեր հասկացությունների և դրանով իսկ հակասում մեկ տերմին՝ մեկ հասկացություն սկզբունքին: Նման տերմինների կարգավորումը կըհեշտացնի փոխըմբռնումը և գործնական աշխատանքում չի ստեղծի ավելորդ խառնաշփոթություն: Այդպիսի օրինակները շատ են գիտության տարբեր բնագավառներում: Ահա թե ինչու տերմինային համակարգերում ավելի շատ, քան բառային կադմին պատկանող այլ շերտերում, կարիք է զգացվում լեզվաբանների կամ համապատասխան մասնագետների ակտիվ միջամտության: Նման միջամտությունը, բընականաբար, կարող է դրական արդյունք տալ միայն այն դեպքում, եթե տերմինների միասնականացման և միօրինակացման համապատասխան սկզբունքները խնամքով մշակվեն ու կիրառվեն, հաշվի առնվեն տերմինային տարբեր համակարգերի պատկանող լեզվական գործոնները, նրանց պատճառաբանվածությունը, յուրաքանչյուր լեզվում նրանց արտահայտման եղանակները և բառակազմական յուրահատկությունները:

ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ՀԱՄԱՆՇՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ՀԱՄԱՆՇՈՒԹՅԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ ԼԵՋՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Թեև սովետական և արտասահմանյան լեզվաբանական գրականության մեջ բավական նյութ կա տերմինաբանության հարցերի վերաբերյալ, սակայն տերմինային բառապաշարի ուսումնասիրության սկզբունքների մշակումը դեռևս չի կարելի վերջնականապես լուծված համարել: Այս բնագավառում եղած հետազոտությունները հիմնականում կատարված են այն մոտեցմամբ, որ տերմինաբանությունը դիտվում է որպես համընդհանուր գրական լեզվի մի ենթահամակարգ, որը ենթարկվում է լեզվի բառաիմաստային և քերականական հիմնական օրենքներին, բայց և որոշ իմաստով առանձնանում է նրանից այնպիսի հատկանիշներով, որոնք ընդհանուր են սոսկ տերմինաբանության համար և հնարավորություն են տալիս այն դիտելու իբրև մի առանձին

ենթահամակարգ: Եվ իրոք, յուրաքանչյուր գիտության տերմինների ամբողջությունը կազմում է տվյալ գիտության տերմինաբանությունը, և յուրաքանչյուր տերմինահամակարգ ունի իր մասնագիտական հասկացությունների համապատասխան անվանումները: Բայց տվյալ, մասնավոր գիտության տերմինաբանությունը կազմելով հանդերձ, դրանք կազմում են նաև լեզվի բառապաշարի բաղկացուցիչ, քանակային առումով՝ մինչև իսկ՝ գերակշիռ մասը և շեն կարող հանդես գալ առանձին, մեկուսացված ձևով: Դրան էլ ավելացրած այն, որ ներկայումս՝ գիտությունների հարաճուն զարգացման արդի փուլում, անընդհատ առաջանում են նորանոր գիտություններ (հատկապես նոր գիտաճյուղերի վերամիավորում կամ տարանջատում), որոնց բառապաշարի ուսումնասիրությունը թե՛ առանձին վերցրած, թե՛ ընդհանուր բառապաշարի համակարգում անհրաժեշտ է դառնում (հատկապես տերմինակազմության կաղապարները, տերմինաբանության հարստացման աղբյուրները, իմաստային առանձնահատկությունները և այլն):

Թեև յուրաքանչյուր գիտության բնագավառում հաճախ են կիրառվում «տերմին», «տերմինաբանություն» բառերը, բայց տերմինի էությունը, նրա ըմբռնումը հաճախ տարբերվում են լեզվաբանական աշխատություններում: Քանի որ նշված հարցերը ընդհանրապես սովետական, մասնավորապես նաև հայ լեզվաբանական գրականության մեջ ուսումնասիրվել են⁴, ապա այստեղ կրկնություններից խուսափելու համար մանրամասնորեն շենք անդրադառնում դրանց:

Անհրաժեշտ ենք համարում միայն նշել, որ սույն աշխատանքը գրելիս մենք առաջնորդվել ենք առավել համընդհանուր ճանաչում գտած այն սկզբունքով, որ տերմին կարելի է համարել որոշակի մասնագիտական շրջանակներում գործածություն ունեցող այն բառերը և բառակապակցությունները, որոնք գիտական կամ գիտատեխնիկական հասկացությունների անվանումներ են և ունեն իրենց սահմանումները: Այս ըմբռնումը, ինչպես տեսնում ենք, վերաբերում է ոչ միայն բառ-տերմիններին, այլև տերմինային կապակցություններին: Ուրեմն տերմին-բառը կամ բառակապակցությունը, գիտության և տեխնիկայի որևէ բնագավառի համակարգի համապատասխան հասկացության հնչյունական նշանն է: Ներկայումս տերմինի նման ըմբռնումը ընդունում են նաև շատ լեզվաբաններ⁵: Տերմինին ներկայացվող պահանջներից ամենից էականները, ինչպես գտնում են շատերը, հետևյալներն են.

1. միանշանակության անհրաժեշտություն և համանշտության բացակայություն մեկ տերմինահամակարգի սահմանում.

2. ճշգրտություն.

3. համակարգայնություն, այսինքն՝ տերմինների փոխադարձ կապ տերմինահամակարգում.

4. ճիշտ կողմնորոշում տերմինահամակարգի առարկայի նկատմամբ.

5. ածանցման ենթարկվելը, հարմար լինելը.

6. լեզվի բառակազմական հնարավորություններին ենթարկվելը.

7. կարճություն.

8. հուզական և արտահայտչական երանգների բացակայություն⁶:

Սակայն նշված հատկանիշները, որոնք, իհարկե, կարևոր են տերմինի համար, որոշ դեպքերում կարող են ունենալ նաև ոչ տերմինները, ոչ մասնագիտական բնագավառներին պատկանող բառերը: Տերմինային բառապաշարի և համընդհանուր գրական լեզվի բառապաշարի քննության մեթոդների համընդհանրությունից անհրաժեշտաբար բխում է այդ երկու տարբեր երևույթների, ինչպես նաև բառի և տերմինի ավելի հստակ և պարզ սահմանադատման անհրաժեշտությունը: Այս տեսակետից պետք է հաշվի առնել որոշ հատկանիշներ: Համանիշ տերմինների կամ զուգահեռ գործածություն ունեցող ձևերի առկայությունը տերմինահամակարգերում հակասում է տերմինի համար անհրաժեշտ հատկանիշներից մեկին՝ արտահայտության և բովանդակության պլանների միանշանակությանը: Տերմինին ներկայացվող առաջին պահանջը՝ միանշանակության անհրաժեշտություն և համանշտության բացակայություն մեկ տերմինահամակարգում, իրոք շատ կարևոր է տերմինի համար, թեև հակառակ երևույթը հաճախ է հանդիպում գրեթե բոլոր տերմինահամակարգերում և շատ դեպքերում խանգարում է մասնագիտական փոխըմբռնմանը: Ահա թե ինչու տերմինաբանության հարցերին նվիրված շատ աշխատություններում սովորաբար վեր են հանվում ուսումնասիրվող բնագավառի հասկացությունները ու դրանց համապատասխան տերմինները, դիտվում դրանք իբրև բառապաշարի բաղկացուցիչ տարրեր: Այս դեպքում նման աշխատություններին բուն նպատակը տերմինների կառուցման համակարգի քննությունն է: Պատահական չէ, որ Դ. Ս. Լոտեն իր «Գիտատեխնիկական տերմինաբանության կառուցման հիմունքները» աշխատության մեջ անդրադառնում է տերմինային համանշտության և բազմիմաստության հարցերին, միաժամանակ նշում, որ տերմինների համար պարտադիր պետք է լինեն որոշ հատկանիշներ, հատկապես՝ մենիմաստություն, կոնկրետություն, կարճություն, հստակություն, հասկանալիություն⁷ և այլն: Այս հարցերը առավել ևս հրատապ են դառնում մեր օրերում: Հատկապես պետք է նշել այն երևույթը, երբ տարբեր բնագավառների պատկանող շատ կարևոր հասկացություններ չունեն իրենց

որոշակի սահմանումը և հաճախ համապատասխան բառարաններում տրվում է դրանց մոտավոր բացատրությունը: Մինչդեռ տերմինը, ի տարբերություն սովորական բառի կամ բառակապակցության, պետք է ունենա իր ճշգրիտ ու հստակ սահմանումը:

Այս ուսումնասիրության մեջ հիմք է ընդունված այն դրույթը, որ տերմինային բառապաշարը գտնվում է համընդհանուր գրական լեզվի սահմաններում: Նման ելակետից կատարված ուսումնասիրությունը հնարավորություն կտա մի կողմից համընդհանուր գրական լեզվի որոշ պարտադիր օրենքներ տարածել նաև տերմինաբանության վրա, մյուս կողմից՝ դիտել նրա անկախ զարգացումը, մշակման անհրաժեշտությունը, որոնք միաժամանակ կնպաստեն նաև համընդհանուր գրական լեզվի նորմավորմանը:

Հայտնի է, որ ամեն մի գիտության մասնագիտական բառապաշարում կարելի է գտնել մեծ քանակությամբ բառեր, որոնք առարկաների, իրերի, արտադրության մեջ գործածվող զանազան գործիքների անվանումներ են: Դրանք տարբեր տերմինահամակարգերում ունեն իրենց ուրույն տեղը և կազմում են տերմինային բառապաշարի բաղկացուցիչ մասը: Օրինակ՝ բժշկության բնագավառում կիրառվող բժշկական բազմաթիվ գործիքների, կազմախոսական անվանումները, լեզվաբանության մեջ առանձին լեզուների, բուսաբանության մեջ բույսերի զանազան անվանումները, դեղագործության հազարավոր դեղերի անվանումները և այլն: Այս ամենը ներկայացնում է տվյալ մասնագիտությունների անվանակարգությունը, առանց որի չի կարելի պատկերացնել տերմինաբանությունը: Դրանք մի կողմից լրացնում են տվյալ բնագավառի տերմինաբանությունը, մյուս կողմից՝ տարբերվում դրանից: Սակայն հարցի ուսումնասիրությունը որոշ չափով դժվարանում է այն իմաստով, որ լեզվաբանական գրականության մեջ առ այսօր չկա վերջնական կարծիք անվանակարգերի և տերմինների մասին: Շատ լեզվաբաններ գիտական լեզվի համակարգում առանձնացնում են տերմինաբանությունը և անվանակարգերը⁵, իսկ ոմանք էլ անհրաժեշտ չեն համարում դրանց սահմանադատումը⁶: Սակայն, ինչպես էլ մոտենալու լինենք խնդրին, չպետք է անտեսենք այն հանգամանքը, որ տերմինաբանությունը հասկացությունների համակարգ է, անվանակարգը՝ սոսկ անվանումների: Վերջինս տեսական մտքի հետ կապ ունի միայն հարաբերականորեն: Ոմանք անվանակարգերին են հատկացնում նաև հատուկ անունները, օրինակ՝ աշխարհագրության մեջ մեծ քանակությամբ տեղանունները (ծովերի, լճերի, աշխարհամասերի, գետերի, քաղաքների և այլն), արտադրության մեջ թողարկվող ապրանքների, առևտրում լայն գործածություն ունեցող խմիչքների և դրանց տեսակ-

ների զանազան անվանումները, աստղագիտության բնագավառում աստղերի և աստղային համաստեղությունների, մոլորակների անվանումները և այլն: Ինչպես հատուկ անուններին, այնպես էլ անվանակարգային նշաններին բնորոշ է գործառության ընդհանրությունը: Անվանակարգը չպետք է դասել տերմինների շարքը, «քանի որ դրանք հանդես չեն գալիս հասկացության բնորոշման դերով»¹⁰: Տերմինաբանությանը հատուկ է խիստ տրամաբանական իմաստավորման սկզբունքը, իսկ անվանակարգին՝ ավելի շատ ցածր վերացարկման հատկանիշը: Տերմինաբանությունն ունի կուռ համակարգայնություն, որը բնորոշ է անվանակարգերին: Ինչպես գտնում է պրոֆ. էդ. Ադայանը, անվանակարգության մեջ մտնող բառերի և տերմինների տարբերությունն այն է, որ «Տերմինները... արտահայտում են ճշգրտորեն սահմանելի հասկացություններ, մինչդեռ անունները միայն անվանում են առարկաները, նրանց տեսակները, ենթատեսակները, գործընթացները, հատկանիշները և այլն, և սահմանելի հասկացություններ չեն արտահայտում, իսկ հատուկ անունները նույնիսկ առհասարակ իմաստ չեն արտահայտում»¹¹:

Եթե տերմինի դեպքում մենք ավելի շատ գործ ունենք միմյանցով պայմանավորված հասկացությունների հետ, ապա անվանակարգի դեպքում՝ սոսկ նրանց անվանումների հետ՝ առանց ոչ այնքան լավ արտահայտված փոխադարձ կապերի պայմանավորվածության: Սակայն այս չպետք է հասկանալ բացարձակորեն: Ընդհանրապես, չի կարելի տերմինաբանության և անվանակարգերի միջև խտիվ սահմանազատման գիծ անցկացնել: Հնարավոր է, որ որոշ դեպքերում տերմինային և անվանակարգային համակարգերը հարաբերակցվեն, հանդես բերեն փոխկապակցության տարրեր: Օրինակ՝ բուսաբանության, կենդանաբանության մեջ կան դասերի, ցեղերի, տեսակների անվանումներ, որոնք համապատասխանում են սահմանելի հասկացությունների, հետևապես տերմին են, իսկ դրանց տեսակների և ենթատեսակների մեջ մտնող անվանումները չեն համապատասխանում սահմանելի հասկացությունների, ուրեմն, չի կարելի դրանք տերմին համարել: Քանակային հարաբերությամբ տարբեր գիտություններում դրանք տարբեր են: Օրինակ՝ լեզվաբանական տերմինաբանության մեջ տեսական տերմիններն ավելի շատ են, քան անվանակարգային նշանները, իսկ բուսաբանության, կենդանաբանության, աշխարհագրության և բժշկության մեջ՝ հակառակը¹²: Այս առանձնահատկությունն արտահայտվում է նաև զուգահեռ գործածություն ունեցող անվանակարգային միավորների քանակային շատությամբ:

Հայերենի բառային և քերականական համանիշները մանրամասն քննության են ենթարկվել: Դրանց վերաբերյալ գրվել են ինչպես մենագրական ուսումնասիրություններ, այնպես էլ առանձին հոդվածներ¹³: Իսկ հայերենի համանիշ տերմինները քննվել են միայն մասնակիորեն, այնքանով, որքանով դրանք դիտվել են որպես համանիշների շարքեր¹⁴: Սակայն դրանց հետ կապվում են մի շարք կարևոր հարցեր, որոնց ավելի մանրամասն լուսաբանումը կարևոր կլինի թե՛ ընդհանրապես տերմինային համանշության ըմբռնման և թե՛, մասնավորապես, հայերենի համանիշ տերմինների, դրանց հարակից հասկացությունների սահմանադատման և համակողմանի ուսումնասիրության համար: Քանի որ բառային համանշության և դրա էության ըմբռնման հետ կապված տեսական շատ հարցեր քննության են առնվել Ա. Մ. Սուբխասյանի հիշյալ աշխատության մեջ, ուստի մենք դրանց կանդորդառնա՞նք ոչ հանգամանորեն: Համանշության երևույթն ավելի շատ կքննենք այն շափով, որքանով այն վերաբերում է տերմիններին, ընդհանրապես մասնագիտական բառապաշարին:

Հայտնի է, որ լեզվաբանական գրականության մեջ առ այսօր չկա միասնական կարծիք բառերի համանշության ըմբռնման և նրանց սահմանման վերաբերյալ: Դեռևս վաղ ժամանակներից համանիշ են համարվել այն բառերը, որոնք ունեն տարբեր արտասանություն, բայց ցույց են տալիս միևնույն հասկացություն: Ինչպես երևում է այս սեղմ բնորոշումից, բառի իմաստը նույնացվել է նրա առարկայական բովանդակության հետ: Սակայն գիտությունների բոլոր դարգացումը և այս հարցի ավելի հետևողական ուսումնասիրությունները փոխել են մարդկանց պատկերացումները բառի իմաստի և նրա առարկայական բովանդակության վերաբերյալ: Տեղին է հիշատակել Սոսյուրի հետևյալ միտքը, թե շատ մարդկանց համար լեզուն իր հիմնական բովանդակությամբ անվանակարգային է, այսինքն՝ տերմինների թվարկում է, որը համապատասխանում է նույնչափ քանակի իրերի: Սակայն նման պատկերացումը, ինչպես գտնում է Սոսյուրը, կարող է քննադատության ենթարկվել մի շարք կողմերից¹⁵:

Այժմ, թեև մասամբ, ճշտված են բառի իմաստների, հասկացության, առարկայական բովանդակության և դրանց փոխադարձ կապերի հետ առնչվող հարցերը, այնուամենայնիվ, բառային համանշությունը շարունակում է տեղիք տալ վեճերի և տարակարծությունների: Ներկայումս որոշ լեզվաբաններ համանիշ են համարում միայն իմաստա-

յին նույնութուն, ուրիշները՝ մոտիկութուն ունեցող բառերը, իսկ լեզվաբանների մի այլ խումբ այդ երկու հատկանիշը համասարապես էական է համարում համանշտության համար, այսինքն՝ համանիշ են համարում թե՛ նույն, թե՛ մոտ իմաստ ունեցող բառերը: Ինչպես կտեսնենք հետո, այս հատկանիշներն ամբողջովին չեն տարածվում զուգահեռ գործածություն ունեցող տերմինների վրա: Այս առումով էլ հենց զգացվում է այս հարցերի ավելի մանրամասն լուսաբանման և նման տերմինների ուսումնասիրության անհրաժեշտությունը: Ամենից առաջ համանիշների միջև եղած գործառական կապերի սահմանազատումն արդարացվում է լեզվի համընդհանուր բառապաշարի համակարգում, որտեղ համանշտությունը դիտվում է իբրև լեզվի արտահայտչական և կիրառական հարստություն, որը հնարավորություն է տալիս արտահայտելու ամենաբազմազան նրբություններ և իմաստային երանգներ: Ինչ խոսք, տերմինային զուգաձևերը չեն կատարում նույն դերը, հետևապես այդտեղից բխում է նաև տերմինահամակարգերի կարգավորման անհրաժեշտություն, որն ամենից առաջ սկսվում է այդ զուգաձևերի վերացումով:

Քանի որ, ինչպես նշեցինք, համանշտության պրոբլեմը վերջնականապես վճռված չէ և հաճախ կարելի է հանդիպել այս հարցին նվիրված տարբեր մեկնաբանությունների, ապա այստեղ ուզում ենք հիշատակել տղանձնապես այն մեկնաբանության մասին, որ տրվում է, հենվելով բառի իմաստների գործառական հատկանիշների վրա¹⁶: Ըստ այս մեկնաբանության համանշտությունը հատուկ է յուրաքանչյուր նշանային համակարգի, հատկապես լեզվին, տրամաբանությանը և մաթեմատիկային, որտեղ այն հանդես է գալիս խիստ որոշակի նշանակությամբ: Հայտնի է, որ նշանների փոխադարձ փոխադրման լուրջությունը համարվում է համանշտության էական հատկանիշներից: Շեթե երկու անուններ համանիշներ են (բոլոր հարաբերություններում ունեն նույն բովանդակությունը), ապա միշտ կարելի է մեկը փոխարինել մյուսով, առանց փոփոխության ենթարկելու ամբողջության բովանդակությունը¹⁷: Ոմանք այս կարևոր հատկանիշին ավելացնում են նաև ճշգրտման հատկանիշը, այսպես. գերմանացի հայտնի տրամաբան և մաթեմատիկոս Ֆրեգեի կարծիքով պետք է տարբերել իմաստ և նշանակություն հասկացությունները: Անունները, լինեն դրանք բառ, բառակապակցություններ, արտահայտում են իմաստներ և ցույց են տալիս առարկա (նշանակություն): Ըստ նրա, Գիշերային աստղ և Վաղորդյան աստղ հասկացություններն ունեն նույն նշանակությունը (Վեներա մոլորակը), բայց այդ նշանակության արտահայտման համար գործադրում են այլ եղանակներ, հետևապես նաև՝ տարբեր իմաստներ: Այս էլ հենց համարում է

ճշգրտման հատկանիշ, որը հանդես է գալիս փոխադարձ փոխարինելիության հատկանիշից ոչ անկախ¹⁸:

Ինչպես տեսնում ենք, այս երկու հատկանիշը կարող է պարտադիր լինել և՛ տրամաբանության, և՛ մաթեմատիկայի համար: Բայց կա մի կարևոր հատկանիշ, որը առաջին և երկրորդ հատկանիշների հետ մեկտեղ անհրաժեշտ է լեզվի համար: այդ ոճական հատկանիշի առկայությունն է: Հասկանալի է, որ այս երեք հատկանիշները չեն խանգարում միմյանց, որոշ բառերի դեպքում կարող են մինչև իսկ լրացնել միմյանց և հանդես գալ միաժամանակ: Այս հատկանիշները լրիվ չի կարելի տարածել համանիշ տերմինների վրա, որոնք թեև զուրկ են ոճական հատկանիշից, բայց, ինչպես կտեսնենք հետո, նրանք ևս կարող են հակադրվել որոշ լրացուցիչ հատկանիշներով:

Ինչպես նշեցինք, շատ լեզվաբաններ համանշունության համար կարեւոր են համարում նրանց մոտ կամ նման իմաստները, բայց նմանության ի՞նչ հատկանիշ պետք է հասկանալ դրա տակ, պարզ չէ: Ոմանք էլ համանշունության համար շատ անհրաժեշտ են համարում համատեքստը, որը մոտ իմաստներ արտահայտելու համար համապատասխան ինֆորմացիա է տալիս: Ըստ այդ մեկնաբանությունների, բառերի ստորաբաժանումը համանիշների և ոչ համանիշների որոշ իմաստով դառնում է պայմանական, քանի որ բառերի արտահայտած իմաստները յուրաքանչյուր դեպքում բխեցվում են խոսքի շղթայում նրանց գրաված դիրքից և համատեքստից: Բայց այս հատկանիշը չի կարելի հավասարապես տարածել բոլոր տիպի համանիշների վրա: Որքան բառերն իմաստային մոտիկություն ունեն, այնքան համատեքստի անհրաժեշտություն քիչ կլինի և ընդհակառակն, որքան իմաստային տարբերությունները նշանակալից լինեն, այնքան անհրաժեշտ կլինի համատեքստի գոյությունը: Այս առումով տերմինային համանիշները հանդես կբերեն ակնհայտ առավելություններ այն իմաստով, որ շատ քիչ կարիք կունենան իրենց իմաստներն իրացնող համատեքստի:

Հայերենում շատ են զուգահեռ գործածություն ունեցող տերմինները, որոնք ազատ կերպով փոխարինում են միմյանց ցանկացած համատեքստում, օրինակ՝ համաճեղմ—նույնաճեղմ լեզվաբանական տերմինների զուգահեռ գործածությունն անժխտելի է, շատ են հանդիպում հատկապես դրանցով կազմված զուգահեռ բառակապակցությունները, ինչպես համաճեղմ բառեր—նույնաճեղմ բառեր, համաճեղմ կապակցություններ—նույնաճեղմ կապակցություններ և այլն: Դրանք հավասարապես կիրառելի են և ցանկացած համատեքստում կարող են միմյանց փոխարինել:

Որոշ տերմիններ կարող են միմյանց փոխարինել սահմանափակ

թիւով համատեքստերում, քանի որ դրանք ունեն կիրառական տարբերութիւններ: Եթե դրանք ինչ-որ չափով համանիշ են հատկապես որոշ կիրառութիւններում, ապա բացարձակ համանիշներ չեն ընդհանրապես: Օրինակ՝ երկաթգիծ և երկաթուղի տերմինների իմաստների ընդհանրութիւնն ու տարբերութիւնը կասկածանք չեն հարուցում: Անդրադառնալով բառարանում արձանագրված այդ իմաստներին. երկաթգիծ, 1. Երկաթուղային գիծ: 2. (խսկց.) Երկաթուղի: Երկաթուղի, 1. Գծային՝ ուղիսային ճանապարհ՝ գնացքների երթևեկութան համար: 2. Երկաթուղային հաղորդակցութեամբ զբաղվող հիմնարկների ամբողջութիւնը: 3. Երկաթգծի և երկաթուղային հաղորդակցութեան միջոցների ամբողջութիւնը որպէս համակարգ: 4. (խսկց.) Գնացք¹⁹:

Ուրեմն, այսպիսի տերմին համանիշները ոչ միշտ ունեն նման բաշխվածութեան հարաբերութիւն: Իմաստային մոտիկութիւնն ակընհայտ է այնքանով, որ նրանք լինելով տարբեր միավորներ, կատարում են մեկ միավորի ֆունկցիա: Սակայն այս դեպքում հարկ կլինի խստիվ տարբերել տերմինի գործածութիւնը գիտական տեքստերում և ոչ մասնագիտական շրջանակներում:

Բառական համանիշները միմյանցով փոխարինելը հնարավոր է նաև այն դեպքում, երբ միևնույն հասկացութիւններն արտահայտվում են լեզվական տարբեր հնարավորութիւններով: Հաճախ այդ երևույթն ավելի շատ իրացվում է նախադասութիւն կառուցելիս, երբ գրողը կամ խոսողը խուսափում է կրկնութիւնից: Նշանակում է այս բոլոր դեպքերում նա գործ ունի իմաստով նույն միավորների հետ, անկախ ներանից, թե ինչ կազմութիւն ունեն այդ միավորները: Հնարավոր է, որ դրանք պատկանեն միևնույն մակարդակին, հնարավոր է, որ դրանք լինեն միևնույն հասկացութեան՝ բառային և հապավումներով արտահայտված ձևեր, բայական համադրական և վերլուծական կազմութիւններ. (հաղբել—հաղթանակ տանել, պարտվել—պարտութիւն կրել, հարվածել—հարված հասցնել, ճնշել—ճնշում գործադրել), ինչպէս նաև նկարագրական և պատկերավոր արտահայտութիւններ՝ ճեղքատաշար—բեկնագույն էկրան, սպիտակ ածուխ—ջուր էներգիայի աղբյուր և այլն: Իհարկե, փոխակերպման ժամանակ այդ միավորները բացարձակ իմաստային նույնութիւն չեն ներկայացնում: Հաճախ ստացվում է լրացուցիչ ինֆորմացիա, որը կարելի է ներկայացնել սեռի և տեսակի պատկանելութեան տարբերութեամբ: Նման ոչ բոլոր միավորները կարող են հանդես գալ տերմինային արժեքով՝ կոնկրետ գիտութիւնների համակարգում: Բացի այդ, բառերի ոչ բոլոր փոխակերպումների դեպքում կարելի է խոսել համանշտեան մասին: Դրա համար անհրաժեշտ է տվյալ միավորների միևնույն թեմատիկ խմբին պատկանելը:

Որոշ դեպքերում իբրև էական հատկանիշ կարելի է համարել բառերի երկկողմանի, փոխադարձ փոխարինելիությունը՝ այս կամ այն սահմանում, ինչպես՝ յոթ օր—շաբաթ, դար—հարյուր տարի և այլն։ Ինչպես տեսնում ենք, համանիշ բառերի փոխադարձ փոխարինելիության եղանակները բավական բազմազան են և շատ դեպքերում ուղեկցվում են իմաստային որոշ տարրերի պակասով կամ հավելումով, մի հանգամանք, որ չի կարող նույնը լինել տերմինների դեպքում։ Ուրեմն, բառական համանիշները մի կողմից բնորոշվում են իրենց նշանակությունների ընդհանրությամբ, մյուս կողմից՝ իմաստային ընդհանրության հետ նաև ներքին տարբերություններով։ Այդ ոչ միայն հնարավորություն է տալիս համանիշների փոխադարձ փոխարինելիությանը խոսքում, այլև շատ դեպքերում բացահայտում է նրանց լրացուցիչ, երկրորդական առանձնահատկությունները։

Հայտնի է, որ շատ բառակապակցություններում և նախադասություններում բառերը հանդես են բերում իրենց իմաստների շեղոքացման հատկություններ, քանի որ նրանք առարկան ցույց են տալիս ոչ թե առանձին, այլ ավելի մեծ ընդգրկումով, ավելի խոշոր ամբողջությունների շարքում։ Այդ դեպքում համանիշների միջև եղած տարբերությունները նպաստում են տարբեր բառակապակցություններում նրանց օգտագործմանը։ Ահա թե ինչու բառերի կապակցելիությունը ոչ միշտ կարող է համանիշների սահմանազատման եղանակ լինել²⁰։ Այս առումով, խոսելով ֆրանսերեն լեզվի առանձնահատկությունների մասին, միաժամանակ նշվել է, որ հաճախ համանիշները կիրառվում են ոչ թե իբրև նկարագրվող օբյեկտի հատկանիշները ճշգրտող, այլ սոսկ իբրև տարբեր նշաններ, որոնք օգտագործվում են միևնույն օբյեկտը ցույց տալու նպատակով։ Դրանք նպաստում են համանիշների շեղոքացմանը, նրանց տարբերակիչ հատկանիշների նվազեցմանը։ Այս գործոնների ազդեցության հետևանքով ֆրանսերենում գաղափարագրական համանիշների (идеографические синонимы) միջև եղած տարբերությունները վերանում են, ընդ որում ավելի արագ, քան այլ լեզուներում²¹։

Համեմատության համար վերցնենք համընդհանուր գործածություն ունեցող բառերի և մի քանի տերմինային շարքերի միավորներ՝ նրսեղ—բազմել—տեղավորվել—վեր բնկնել—շնթոկել—տիտիկ աճել, խրմել—բմպել—կոկորդը քրջել—կոնծել—հարբել—գինովաճալ, ուտել—նաշակել—վայելել—աճուշ աճել—խժոնել—գլխավել—լափել և ժուժկալություն—ինքնագսպում, խեղաթյուրում—աղավաղում, անաշխատունակություն—անեռանդություն, չափավորում—դժգոխում, բռնխաւեղում—բռնխակծկում։ Դրանցից առաջիններն արտահայտում են իմաստային նուրբ տարբերություններ, ունեն կիրառության տարբեր

շրջանակներ, ահա թե ինչու կարող են հանդիպել տարբեր ոճի տեքստերում: Ավելին, դրանք օժտված են հուզաարտահայտչական տարբեր գունավորումներով: Այդ բառերից յուրաքանչյուրն արտահայտում է խոսողի որոշակի վերաբերմունքը, և հասկանալի է, որ մեկը մյուսի փոխարեն չի կարելի դործածել: Խոսողը կաշխատի ընտրել այն համանիշը, որն ավելի ճիշտ կարտահայտի իր միտքը տվյալ իրադրության և հանգամանքների մեջ: Կարճ ասած, առաջին շարքի բառերն ամենից առաջ տարբերվում են երկրորդներից իմաստային և ռեալական երանգներով: Ֆիզիոլոգիայի տերմինային համակարգում երկրորդ խմբի միավորները համապատասխանում են միևնույն հասկացությանը, իմաստային որոշակի տարբերություններ չեն արտահայտում և շատ դեպքերում ազատ կերպով փոխարինում են միմյանց: Թեև, ինչպես տեսանք, ընդհանուր գործածություն ունեցող բառերի և տերմինների համանշանային շարքերը նույնը լինել չեն կարող, բայց անկարելի է ժխտել տարբեր տերմինահամակարգերում առկա այնպիսի բազմաթիվ շարքերի առկայությունը, ինչպիսիք են՝ ակոսաճան—ակոսաբաշ, ներաբերում—սրսկում, ջղաձգություն—ցնցում, ողնուղեղ—ոսկրածուծ, երկթորոց—կրկնաթորոց, սաղմնափոխակերպում—ծլափոխակերպում, սաղմնաբույրավորում—ծլաբույրավորում, գիշերաճած—գիշերաշրջիկ և այլն, որոնք համապատասխան տերմինահամակարգերում դիտվում են որպես համանիշներ, և չի կարելի ասել, թե բոլոր դեպքերում հավասար գործածություն ունեն: Սակայն հարցն ավելի է բարդանում այն առումով, որ վերջին ժամանակներս ավելի հաճախ է խոսվում բառի իմաստների տարբերությունների մասին և առաջ քաշվում այն տեսակետը, որ համանշանությունը պետք է դիտել միայն բառի իմաստի տարբերությունների շրջանակներում, և որ նույնիմաստ համանիշներ լինել չեն կարող, որ դրանք պետք է համարել բառային կրկնակներ կամ նույնանիշներ: Եվ ընդհանրապես շատ մասնագետներ այս հարցը դիտում են որպես բանավեճի արժանի հարց:

Շատ մասնագետներ էլ խոսելով ընդհանրապես համանիշ բառերի մասին, այդ շարքում առանձնացնում են գաղափարագրական համանիշները (идеографические синонимы), դրա տակ հասկանալով միևնույն խոսքի մասին պատկանող այն տերմինները, որոնք արտահայտում են միևնույն հասկացությունը, բայց տարբերվում են իմաստային լրացուցիչ երանգներով²²: Իսկ ի՞նչ հասկանալ իմաստային լրացուցիչ երանգ արտահայտության տակ, չէ՞ որ տերմինաբանության մեջ այն կարող է նշանակել միանգամայն այլ հասկացություն: Այստեղ տեղին է հիշել հետևյալ միտքը: «...Երկու բառ անվանում են միևնույն իրը, բայց համապատասխանելով տարբեր հասկացությունների, դրանով իսկ անվան-

ման միջոցով բացահայտում են տվյալ իրի տարբեր առանձնահատկություններ»²³:

Որոշ լեզվաբաններ էլ ընդհանրապես նույնանշությունը դիտում են համանշության շրջանակներում, այսինքն՝ նույնանիշները համարում են համանիշների մի տարատեսակը, անվանելով դրանք բացարձակ համանիշներ: Ընդ որում, դրա տակ հասկանում են այն բոլոր բառերը, որոնք լեզվի զարգացման որևէ կտրվածքում նույնական են իմաստային-ոճական տեսակետից (հասկանալի է, որ ոճային տեսակետից չեզոք լինելը, որը բնորոշ է տերմիններին, նույնպես հատկանիշ է), տարբերվում են, իբրև կանոն, իրենց ծագումով, բայց լեզվի զարգացման որոշ շրջանում ունեն միանման գործածություն²⁴: Նման բնորոշումը հնարավորություն է տալիս բացարձակ համանիշները շփոթել ընդհանրապես համանիշ բառերի հետ, որոնց թեև նույնպես բնորոշ է իմաստային նույնությունը, բայց տարբերվում են իրենց գործածության շրջանակներով, այլ բառերի հետ կապակցվելու առանձնահատկություններով, հուզաբարտահայտչական զանազան երանգներով: Սակայն այս հարցի ավելի հետևողական քննությունը համոզում է, որ հաճախ միևնույն երևույթը կոչում են տարբեր տերմիններով կամ տարբեր երևույթներ կոչում են նույն տերմինով, ուստի չի զգացվում, թե ով ինչ է հասկանում տերմինային համանշություն անվան տակ: Կարճ ասած, զուգահեռ գործածություն ունեցող տերմինները մե՛րթ անվանում են համանիշներ, մե՛րթ բացարձակ համանիշներ, մե՛րթ նույնանիշներ, երբեմն էլ՝ անվանողական համանիշներ, տերմինային զույգեր, գաղափարագրական համանիշներ, տերմինային կրկնակներ և այլն:

Տերմինային այս խայտաբղետությունը հակասում է մեկ հասկացությանը, մեկ տերմին հիմնական սկզբունքին: Արդ, քանի որ վերոհիշյալ հարցում գոյություն ունեն տարբեր կարծիքներ և տարաձայնություններ, որոնցից ամենից կարևորը տերմինային համակարգում նույնանիշների կամ տերմինային կրկնակների առկայության հարցն է, ուստի անդրադառնանք դրան ավելի մանրամասն:

Ընդհանրապես բառագիտության կարևոր հարցերից մեկը նույնանիշների տեղի հարցն է: Ումանք դրանք դասում են համանիշների շարքը, ումանք առանձնացնում են: Համընդհանուր բառապաշարի համակարգում նույնանշությունն արտահայտվում է իր բնորոշ առանձնահատկությամբ: Նույնանիշները համանիշների շարքում առանձնանում են որպես ոճական տեսակետից չեզոք բառեր: Իհարկե, դրանցից շատերը ժամանակի ընթացքում լայն գործածության շնորհիվ կարող են ձեռք բերել համանիշներին բնորոշ հատկանիշներ: Այս առումով համընդհանուր լեզվի համանիշները և նույնանիշները դժվար է տարբերակել,

առանձնացնել իրարից: Տերմինահամակարգերում նույնանիշների (կամ կրկնակների) և համանիշների հակադրությունը միանգամայն այլ բնույթ է կրում: Երկու տարբեր նշանակիչների միջոցով արտահայտվող տերմինների հարաբերությունը ցույց տալու համար պետք է դրանց հարաբերությունը դիտել ամենից առաջ տերմինային միավորների շղթայում: Տերմինային համակարգում համանշտության ընդունման կամ մերժման համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել համանիշների տարատեսակներին, նրանց նմանություններին և ընդհանրություններին, հատկապես նրանց առաջացման համար անհրաժեշտ լեզվական պայմաններին:

Ժամանակակից լեզվաբանական գրականության մեջ լեզվի բառային կազմը դիտվում է որպես համակարգ, իսկ համանշային շարքերը՝ իբրև ենթահամակարգի տարրեր, որոնք սրևէ հարաբերությամբ հակադրվում են, և այդ հակադրության շնորհիվ բոլոր տարրերը պահպանվում են մեկ նշանակելի տարբերակման սահմաններում: Այդ իսկ պատճառով համանշային ենթահամակարգերը կառուցվածքի բաղկացուցիչ տարրեր են, որոնք կապվում են համակարգային հարաբերությունների հակադրությամբ, հետևապես, համանիշները ոչ այլ ինչ են, եթե ոչ կառուցվածքի տարրեր: Համանիշների այս հատկանիշը դիտվում է որպես հարացուցային կարգից բխող հատկանիշ: Շարակարգային մակարդակում կատարվում է համապատասխան ընտրություն, այսինքն՝ համանշային իմաստների այնպիսի առանձնացում, որը համապատասխանում է տվյալ խոսքային իրադրությանը: Իսկ տերմինային համանշության օբյեկտիվ առկայության փաստը բացատրվում է սոսկ նրա համընդհանուր բառապաշարի բաղկացուցիչ մաս կազմելու պատճառաբանվածությամբ, այսինքն՝ տերմինների համակարգային կազմությամբ:

Տերմինային համակարգերը առարկայաթեմատիկ խմբեր են, իրենց տարբեր ենթահամակարգերի դասդասմամբ, ինչպես նաև որևէ համակարգի ներքին աստիճանականությամբ՝ հաճախ շատ բազմազան: Նրանք տարբերակվում են որոշակի բովանդակությամբ, յուրացվում են լեզվական հանրության սոսկ մի մասի կողմից: Նման բովանդակությունների կառուցվածքային տարրերը կազմում են գիտության առարկայական ոլորտը, որն իր մեջ ներառում է ժամանակակից գիտության բարձր վերացարկումները, ինչպես նաև առարկաների միջև եղած բոլոր տիպի հարաբերությունները:

Հայտնի է, որ միևնույն հասկացությանը տրվում են տարբեր անվանումներ, և այդ երևույթը գոյություն ունի գրեթե բոլոր լեզուներում՝

բիշ թե շատ, նայած, թե որքան են մշակված և նորմավորված առան-
ձին տերմինահամակարգերը այդ լեզուներում: Տերմինային այդ խայ-
տաբղետության առկայությունը տարբեր լեզուներում առաջին հերթին
արտահայտվում է նրանով, որ զուգահեռ գործածություն ունեցող տեր-
մինները քանակապես չեն համընկնում: Օրինակ, հաճախ մեկ հասկա-
ցության տրվող հայերենի մի քանի տերմիններին համապատասխա-
նում է ռուսերեն մեկ տերմին, ինչպես՝ *доверенность*—հավատարմա-
գիր, *пылесос*—փռչեծուծ—փռչեծծիչ—փռչեհան—փռչե-
կույ—փռչեֆաղ, *дозировка*—շափավորում, *гидротранспорт*—
իմֆանսիպեդոս—իմֆանսիոնշնում, *гипнотерапия*—ֆնարոսոսթյուն —
հիպնոսարոսթյուն, *гелиогравюра*—հելիոփոսագրոսթյուն —լուսա-
փոսագրոսթյուն և այլն: Եվ հակառակը, ռուսերենի զուգահեռ տերմին-
ներին համապատասխանում է հայերեն մեկ տերմին, ինչպես՝ *линг-
вистика*, *языкознание*—լեզվաբանություն: Կամ ռուսերենի մեկ տեր-
մինին համապատասխանում են անգլերեն մի քանի տերմիններ, օրի-
նակ²⁵.

defoamer, an tifoaming agent—антипенный препарат
diffuser, diffusion cell, diffusion vessel—диффузор
flume, hydraulic conveyer—гидротранспортер
crystal sugar, white sugar, granulated sugar—сахар—песок
non-sugar, foreign body—не сахар.

ԶՈՒԳԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Համանիշ տերմինները առանձնացնելու համար անհրաժեշտ է ա-
ռաջին հերթին խմբավորել զուգահեռ գործածություն ունեցող տերմին-
ները, դասակարգել դրանք, հաշվի առնելով նրանց ամենաէական հատ-
կանիշները, իմաստային նույնության սահմաններում նրանց ցուցա-
բերած ընդհանրություններն ու տարբերությունները:

Հայերենի տարբեր գիտությունների տերմինահամակարգերում
հանդիպող զուգահեռ գործածություն ունեցող տերմինները կարելի է
ստորաբաժանել հետևյալ կերպ: Մոտավորապես նման դասակարգում է
առաջարկվել ռուսերենի տերմինների համար: Ասում ենք մոտավորա-
պես, որովհետև այդ երևույթի հետ կապված շատ իրողություններ
բխում են հայերեն լեզվի յուրահատկություններից, նրա սոցիալական
և պատմական կյանքի հետ առնչվող որոշ հարցերից:

Կրկնակ ձևերը, տարբերակները և համանիշները հարանման հասկացություններ են, որոնց միջև հաճախ շատ դժվար է լինում կտրուկ սահման դնելը: Վերջին ժամանակներս լեզվաբանական գրականության մեջ մեծ ուշադրություն է դարձվում լեզվական այս ձևերի տարբերությանը, և տարբերակայնությունը դիտվում է որպես բառաբանականական երևույթ²⁶:

Գոյություն ունի տարբերակների լայն և նեղ ըմբռնում. տարբերակների լայն ըմբռնման կողմնակիցները բացի կառուցվածքային տարբերակայնությունից (структурная вариантность, ինչպես՝ спазм—спазма, жираф—жирафа, индивид—индивидуум) առանձնացնում են նաև ժամանակային տարբերակայնությունը (самолет—аэроплан), ինչպես նաև ոճական կամ գնահատու (оценочный) տարբերակայնությունը (смертельный—летательный)²⁷: Բերվող օրինակներից երևում է, որ շատ բառեր թեև մինչև այժմ ավանդաբար դասվել են համանիշների շարքը (հատկապես ժամանակային կամ ոճական տարբերակները), բայց այժմ դրանք կասկած են հարուցում:

Տարբերակայնության նեղ ըմբռնման կողմնակիցները խիստ առանձնացնում են տարբերակայնությունը ինչպես բովանդակության, այնպես էլ՝ արտահայտության պլաններում: Արտահայտության պլանի տարբերակայնության դեպքում նկատի է առնվում լեզվական միավորի իմաստի անփոփոխ լինելը, երբ ձևական փոփոխության է ենթարկվում նրա արտաքին կողմը: Կառուցվածքային տարբերակը բառի հիմքն է կամ հիմքի մի մասը, որը հանդես է գալիս հնչյունական, ձևաբանական, հնչյունաձևաբանական օրինաչափ փոփոխությունների առկայությամբ: Իսկ բովանդակության պլանի տարբերակայնության համար պարտադիր է համարվում միավորի կառուցվածքային անփոփոխ լինելը՝ իմաստների տարբերակայնության և իմաստային ինվարիանտի զգալի պահպանման դեպքում: Այլ կերպ ասած, բառական համանիշների, այդ թվում նաև շատ տերմինների հարցը սերտորեն կապվում է «տարբերակ—ոչ տարբերակ» հասկացությունների հետ: Դրանց որոշումը կարևոր է ոչ միայն ընդհանուր լեզվաբանության, այլև իմաստաբանության, տերմինաբանության և բառագիտության համար:

Հայտնի է, որ հնչյունաբանության մեջ անտարբերակ միավորների առանձնացման սկզբունքները ձևակերպվել են Ն. Ս. Տրուբեցկոյի կողմից²⁸: Վերջինիս տեսության համաձայն անտարբերակները ներկայացնում են իբրև ինչ-որ վերացություն և տարբերակիչ հատկանիշների ամբողջություն: Տրուբեցկոյի այս տեսությունը իր լայն կիրառությունն է գտել տարբերակայնության ուսումնասիրության և մը-

շակման բնագավառում՝ նաև լեզվի տարբեր մակարդակներում: Բառագիտության, բնականաբար, նաև տերմինաբանության մեջ, տարբերակայնության խնդիրը կարելի է դիտել երկու սկզբունքով. ա) բառի նույնության և առանձնակիության (отдельность) հետ կապված, բ) իմաստային մոտիկություն ունեցող ինքնուրույն միավորների տարբերակային գործածության տեսանկյունից:

Բառը լեզվի երկկողմանի միավորներից է. այն կարող է փոփոխվել տարբեր ձևերով. նշանակելի փոփոխությամբ՝ բառիմաստային տարբերակներ, նշանակելի փոփոխությամբ՝ հնչյունական, հնչյունաձևաբանական տարբերակներ: Կարելի է ավելացնել նաև, որ բառի տարբեր շրջանակների գործածության փոփոխությունները ևս նպաստում են ոճական, բարբառային, սոցիալական տարբերակների առաջացմանը: Միևնույն բառական միավորի տարբերակների առանձնացման հարցում կարևոր է անտարբերակների տարբերակիչ հատկանիշների որոշումը: Թեև լեզվաբանության մեջ առ այսօր վերջնականապես հստակ վճռված չէ, թե որն է բոլոր բառիմաստային տարբերակների հիմնական անտարբերակը և ինչ տարբերակիչ հատկանիշներ պետք է հաշվի առնել «անտարբերակ—տարբերակ» հասկացությունների երկատման ժամանակ: Հայտնի է, որ որոշ լեզվաբաններ հաշվի են առնում բառի ոճական, հուզաարտահայտչական երանգները, համարելով դրանք «իմաստի նրբերանգներ», ուրիշներն անտեսում են բառի այդ հատկանիշները: Այս առումով տերմինների քննությունը ավելի հեշտ է, քանի որ այդ հատկանիշները չեն տարածվում տերմինների վրա և վերջիններս, ինչպես ասում են, ոճից դուրս են: Բայց երբեմն տարբերակ ասելով հասկանում են ավելին: Ինչպես նշեցինք, շատերը տարբերակայնությունը հասկանում են լայն պլանով՝ լեզվական միավորի փոփոխություն՝ նույնական իմաստի պահպանումով, այսինքն՝ արտահայտության պլանի փոփոխություն, առանց խախտելու նրա բովանդակային կողմը: Այս տեսությունից բխում է, որ բառային տարբերակայնությունը վերաբերում է սոսկ նրա ձևական կողմին, նրա հնչյունական ձևին, և դրանց միջև եղած իմաստային ամեն տեսակի հարաբերությունները պետք է քննել միայն համանշտության տեսության հետադոտության ժամանակ²⁹:

Այսպիսով, բառի հնչյունական և ձևաբանական տարբերակների մասին կարելի է ասել հետևյալը. լեզուն ընկալվում և օգտագործվում է այն կրողների կողմից իբրև միասնական համակարգ, որն ունի այնպիսի նորմաներ, որոնք ընդհանուր են բոլորի համար: Միևնույն լեզուն մի կողմից իր հաղորդակցական գործառության, մյուս կողմից՝ սովորույթի շնորհիվ հիմնականում բավարարում է հաղորդակցվող կոլեկտի-

վի պահանջները և ճաշակը: Պատահում են նաև լեզվական գործոնների ոչ միատեսակ ըմբռնում, ոչ միանման վերաբերմունք լեզվի հանդեպ, որոնց շնորհիվ ի հայտ են գալիս տարբեր տարիքի, հակումների, կերթության, մասնագիտության տեր անձանց գեղագիտական ճաշակների ազդեցությունները, որոնք արտահայտվում են բառի հնչյունական տարբերակների առաջացումով: Մեկ մարդու խոսքի մեջ օգտագործված սխալները կամ հնչյունական տարբերակները դեռևս լեզվական երևույթ չեն. միայն մարդկանց մեծ խմբերի կողմից տարածում գտած հնչյունական տարբերակների կիրառությունը կարող է իբրև այդպիսին դիտվել, մասնավոր, երբ դրանք արձանագրվում են գրավոր խոսքում: Հասկանալի է, սակայն, որ այս դրույթը ևս չպետք է տարածել տերմինների վրա, քանի որ այդ պատճառաբանությունը տերմինի համար չի արդարացվում և պետք է աշխատել պահպանել մեկ հասկացության համար մեկ տերմին սկզբունքը: Չնայած դրան, տերմինների մեջ ևս հանդիպում են մի քանի տիպի տարբերակներ:

Առաջնորդվելով տարբերակայնության նեղ ըմբռնմամբ, զուգահեռ գործածություն ունեցող տերմինների շարքում կարելի է առանձնացնել մի քանի տիպի տարբերակներ, որոնց համար ընդհանուր է տերմինի բովանդակության անփոփոխ լինելը այն դեպքում, երբ ձևական փոփոխության է ենթարկվում նրա արտաքին կողմը:

ա) Հոդակապով և անհոդակապ տարբերակներ.

ծայնադարձ—ծայնդարձ, երկխոսություն—երկխոսություն, տնտեսավարություն — տնտեսվարություն, հազարթերթիկ — հազարաթերթիկ (կղմխս):

բ) Հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակներ.

համաեիշություն—համանշություն, հակաեիշություն—հականշություն, անբջիջություն—անբջջություն:

գ) Ձևաբանական տարբերակներ, որոնք կարելի է ստորաբաժանել մի քանի ենթախմբերի, հատկապես.

1. Միայն մեկ ածանցի հավելումով տարբերվող ձևեր, որտեղ այդ ածանցն ունի սոսկ ձևական նշանակություն, ընդ որում այն կարող է լինել ինչպես բառամիջում. գրաֆնություն—գրաֆնություն, քելֆավոր—քելավոր, սնել—սնուցել, այնպես էլ բառավերջում. դյուցագներգ—դյուցագներգություն, մատենաշար—մատենաշարք, ասացված—ասացվածք, չմշկասահ—չմշկասահք, եղերգ—եղերգություն, գազապաստան—շագապաստաբան, գրախոս—գրախոսող, արար—արարված և այլն:

2. Մեկ ընդհանուր արմատներով և տարբեր իմաստներ արտահայտող վերջածանցներով բաղադրված ձևեր, որոնք հավասարապես կիրառվում են նույն տերմինահամակարգում, ինչպես՝ գրախոսական—

գրախոսություն, բառերախոսական—բառերախոսություն, քափոն—քափուկ, մնացորդ—մնացուկ, մարմնակազմվածք—մարմնակազմություն, առնմանություն—առնմանում և այլն:

3. Մեկ ընդհանուր արմատներով և համանշախին հարաբերություններ արտահայտող նախածանցներով բաղադրված ձևեր, որոնք գրեթե հավասար կիրառություն ունեն, ինչպես՝ այլախոսություն—տարախոսություն, այլակերություն—տարակերություն, այլասեռ—տարասեռ օրգանիզմներ, այլասերում—տարասերում, ալակենտրոնացում—տարակենտրոնացում (ռազմ.), հականեխություն—ալանեխություն և այլն:

Տերմինի ձևաբանական տարբերակների հետ շփոթել է շփոթել այն դեպքերը, երբ միևնույն միավորը բաղադրվում է տարբեր ածանցներով: Այստեղ էականը տվյալ ածանցների միջոցով արտահայտվող իմաստային կողմը հաշվի առնելն է: Այսպես, հայտնի է, որ հայերենում շատ են -ում և -ություն ածանցներով կազմված համարմատ տերմինները: Այդ ածանցներով բաղադրված ձևերը շատ հաճախ արտահայտում են իմաստային տարբերություններ, հետևապես ոչ ամեն դեպքում կարելի է այդ ձևերը կիրառել միմյանց փոխարեն, բանի որ ածանցներից առաջինն արտահայտում է վերացականության իմաստ, իսկ երկրորդը՝ գործողության անվանումն է: Այդ ածանցներով բաղադրված ձևերը բացառիկ դեպքերում կարող են գործածվել զուգահեռաբար, օրինակ՝ դասավորություն—դասավորում, կարգավորություն—կարգավորում, տեղափոխություն—տեղափոխում, կիրառություն—կիրառում զուգահեռ տերմինները, ինչպես գրում է Վ. Սաղաթելյանը³⁰, հավասարապես կիրառվում են ժամանակակից հայերենի մաթեմատիկական տերմինաբանության մեջ: Այս դեպքում, ինչ խոսք, մենք գործ ունենք տերմինի ձևաբանական տարբերակների հետ:

2. Նույնանիշներ կամ բացարձակ համանիշներ

Նույնանիշ կամ բացարձակ համանիշ կարելի է անվանել զուգահեռ գործածություն ունեցող բոլոր այն տերմինները, որոնք իմաստային և կիրառական առումով որոշակի տարբերություններ չեն դրսևորում: Այս տերմինների համար էական է այն, որ բովանդակության պլանում նույնական են, արտահայտության պլանում ցուցաբերում են նշանակալի տարբերություններ: Նման տերմինները կարելի է բաժանել 2 խմբի.

ա) ծագումնաբանորեն ընդհանրություն չունեցող և

բ) ծագումնաբանորեն ընդհանրություն ունեցող տերմիններ:

Առաջինները բանակապես անհամեմատ շատ են և ունեն իրենց ենթա-
խմբերը, երկրորդները սահմանափակ են և գրեթե միատարր:

ա) Մագումնաբանական տեսակետից ընդհանրություններ չունեցող
տերմիներ են, օրինակ՝ լծորդություն—խոնարհում, լծորդել—խոնար-
հել, խմբագրական—առաջնորդող, ձայնարկություն—միջարկություն,
գանանխառն—աքոռավայր (պտմ.), ներմրնում—կռանում (ֆիզ. ин-
тунция), ծագում—գոյացում (ֆիզ. генез), մանկայնություն—տհասու-
թյուն (ֆիզ. инфантилизм), տարասեռություն—այլատեսակություն
(гетерогенность), ամբաստանյալ—մեղադրյալ, գուրաներգ—հորովել
և այլն: Այսպիսի տերմիների մեծ մասի առաջացումը չի կապվում
գիտությունների բուն զարգացման, նոր գաղափարների հասկացու-
թյունների անվանման հետ: Տարբեր մասնագետներ օտար տերմինի
գիմաց իրարից անկախ կիրառել են լեզվում առկա մի շարք ձևեր,
որոնք ժամանակի ընթացքում տերմինի արժեք են ստացել, դրանցից
են, օրինակ՝ դող—սարսուռ, дрожь (ֆիզ.), ժուժկություն—իմեհա-
զսպում, воздержание (ֆիզ.), խանգարում—խախտում, нарушение
(ֆիզ.), չղածգություն—ցնցում, конвульсия (ֆիզ.), ննշում—սեղմում,
компрессия (ֆիզ.), մզվածք—քամվածք экстракт (անասնաբուծ.),
սպանդ—մորթ, убой (անասնաբուծ.), անամաս—հավելամաս—ելուստ,
отросток, ոսկրածուծ—ողնուղեղ, костный мозг (անասնաբուծ.), փա-
թարում—կծկում пометка (ավտո.), պայծառություն—փայլունություն,
яркость (պոլիգրաֆ.), կաշնություն—մածուցիկություն, липкость
(պոլիգրաֆ.), ապաքաց—մակակետ, апостроф (պոլիգրաֆ.), սըր-
բում—մաքում, протирка (ավտո.), ֆանդում—կազմատում, разборка
(ավտո.), բեռնարափում—դատարկում, разгрузка (ավտո.):

բ) Մագումնաբանական ընդհանրություններ ունեցող տերմինները
հիմնականում կաղմություններ բարդ կամ ածանցավոր են, որոնց կազ-
մում որևէ բաղադրիչ (ածանց կամ արմատ) ընդհանուր է: Դրանք կա-
րելի է բաժանել մի քանի ենթախմբերի.

1. տարանիսմ տերմիններ³¹. այսպիսի կաղմություն ունեցող տեր-
մինների առաջին բաղադրիչները համանշալին հարաբերություններ ար-
տահայտող միավորներ են, ինչպես՝ ցայգերգ—գիշերերգ, արեակենեո-
րոն—արեգակենակենեորոն, հոլովառություն—խնդրառություն, արբանյա-
կանավ—տիեզերանավ, երկթորոց—կրկնաթորոց, միաձվածին—
նույնաձվածին, հավատարմագիր—լիազորագիր, սաղմնաթաղանթ—
պտղաթաղանթ, ցանցառարդություն—նոսրարդություն, ներդիր—մի-
ջադիր, պտղաշափար—մրգաշափար, գանգուղեղ—գլխուղեղ, համանուն—
նույնանուն, նարպաղիմացկունություն—յուղաղիմացկունություն, օդան-
ցիկություն—օդաթափանցիկություն (պոլիգր.), գիշերավախություն—

մբնավախություն (բժշկ.), սաղմնափոխակերպում—ծլափոխակերպում, սաղմնաբուշտ—ծլաբուշտ:

Պատահում են տերմիններ, որոնք բաղադրված են նույն կամ համանիշ ածանցներով և տարբեր արմատներով. ինչպես՝ արտահանում—արտամղում (ֆիզ. ИЗГНАНИЕ), տարածություն—տարակազմություն (ֆիզ. гетероморфизм), անգունություն—աներանգություն (պոլիգրաֆ.) և այլն:

2. Համանիմ տերմիններ. այսպիսի կազմություն ունեցող տերմինների առաջին բաղադրիչներն ընդհանուր են, երկրորդներն արտահայտում են համանշախին հարաբերություններ. օրինակ՝ թունագրկում—թունագերծում, հյուսվածքածնություն—հյուսվածքգոյացում, ձվաթաղանթ—ձվապատյան, երկսմբականներ—երկկղզականներ, սերմնագոյացում—սերմնառաջացում, կաթնանոս—կաթնածորում, ցավամոխ—ցավամեղմիչ, այլասերում—այլափոխում, բրոնխասեղմում—բրոնխակծկում, խխտագերծում—ախտահանում, վարակագերծում—վարակահանում, բեղմնակետ—բեղմնակայան, ակնաբանություն—ակնագիտություն, այգեթաղ—այգեծածկում, դիմանկար—դիմապատկեր, դրամաշրջանառություն—դրամապտույտ, արյունաստեղծում—արյունագոյացում, բեռնաշրջանառություն—բեռնապտույտ և այլն:

Համահիմք տերմինների շարքին կարելի է դասել նաև այն միավորները, որոնք հակադրվում են համանշախին իմաստ արտահայտող մեկ ածանցով կամ արմատով, օրինակ՝ անբջիջություն—բջջագրկություն, միջադիր—միջանկյալ (ֆիզ. ВСТАВОЧНЫЙ), ծննդատուն—ծննդահան, գազապահեստ—գազապահոց, ետան—ապան և այլն: Համահիմք և տարահիմք նույնանիշներ կարելի է համարել նաև երկու բաղադրիչներից կազմված այն տերմինային կապակցությունները, որոնց կազմում բաղադրիչներից մեկը ընդհանուր է. դրանք հիմնականում որոշիչ—որոշյալի, հատկացուցիչ—հատկացյալի հարաբերություններ ունեցող կապակցություններ են, որոնք իրենց հերթին կարող են բաժանվել համահիմք կապակցությունների՝ ցավամոխ դեղորայք—ցավամեղմիչ դեղորայք, դրդելի հյուսվածքներ—դրդունակ հյուսվածքներ, ներքին մակերես—ներսային մակերես (внутренняя поверхность), արտահանող ծորան—արտաբերող ծորան և տարահիմք կապակցությունների՝ նկարագարդումների էջկապում—պատկերագարդումների էջկապում, համեմատական աստիճան, բաղդատական աստիճան, սաղմնային պլազմա—առաջնային պլազմա, հաշվարկման քաշ—հաշվարկման կշիռ, մեքենայական քարգմանություն—ավտոմատ քարգմանություն:

Նման կազմություններում մեծ մասամբ ընդհանուր են որոշյալներն ու հատկացյալները, տարբեր՝ որոշիչներն ու հատկացուցիչները:

Պատահում են ընդհանուր որոշիչով կապակցություններ ևս, ինչպես՝ լուսային բռնկում—լուսային առկայծում, գազային ֆննություն—գազային վերլուծություն, ավտոմատ ղեկավարում—ավտոմատ կառավարում, ավտոմատ ղեկավարման համակարգ—ավտոմատ կառավարման համակարգ:

3. Հավելումով տարբերվող նույնանիշ տերմիններ. սրանք տերմինային այն շարքերն են, որոնց անդամներից մեկը թեև որևէ բաղադրիչով ավելի է, բայց վերջինս իմաստային ոչ մի երանգ չի տալիս բարդությանը, ինչպես՝ դարձում—շրջադարձում, ըմբիշ—ըմբշամարտիկ, ասացող—գրուցասած, միտում—գաղափարամիտում, քմրամուլ—քմրադեղամուլ, քմրամուլություն—քմրադեղամուլություն: Այս զուգաձևերից գերադասելի են առաջինները՝ իբրև կարճ ձևեր:

3. Համարժեք տերմիններ կամ կեղծ համանիշներ

Այսպես կարելի է անվանել զուգահեռ գործածություն ունեցող այն տերմինները, որոնցից մեկը բուն ազգային ձև է, մյուսը փոխառված է օտար լեզուներից՝ գերազանցապես ուսաց լեզվի միջնորդությամբ, նման տերմինները մեծ քանակ են կազմում տարբեր գիտությունների տերմինահամակարգերում. անատոմիա—կազմախոսություն, կոնտինգենտ—հավաքակազմ, նատուրալիզմ—բնապաշտություն, արստրալգիոնիզմ—վերացապաշտություն, անաֆիլաֆսիա—գերզգոնություն և այլն:

Վերոհիշյալ ձևերի վերաբերյալ լեզվաբանական գրականության մեջ տարբեր կարծիքներ են արտահայտվել: Որոշ լեզվաբաններ. թեև արդարացիորեն գտնում են, որ մեկ հասկացության համար լեզվում առկա սեփական և փոխառյալ ձևերի միջև գոյություն չունեն համանշալին հարաբերություններ, բայց նրանք նման ձևերը դիտում են որպես բառային կրկնակներ³²: Բուն ազգային և փոխառյալ ձևերը տերմինային համանիշներ են դիտվել հայ լեզվաբանական գրականության մեջ. «Հոմանիշների ըստ ընդունված սահմանման, մեկ հասկացության համար լեզվում առկա բառերը կամ տերմինները (անկախ իրենց ծագումից) (ընդգծումը մերն է—Ռ. Շ.) պետք է հոմանիշներ համարել: Այդ կարգի բառերի տերմին լինելու հանգամանքը ոչ մի կերպ չի կարող խոչընդոտել նրանց՝ իրար նկատմամբ հոմանշային հարաբերությունների մեջ մտնելու և հոմանիշների շարքեր կազմելու: Այդ տերմինները, սակայն, իրենց յուրահատուկ հատկանիշներով տարբերվելով լեզվի սովորական բառերից, հիմնականում հանդես գալով որպես հասկացության անվանում, ինչպես նաև մեծ մասամբ իրենց մենիմաստությամբ և ռճական կիրառության ու հուղաարտահայտչական գունավորման բացակայու-

Թյամբ էլ կազմում են հոմանիշների մի առանձին խումբ, այսպես կոչված նույնիմաստ բառերի խումբը, այսինքն՝ հայերենում դրանք հանդիսանում են հոմանիշների մի տարատեսակը՝ նույնանիշները³³։ Հեղինակի հարցադրումները հիմնականում ճիշտ լինելով հանդերձ, մի փոքր առարկելի են. կարծում ենք, որ վերոհիշյալ միավորները համանիշ անվանելուն ոչ թե խոչընդոտում է նրանց տերմին կամ ընդհանուր գործածական բառ լինելու հանգամանքը, այլ նրանց ծագումնաբանական հատկանիշը, միավորներից մեկի փոխառյալ լինելը, որովհետև բոլոր դեպքերում զգացվում է այդ միավորների ոչ հարազատ լինելը։ Դրանք չի կարելի դիտել որպես բուն կամ սովորական համանիշներ։

Տերմինի փոխառությունը հայերենում կատարվում է այն դեպքում, երբ մեր լեզվի բառակազմական օրենքները հնարավորություն չեն տալիս թարգմանելու կամ պատճենելու տվյալ տերմինը, երբ թարգմանելու ժամանակ աղավաղվում է իմաստը կամ նորաստեղծ տերմինը դյուրահնչյուն չէ։ Փոխառյալ տերմինները թեև սովորաբար ենթարկվում են հայերենի հնչյունական և բառակազմական օրինաչափություններին, բայց հաճախ հայերենի տերմինաբանության մեջ նրանց առկայությունը ժամանակավոր բնույթ է կրում և գոյատևում է այնքան ժամանակ, մինչև որ վերջնականապես հաղթում է ազգային ձևը։

Հիմք ընդունելով համարժեք տերմինների գործածության տարածվածությունը, դրանք կարելի է ստորաբաժանել մի շարք խմբերի.

1. Ազգային համարժեքը հաղթել է և լայն տարածում ունի, բայց փոխառյալ ձևը դեռևս մասամբ շարունակում է կիրառվել՝ հանդես գալով զուգահեռ գործածությամբ. ինչպես՝ համադրել—սինթեզել, գեղձնուցֆ—ադենոմա, նյարդառանցֆ—աֆսոն, հիմնանմաններ—ալկալոիդներ, այլամարմեկիներ—ալոսոմներ, ջրաթաղանթ—ամֆիոն, անօդակեցություն—անաերոբիոզ, վերընթացություն—անկրոտիա, քանձարյունություն—աննիդեմիա, անթթվածություն—անոֆսիա, այրաբանություն—անդրոլոգիա, տարազուգավորում—անիզոմոզիա, տարաբեկություն—անիզոտրոպիա, անջատականություն—սեպարատիզմ, այլաբանություն—ալեգորիա, կիսորդ—բիսեկտրիսա, մեկուսաբան—բոֆս, եղբերեղբայրություն—էլեգիա, փոխարկիչ—տրանսպորտյոր (ավտո), երկարամազություն—անագորիզմ, բշտիկ—ֆոլիկուլ, մկանաթուլություն—միասթենիա, նույնաբանություն—տավտոլոգիա, տարածֆ—արեալ և այլն։

2. Փոխառյալ տերմինը լայն կիրառություն է ստացել տվյալ տերմինային համակարգում, բայց նրա կողքին արդեն ստեղծվել է ազգային համարժեքը, որը հանդես է գալիս սահմանափակ կիրառությամբ և դեռևս

չի ամրացվել և կայունացվել լեզվում, ինչպես. ագրոկուլտուրա—հողա-
մշակույթ, անտիքիոզ—հակակյանք, ինտերվալ—միջակայք, հեկտո-
գրաֆ—արեագիր, պրոցեդուրա—ընթացակարգ, ֆունկցիա—գործառու-
թյուն, կապիտուլյացիա—անձնատրություն, լիբերալիզմ—ազատամտու-
թյուն, արքիզմ—անաստվածություն, բալանս—հաշվեկշիռ, աբսոլյու-
տիզմ—բացարձակապետություն, տրանզիտ—տարանց, գիկոլիզ—շա-
հարաֆայալում, զիգոտա—նախասաղմ:

3. Միևնույն հասկացությունը անվանող փոխառյալ և ազգային ձե-
վերը հավասարապես կիրառվում են ինչպես գիտական, այնպես էլ
գիտահանրամատչելի գրականության մեջ՝ առանց նախապատվություն
տալու մեկին կամ մյուսին. դուետ—զուգբեզ, նովել—նորավեպ, ֆոր-
մալիզմ—ձևապաշտություն, ամպուլա—սովակիկ (ղղգ-), սպորտսմեն—
մարզիկ, ստադիոն—մարզադաշտ, իդիլիա—հովվերգություն, ասամբ-
լեա—համաժողով, կվարտետ—ֆառյակ և այլն:

Տերմին-համարժեքների մեջ մեծ քանակ են կազմում տարբեր տեր-
մինային համակարգերի պատկանող պատճենումները: Հստ կազմու-
թյան հիմնական կաղապարների դրանք կարելի է ստորաբաժանել մի-
քանի խմբերի.

ա) երբ հայերենի բառակազմական հնարավորություններով օտար
տերմինն ամբողջովին պատճենվում է, և այդ երկու ձևերն էլ (օտարը
և պատճենվածը) շարունակում են զուգահեռաբար գործածվել միևնույն
տերմինային համակարգում, ինչպես՝ նեոկորտեքս—նորկեղև, հետե-
րալլազիա—տարագոյացում, դենսիտոմետր—խտաչափ, միկրոմանո-
մետր—մանրանշաչափ, ակտոմոտոգեն—ինֆեափոփոխածին, հեմո-
տոֆսիններ—արյունաթույներ, հեմոֆրոմոգեններ—արյունագունածին-
ներ, հեմոցիտոմետր—արյունաբջջաչափ, հեմոցիտոմետրիա—արյունա-
բջջաչափություն, հեմոդինամիկա—արյունաշարժում, հեմոդիալիզ—
արյունատարալուծում, դիսախարիդներ—եղջաբաճիկներ, հեմագլյոտին-
ներ—արյունազանգվածողներ, հելիոտաֆիա—արևածգտում, հեմա-
գլյոտինացում—արյունազանգվածում, նեֆելոմետր—պղտորաչափ,
միկրոնալիզ—մանրաֆենոթյուն, բիոդինամիկա—կենսաշարժում, բա-
րոգրամա—ննչագիր, ապոլիտիզմ—ապաֆաղաֆականություն, տրավմա-
տոլոգիա—վնասվածքաբանություն, տրագիկովիզմ—ողբերգականացե-
րություն և այլն:

Պատճենումների այս ենթախմբին պետք է դասել նաև այն բոլոր
տերմին-համարժեքները, որոնց օտար և ազգային ձևերը բառակազ-
մական տեսակետից տարբերություններ են հանդես բերում:

բ) Երբ օտար տերմինը բարդ բառ է, պատճենվում է նրա միայն
մի բաղադրիչը (մասնակի պատճենում), ընդ որում նպատակով կարող

է ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ բաղադրիչը, և այդ կիսապատ-
ճենված ձևը զուգահեռաբար գործածվում է օտար, հաճախ նաև հայե-
րենի քերականական առանձնահատկություններին ենթարկված ձևի հետ,
ինչպես՝ գլիկոգենաֆայֆայում—գլիկոգենոլիզ, գամմագրություն—գամ-
մագրաֆիա, ագլյուտինածիններ—ագլյուտինոգեններ, երկպետիդներ—
դիպետիդներ, հյուսվածքաճեղքումներ—հիստոճեղքումներ, կորիզապրո-
տեիդներ—նուկլեարոտեիդներ, լորձապրոտեիդներ—մուկոպրոտեիդներ,
բազմավիտամինոզ—պոլիվիտամինոզ, կենսաֆիմիա—բիոֆիմիա, կեն-
սասինթեզ—բիոսինթեզ, հակաբիոտիկներ—անտիբիոտիկներ, էլեկտրա-
մեխանագիտություն—էլեկտրամեխանիկա, կենսակատալիզատոր—բիո-
կատալիզատոր, կենսամեխանիզմ—բիոմեխանիզմ, կենսաբջիշ—բիո-
պլաստ, կենսապոլիմերներ—բիոպոլիմերներ, կենսասինթեզ—բիոսին-
թեզ և այլն: Այս դեպքում ևս, ինչպես ցույց են տալիս բերված օրի-
նակներից շատերը, պատճենվում են նաև օտար տերմինի քերականա-
կան ձևերը (հոգնակերտ մասնիկներ):

զ) Երբ օտար տերմինի լրիվ պատճենված ազգային ձևին զուգա-
հեռ գործածվում է նաև նույն օտար տերմինի կիսապատճենված հա-
մարժեքը, ինչպես. ինֆաներշնչում—ինֆանհիպնոս, автогипноз, ֆեա-
րուծություն—հիպնոսաբուծություն, гипнотерапия, հականեշիչներ—հա-
կադեպրեսանտներ, антидепрессанты, մանրէալուծում—բակտերիալու-
ծում, бактериолиз, ֆեաբանություն—հիպնոսաբանություն, гипноло-
гия, լուսափորագրություն—հելիոփորագրություն, гелиография, սե-
ռաբջջածնություն—գամետածնություն, гаметогенез, մանրէալուծիչ-
ներ—բակտերիալուծիչներ, бактериолизины, լուսավիմագրություն—ֆո-
տովիմագրություն, фотолиграфия:

Ինչպես այս, այնպես էլ այլ ձևերից կազմված շատ ածականներ,
որոնք սովորաբար կիրառվում են որևէ գոյականի համակցությամբ,
հիմնականում պահպանում են պատճենման այս եղանակը, ինչպես.
հակալուծաճեղքային—հակապարալիզային, антипаралитический, ենթա-
ձայնային—ինֆրաձայնային, инфразвуковой, ենթակարմիր—ինֆրա-
կարմիր, инфракрасный: Այս կաղապարով են նաև կազմվում լրիվ
կամ կիսապատճենված այն բարդ տերմինները, որոնցից մեկը համա-
դրական, մյուսը՝ վերլուծական ձևեր են, ինչպես. լուսանկարչական ժա-
պավեն—ֆոտոժապավեն, փոխմակածություն—փոխադարձ ինդուկցիա:
Շատ դեպքերում օտար տերմինի համադրյալ ձևերը պատճենվում են
ազգային լեզվի վերլուծական ձևերով, ինչպես՝ հեմատոքլաստ—արյու-
նածին բջիջ, ակտոգրաֆ—գործողության գրանցիչ, ակտոգրաֆիա—գոր-
ծողության գրանցում, ագրանուլոցիտ (агранулоцит)—ոչ հատիկավոր
բջիջ և այլն:

Պատճենումների և կիսապատճենումների բաղադրանությունը, նը-
րանց ոչ միօրինակությունը, մեկ հասկացություն համար մի քանի ձե-
վերի առկայությունը բխում են նրանից, որ հաճախ օտար ածանցը կամ
արմատը տարբեր կերպ են պատճենում կամ ընդհանրապես չեն էլ
պատճենում: Նման ձևերը հիմնականում կարելի է խմբավորել հետևյալ
կերպ.

1) օտար ածանցը կամ արմատը մի դեպքում պատճենվում է, մյուս
դեպքում՝ ոչ, ինչպես. орто=ուղա—որոն, олиго=սակավա—օլիգո, ан-
ти=հակա—անտի, нео=նորա—նեո-, авто=իմեմ—իմեմապետ, терм=
ջերմ— թերմ, օրինակ՝ անտիթեզ—հակաթեզ, թերմաստիֆոն—ջերմաս-
տիֆոն:

2) Օտար ածանցը կամ արմատը պատճենվում է ազգային երկու
համանիշ ածանցներով կամ արմատներով, ինչպես՝ пан=համա—ամե-
նա, изо=նույնա—հավասարա, би=երկ—կրկնա, пре=նախա—վերա,
ультра=գեր—անդր, гетер=տարա—այլա— (օրինակ՝ տարագիգոտ—
այլագիգոտ, հավասարաիոնություն—նույնաիոնություն, երկթորոցf—
կրկնթորոցf):

3) Օտար ածանցով կամ արմատով ձևը պահպանելով հանդերձ,
դրա կողքին կիրառվում են դրան համանիշ ազգային ձևերը, ինչպես.
ультра=գեր— անդր—ուլտրա, супер=—վեր— գեր—վրա սուպեր, мик-
ро=մանրա— փոքրա— միկրո, прото=—առաջին—առաջնային—նախա-
պրոտո, супра=—վեր— մակ—սուպրա, эндо=—ներ— ներսա—էնդո, эки=
—վեր—վերնա—մակ—էպի—, поли=—բազմա—շատա—պոլի, инфра=—ենթա-
ստոր—ինֆրա, ре-կրկնա—վերա—հառ—ռե, օրինակ՝ գերձայնային—անդր-
ձայնային—ուլտրաձայնային)* և այլն:

Օտար տերմինները ազգային դարձնելը, կոնկրետ դեպքում հայե-
րեն համարժեքով փոխարինելը, պահանջում է մեծ զգուշություն: Կարե-
վոր է այն հանգամանքը, թե նորակերտ տերմինը գործնականում որ-
քանով է իրեն արդարացնում և կիրառություն ստանում տվյալ տերմի-
նային համակարգում: Իսկ դրա համար առաջին հերթին պետք է հաշվի
առնել այդ տերմինների իմաստային ճշգրտությունը: Նորակերտ տեր-
մինը պետք է ճիշտ կերպով արտահայտի համապատասխան տերմինի
գիտական իմաստը: Կարելի է բերել շատ օրինակներ, երբ տերմինը
թարգմանվել է, առաջարկվել են հայացված ձևեր, բայց դրանք կիրա-
ռություն չեն գտել կամ մասամբ են կիրառվել, օրինակ՝ եթե ջրակցում,
պատճառակալություն, միագունատես, վիտամինաֆաղց, տարագոյա-
ցում, տարածամանակություն, փտախտ, արյունալուծիչներ և շատ այլ
ձևեր արմատացան մեր լեզվում՝ հիդրակլիա, դեռեմֆեմիզմ, մոնոխրո-

*Որոշ ձևերում ա հոդակալը թողնված է պայմանականորեն:

մատ, ավիտամինոզ, հետապլազիա, հետերոխրոմիզմ, գանգրենա, հեմո-
լիզինենտ ձևերի փոխարեն, ապա տատանսահման, ժառանգակրային
տեսություն, նեյտրոֆիլաշատացում, նեյտրոֆիլաշացում, մոնոցիտա-
շատացում, ինֆեարբություն, առողջագիտություն, տառամարմին, ա-
զատամիտ ձևերը, որոնք առաջարկվել են ամպլիտուդ, գենային տեսու-
թյուն, նեյտրոֆիլիա, նեյտրոֆենիա, մոնոցիտոզ, ավտոմատիզմ, հի-
գիենա, լիտեր, լիբերալ ձևերի համար, դեռևս չեն արմատացել մեր լեզ-
վում, և հնարավոր է, որ սրանցից մի քանիսը ընդհանրապես կիրառու-
թյուն չգտնելով, դուրս գան տերմինային բառապաշարից կամ մնան
սոսկ մասնագիտական բառարաններում՝ իբրև չգործածվող միավորներ:

Պրոֆ. է. Բ. Աղայանը տերմինների ընտրության հարցում ար-
դարացիորեն առաջ է քաշում «համակարգայնություն» հարցը, այսինքն՝
«տերմինի ամբողջ համակարգի հնարավոր փոխարինումը կամ պահ-
պանումը»: «Գիտական տերմիններն իրարից առանձնացած չեն,—
գրում է նա,—նրանք շատ հաճախ կապակցված են մի ամբողջ շարք
հարակից տերմինների հետ և դրանց միասնությամբ մի ամբողջ համա-
կարգ են կազմում. այսպիսի դեպքերում, նպատակահարմար չէ համա-
կարգից միայն մեկ առանձին տերմին հայացնել, մյուսները պահպանե-
լով, կամ ընդհակառակը, մեկ օտար տերմինը պահել, մյուս բոլորը
հայացնելով (կամ արդեն հայերեն ունենալով)»³⁴: նա օրինակ է բերում
տուրիստ բառի համարժեքը հայերենում՝ զբոսաշրջիկ, որը չհաստատ-
վեց այն պատճառով, որ դրանից կազմված տուրիզմ, տուրբազա, լեռ-
նային տուրիզմ միավորների փոխարեն հարմար չէ գործածել զբոսա-
շրջություն, զբոսաբազա, լեռնային զբոսաշրջություն անբարենչյուն ձե-
վերը: Եվ իրոք, շատ հաճախ որոշ տերմինների համար հնարավոր է
ստեղծել հայերեն համարժեքներ (կամ դրանք արդեն ստեղծվել են),
բայց տվյալ միավորի բառակազմական կաղապարները կամ դրանով
կազմված կայուն բառակապակցությունները հնարավորություն չեն
տալիս կազմելու տվյալ տերմինի լրիվ համակարգը: Այս հանգամանքը
հաշվի առնելով, շատ դեպքերում կիրառվում է միայն օտար ձևը, օրի-
նակ՝ физиология տերմինը վաղուց թարգմանվել է բնախոսություն:
Դրանից ունենք ֆիզիոլոգ—բնախոս, ֆիզիոլոգիական—բնախոսական ձե-
վերը: Եվ թվում է, թե հարմար է: Բայց ահա, ինչպես իրավացիորեն
նկատել են որոշ մասնագետներ, физиологический покой, физиоло-
гический раствор, физиологическое возбуждение և այլ կապակցու-
թյունների թարգմանությունը կարծեք հաջող չէ հայերեն՝ բնախոսական
հանգիստ, բնախոսական լուծույթ, բնախոսական դրդում³⁵: կամ ունենք
շլանգ (шланг) օտար և փողքակ ազգային ձևերը, որոնք իբրև տերմին-
ներ կիրառվում են ավտոմոբիլային տերմինաբանության մեջ: Բայց

կայուն կապակցությունները առայժմ կիրառվում են օտար ձևի համակցությամբ. գրահապատ շլանգ, օդափոխման շլանգ, պաշտպանական շլանգ, օդի շլանգ, նկույն շլանգ, ապահովիչ շլանգ, ռետինե շլանգ և այլն:

Շատ դեպքերում տերմինների թարգմանության, նրանց համարժեքը տալու ժամանակ անհրաժեշտ է լինում դիմել գաղափարադրական կոնկրետացման (идеографическая конкретизация), այսինքն՝ երբ մի լեզվի համապատասխան բառին կամ տերմինին համապատասխանում են մի քանի բառեր, որոնք ճշտում, ավելի պարզորոշ են դարձնում տվյալ հասկացության կամ երևույթի մասնավոր կողմերը: Հնարավոր է, որ այդ երևույթը հատուկ լինի միմյանց հետ իմաստային որոշակի հարաբերություններ չունեցող առանձին բառերի կամ տերմինների և ամբողջական հասկացական կամ բառիմաստային խմբերի: Այս երևույթը շատ դեպքերում կարելի է բացատրել տարբեր լեզուների բառակազմական առանձնահատկություններով, օրինակ՝ հայերենի և ռուսերենի զուգահեռ գործածություն ունեցող որոշ տերմինների համեմատությունը ցույց է տալիս, որ հաճախ ռուսերենի մեկ տերմինը համապատասխանում է հայերենի մի քանի տերմինների, որոնք բաղադրված են տարբեր ածանցներով, օրինակ՝ браковщик—խտտանիչ—խտտանորդ—խտտանարար, анаморфоз—ձևափոխություն—ձևափոխում, откормщик—բուռղ—բուռդ, питательный—սննդարար, սնուցիչ, направляющий—ուղղորդ—ուղղատու և այլն:

Տերմինաբանությունն արտացոլում է անընդհատ փոփոխվող հասկացությունների համակարգը, և այն փոփոխվում է հասկացությունների փոփոխման հետ համատեղ: Հասկացության փոփոխությունը միաժամանակ փոփոխություն է առաջացնում նաև տերմինահամակարգում: Այս երևույթը կարող է բացասաբար ազդել տերմինահամակարգի ամբողջության վրա, խախտել համակարգայնությունը: Հաճախ տերմինային զուգահեռների առաջացումը պայմանավորված է լինում ինքնաբերաբար կատարվող լեզվական գործոններով, ինչպես օրինակ՝ կենսունակ ածանցը ոչ կենսունակով փոխարինելով, որևէ ածանցի կորուստով, ինչպես նաև տերմինահամակարգերի վրա ոչ ճիշտ ներգործմամբ: Այս դեպքում ևս նման շարքերի առաջացումը խախտում է տերմինահամակարգի միօրինակությունը: Այս վերջինը հատկապես երևան է գալիս օտար և ազգային ձևերի՝ համարժեք տերմինների, զուգահեռ կիրառությունների դեպքում, ինչպիսիք են՝ ռեծիսոռ—բեմավար, դիրիժոր—երգավար—նվագավար, պրեմիա—պարգևատրություն, պարգևավճար—պարգև—հավելում (պարգև-հավելում), ասամրլեա—համա-

ծողով—աշխարհածողով, ռեակցիա—հետադիմություն— հետադեմ ու-
ծե՛ր և այլն:

Հայերենի հարուստ և ճկուն բառակազմական հնարավորություն-
ների շնորհիվ օրեցօր ավելանում է նորաստեղծ տերմինների քանակը:
Միայն վերջին ժամանակներում մեր լեզվում ստեղծվել են հազարա-
վոր տերմիններ, որոնցից շատերը լայն կիրառություն և քաղաքացիու-
թյուն են ստացել: Օրինակ՝ մակնիշ, ցուցափեղկ, արտադրամաս, հա-
մալիւր, մասնաճյուղ, հյուրախաղ, մասնաշենք, դափնեկիր, տաղավար,
համայնապատկեր, շրջափակում, ծանրորդ, ծանրաձող, մշակույթ, տա-
րածք, տիեզերաճավ, հեռուստացույց, փառատոն, գիտածողով, հաս-
տոցաշինություն, սարքաշինություն, մասնագիտություն, երթուղի և
այլն:

Հայոց լեզվի տերմինաբանությունը հետևում է համաշխարհային
գիտական մտքի զարգացմանը, նրա բուռն ընթացքին, հարստանում և
փոփոխվում է գիտական հասկացությունների փոփոխման և նոր հաս-
կացությունների առաջացման պրոցեսին զուգընթաց՝ համալրվելով գի-
տության, արտադրության և տեխնիկայի համապատասխան բնագավառ-
ներում կիրառվող նորագույն հասկացությունների անվանումներով:

4. Համանիշ տերմիններ

Համանիշ են այն տերմինները, որոնք հակադրվում են, հատկապես
տարածական, սոցիոլոգիական, ժամանակագրական, կառուցվածա-
յին հատկանիշներով: Ժամանակակից հայերենի տերմինահամակար-
գում դրանք ունեն տարբեր դեր ու կշիռ, քանակային ու կիրառության
տարածվածության տարբեր հարաբերություններ:

ա) Տարածական հատկանիշով հակադրվող տերմինները թեև ընդ-
հանուր են հայերենի որևէ մասնագիտական բնագավառի համար, բայց
գործածական են տարբեր տարածքներում, այսինքն՝ դրանցից մեկը կի-
րառվում է արևելահայերենում, մյուսը՝ արևմտահայերենում, ինչպես.
հասարակագետ—ընկերաբան, հաղորդավար—խոսնակ, հեռախոս—հե-
ռաձայն, հեռուստացույց—հեռատեսիլ, ծրագիր—հայտագիր և այլն:

Երբեմն արևելահայերենում գործածվող մեկ տերմինի փոխարեն
արևմտահայերենում կիրառվում են երկու տերմին, որոնք տվյալ տա-
րածքում հանդես են գալիս իբրև բացարձակ համանիշներ կամ նույնա-
նիշներ, ինչպես. կինո—շարժանկար—շարժապատկեր, տիեզերագնաց—
աստղագնաց—աստղաճավորդ, տիեզերագնացություն—աստղագնացու-
թյուն—աստղաճավորդություն:

Ինչպես ցույց են տալիս վերոբերյալ օրինակները, նման տերմին-

ները բաժանվում են երկու խմբի. 1) մեկ հասկացության համար օտար տերմինի փոխարեն և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում ստեղծվել են ազգային ձևեր (հաղորդավար—խոսնակ, հեռախոս—հեռաձայն), 2) արևելահայերենը կիրառում է օտար տերմինը, արևմտահայերենը՝ նրա ազգային համարժեքը (սոցիալիստ—ընկերավար, կինո—շարժանկար, ավտոմոբիլ—ինքնաշարժ):

բ) Սոցիոլոգիական հատկանիշով հակադրվող զուգահեռ գործածություն ունեցող տերմինները ևս ունեն կիրառության տարբեր շրջանակներ: Տվյալ հասկացությանը տրվող տարբեր անվանումներից մեկը մեծ մասամբ կիրառվում է գիտական գրականության մեջ, գրավոր խոսքում, մյուսը՝ խոսակցական. լեզվում, ինչպես. կատաղություն—ջրվախություն, դեղնախո—բոտկին—դեղնացավ, խառնադրոշմ—դաշվածք, լնդախո—լնդացավ, տրիստֆիտիա—ֆաշալ, գունջ—մկնատամ, միկրոսպորիա—էրեթիկ: Այս ձևերից վերջինները երբեմն օգտագործվում են ինչպես մասնագետների բանավոր խոսքում, այնպես էլ ժողովրդախոսակցական լեզվում և այն էլ ոչ տերմինային արժեքով: Եթե տերմինը գործածվում է ոչ թե մասնագիտական գրականության մեջ, այլ ուրիշ շրջանակներում, հանրամատչելի կամ գեղարվեստական գրականության մեջ՝ համակարգից դուրս, ուրեմն այն ապատերմինացվում է: Նման դեպքերում զուգահեռ գործածություն ունեցող տերմինների կիրառությամբ բացահայտվում են դրանց գործառության շրջանակները, հաճախ շատ տերմիններ օգտագործվում են միայն ակադեմիական հրատարակություններում կամ միայն գիտահանրամատչելի գրականության մեջ: Ահա թե ինչու զուգահեռ գործածություն ունեցող ձևերի այս շարքում մի եզրը ապատերմինացվում է, որը իրավունք է տալիս նման շարքերը համանշան անվանել սոսկ հարաբերականորեն:

Հայերենում կան բազմաթիվ բառեր, որոնք բույսերի անվանումներ են և հանդես են գալիս զուգահեռ ձևերով: Գիտական գրականության մեջ դրանք ունեն իրենց որոշակի անվանումը, դրանց կողքին շատ են նաև ժողովրդական լեզվում տարածված անվանումները: Լատիներենում և ռուսերենում դրանցից յուրաքանչյուրին տրվում է մեկ անվանում: Բերենք մի քանի օրինակներ տարբեր բնույթի բառարաններից, նախ՝ տերմինաբանականից³⁶.

Դաշտային ձիաձևտ—ձիազի, ձիու շաքար, շան ագի,
Հիմալայան մալրի—քաջաց ծառ, տիվտար, դիվամալրի,
Գորտնուկ—յուղածաղիկ, հրանունկ, մալխի ծաղիկ,
Ոլջախոտ—անիծած հարս, ոլջադեղ,
Կակաշ—խաշխաշ, լալա, պուտ,
Օճառախոտ—օճառաբույս, փրփրիկ,

Լոշտակ—մարդախոտ, մարմնատակ,
Հացհամեմ—շամբուլա, այծառվույտ,
Օղակաձև խոզանուկ—կաշուկ, ձիակորեկ, գավարսախոտ,
Կարմրաշուշան—լեռնաշուշան, հրճու,
Կերոն—ջրեղեգ, որձախոտ և այլն:

Բազմաթիվ բույսերի զուգահեռ անվանումներ տրված են Ա. Սուբխասյանի «Հոմանիշների բառարանում»: Հեշտ է նկատել, որ դրանց մեծ մասն ունի զուտ անվանողական և կիրառական տարբերություններ և թեև պատկանում է միևնույն տերմինահամակարգին, բայց ավելի շատ վերաբերում է անվանակարգային հասկացություններին, քան տերմիններին, հետևապես անհրաժեշտ է տարբերակել դրանք բուն տերմիններից, ինչպես օրինակ՝ առյուծախոտ—ջեմատակ—առյուծածուծ, առջախոտ—առջականջ, ժանտաթգենի—մոլաթգենի—կատաղի—կատաղի թուզ, այծակն—այծախոտ, գիշերածաղիկ —ցայգածաղիկ—գիշերային հասմիկ, թթենի—շեքամածառ, անանուխ—դաղձ, կարմրախառ—կարմրագեղ—կարմրախոտ, կարնոտն—փոքրոտն, դոխոտնի—կաթնուկ—խեծուկ և այլն:

գ) Ժամանակագրական հատկանիշով հակադրվող տերմինների համար բնորոշ է այն, որ դրանք հիմնականում երկանդամ համանշային շարքեր են, որոնց անդամներից մեկը կիրառվում է ժամանակակից հայերենի որևէ տերմինահամակարգում, մյուսը հնացած է և հատուկ է հին հայերենին, ինչպես. բառաբան—բառգիրք, առակագիրք—աղվեսագիրք, դիմում—աղբսագիր, ֆիլ—հաբագես, տողադարձ—տողանցություն, ողբերգություն—նոխագերգություն և այլն:

դ) Կառուցվածքային տերմինաբանության մեջ ընդունված է «տերմինի կարճ ձև» հասկացությունը, որը կիրառվում է այն ժամանակ, երբ տերմինի իմաստը հասկանալի է և նրան զուգահեռ կարճ ձևի առկայությունը չի խճողում տերմինահամակարգը: Այս փաստը ևս վերկայում է տերմինային համանշության առկայության մասին, հատկապես, երբ տարբեր անվանումներ զուգահեռաբար օգտագործվում են միևնույն ժանրի կամ ոճի մեջ (տերմինաբանական ստանդարտ, տերմինաբանական բառարան, տերմինարան և այլն), ինչպես նաև տարբեր շրջանակներում (գրավոր խոսք, մասնագետների միջև տեղի ունեցող բանավոր հաղորդակցություն և այլն):

Տերմինի կարճ ձև (այսուհետև՝ ՏԿՁ) ասելով տերմինաբանության մեջ հասկանում ենք բովանդակությամբ հավասարաթեք, լեզվական համապատասխան եղանակներով կրճատված տերմինային կառույցը, որն անվանում է միևնույն հասկացությունը: Ինչպես ընդհանուր գործա-

ծական բառապաշարում, այնպես էլ մասնագիտական բառաշերտում գոյություն ունեն մեծ թվով բառակապակցություններ, հաճախ նույնիսկ երկարաշունչ արտահայտություններ, որոնք ընդգծում են հասկացության կարևոր հատկանիշները: Թեև գիտական տեսակետից այդ արդարացվում է, բայց գործնականում, առանձնապես բանավոր խոսքում, դրանք անհարմար են, և կարիք է զգացվում դիմել ավելի կարճ ձևերի:

Գիտական գրականության մեջ ամենից տարածվածը տերմինի կարճ ձև (краткая форма термина) և տերմինի կարճ տարբերակ (краткий вариант термина) անվանումներն են, որոնցից նախընտրելի է առաջինը, մանավանդ որ այն դասվում է համանիշների շարքը, ոչ թե տարբերակների:

ՏԿՁ-ն իր իմաստով հավասարաթեք է տերմինի լրիվ ձևին այն առումով, որ երկուսն էլ միեկնույն հասկացությանը տրվող անվանումներ են: Տերմինի լրիվ ձև ասելով հասկանում ենք տերմին-կապակցությունները, որոնք հասկացությունը բնորոշում են հնարավորին չափ շատ հատկանիշներով, արտացոլելով տերմինի ամենաէական հատկանիշները: Սակայն գործնական աշխատանքում կամ գրավոր տեքստում հաճախ հարկ է լինում երկար ձևերից ընտրել ավելի կարճը: Այդպես առաջանում է երկարաշունչ, բաղադրյալ տերմինի ավելի կարճ ձևը, որը շատ հարմար է և իմաստային տեսակետից՝ համարժեք երկարին:

Եթե բանավոր խոսքում որևէ ՏԿՁ ստեղծվում է մեքենայաբար, ապա տերմինաբանական բառարաններում, բառարան-տեղեկատուներում, պետական ստանդարտներում այդպիսիք պետք է ներկայացնել միայն խնամքով մշակելուց, ճշգրտելուց, լեզվական համապատասխան օրենքներով կրճատելուց հետո՝ խստորեն հաշվի առնելով դրանց բովանդակային, տրամաբանական համապատասխանությունը:

Բազմաբառ տերմիններից կարճ ձև ստեղծելու համար պարտադիր են մի քանի պայմաններ, օրինակ՝ միաժամանակ իբրև համանիշներ կարելի է օգտագործել այն տերմինների կարճ ձևերը, որոնց իմաստները հայտնի են համատեքստից և թյուրըմբռնումների տեղիք չեն կարող տալ: Տերմինի նոր ձևը, կոնկրետ դեպքում կարճը, չպետք է բովանդակի նոր տարրեր, որոնք չկան երկար ձևում, այլապես նրանք կդադարեն տերմինային համանիշների լինելուց: Ելակետային լրիվ ձևերի և տերմինային նոր կազմությունների միջև, չի կարելի ասել, թե վերանում է հակասությունը, այլ, ինչպես նշել է Դ. Ս. Լոտտեն, հարկ է լինում հաշվի չառնել տերմինի որևէ հատկանիշներից մեկը³⁷: ՏԿՁ-ի ընտրությունը, նրա բաղադրիչներից որևէ մեկի կրճատումը, անշուշտ, կատարվում է նրա ճշգրտության և միանշանակության հատկանիշի

անտեսման հաշվին: Առանձնապես անհրաժեշտ է տարբերել նման ձև-վերի առաջացման երկու եղանակ. մի դեպքում գիտական գրականու-թյան մեջ նյութի շարադրման ժամանակ անհրաժեշտ է լինում դիմել որոշ տերմինների կրկնության, հաճախ նույնիսկ մի քանի անգամ՝ մեկ նախադասության պարբերության կամ էջի սահմանում և յուրաքանչյուր դեպքում՝ որևէ ձևով փոփոխված տարբերակով: Կարճ ասած, հարկ է լինում դիմել, այսպես կոչված, տեքստային կրճատումներ: Վերջինիս դիմում են, երբ անհրաժեշտ է լինում գործածության ժամանակ դուրս գցել տերմինի բաղադրիչներից մեկը կամ ավելին, իսկ հետո անհրա-ժեշտության դեպքում վերականգնել և կարճ ձևի փոխարեն գործածել լրիվ ձևը: Պարզ է, որ եթե տերմիններն առանց կրճատման կիրառվեն տեքստում, ապա ոճական առումով գիտական խոսքը կլինի տարտամ, կրկնություններով ծանրաբեռնված: Հետևապես, գիտական մտքերի շա-րադրման և հաղորդման դեպքում անպայմանորեն անհրաժեշտ է լինում դիմել տարբեր տեսակի տեքստային կրճատումների:

Բազմաբաղադրիչ տերմինները կարճերով փոխարինելու երկրորդ եղանակը, կարելի է ասել, կատարվում է բանավոր խոսքի ընթացքում: Հասկանալի է, որ տերմինների կիրառման ոլորտները լայն են, դրանք չեն սահմանափակվում միայն մասնագիտական գրականությամբ, գոր-ծառնում են նաև գիտնականների, համապատասխան մասնագետների բանավոր խոսքում: Խոսքի ընթացքում մարդը խուսափում է ավելորդու-թյուններից, կրկնություններից, անհարմարությունից և ցանկանում է հնարավորին չափ քիչ քանք գործադրելով արտահայտել իր մտքերը: Այդ ստիպում է գիտնականին կամ համապատասխան մասնագետին դիմել սեղմության և համառոտության:

Հայերենի տերմինաբանության բնագավառում չկա որևէ ուսում-նասիրություն կամ հոդված, որը նվիրված լինի ՏԿՁ-ին, այսինքն, որ-տեղ տրվեն դրանց կազմության հիմնական եղանակները և մեթոդները: Նման աշխատանք կազմվել է ուսերենի տերմինների համար, որը ծա-ռայում է որպես մեթոդական ուղեցույց: Այնտեղ առաջարկվում են ՏԿՁ-երի հնարավոր բոլոր եղանակները³⁸:

Այժմ անդրադառնանք ՏԿՁ-ի կազմմանը բնորոշ մի քանի հիմնա-կան եղանակների, որոնք հաճախ են հանդիպում գործնականում: Իհարկե, ստորև բերված եղանակները չեն կարող միանգամայն սպառիչ լինել հայերենի բոլոր ՏԿՁ-երի համար: Այդ հատուկ ուսումնասիրու-թյան նյութ է: Այստեղ անդրադառնում ենք ամենահիմնական կաղա-պարներին, այնքանով, որքանով դրանք կազմում են տերմին-համա-նիշների տարատեսակը:

1. Բ ա ո ա յ ի ն կ ր ն ա տ ու մ ն ե ր

ՏԿԶ կարելի է ստանալ տերմին-բառակապակցության կազմում հղած որևէ միավորի կրճատման հետևանքով: Կրճատումից հետո կարող են առաջանալ երկու տիպի հարաբերություն լրիվ և կրճատ ձևերի միջև՝ բառակապակցություն—բառակապակցություն, բառակապակցություն—բառ: Առաջինի համար կարելի է բերել հետևյալ օրինակները. գրական գեղարվեստական երկ—գրական երկ, երկրաչափորեն շփոփոխվող համակարգ—շփոփոխվող համակարգ, գրական գեղարվեստական ստեղծագործություն—գրական ստեղծագործություն, երկրորդի համար հետևյալները՝ արխիվային ֆոնդ—արխիվ, առաջնորդող հոդված—առաջնորդող, գրական երկ—երկ:

Բառակրճատման միջոցով ՏԿԶ կարելի է ստանալ հետևյալ դեպքում, եթե բառակապակցությունն արտահայտված է սեռային հատկանիշ արտահայտող գոյականով+տեսականին հատկանիշ արտահայտող գոյական, ապա հնարավոր է կրճատել երկրորդ բաղադրիչը: Այսինքն՝ տեսակ ցույց տվող տերմինի լրիվ ձևի փոխարեն թույլատրվում է գործածել սեռ ցույց տվող տերմինի կրճատ ձևը: Կրճատման այս եղանակը տարածված է նաև ուսեբեհում, հատկապես անվանականարգության մեջ: Եթե անվանականարգային միավորը միևնույն մեքենայի անվանումն է, ապա այդ դեպքում կրճատվում է մեքենայի անունը, այսպես. ուսեբեհում գործածում են՝ пресс-форма стеклоформирующей машины=пресс-форма, կամ плунжер стеклоформирующей машины=плунжер և այլն³⁹: Նման դեպքում պետք է զգուշություն ցուցաբերել, որպեսզի ՏԿԶ-ը չզուգահեռի մի այլ տերմինի, որը գործածվում է այդ բնագավառում և համանունություն չառաջացնի, ինչպես օրինակ՝ էլեկտրամագնիսական դաշտ—դաշտ, առաջին ազդանշանային համակարգ—համակարգ, էլեկտրական հոսանք—հոսանք, գրական ստեղծագործություն—ստեղծագործություն և այլն: Իհարկե, այս բոլոր դեպքերում պետք է հետևել իմաստին և զգուշ լինել հետագա խառնաշփոթությունից, ուստի ՏԿԶ-ն այս դեպքում կարող է կազմել միայն համապատասխան մասնագետը:

2. Բառակազմության միջոցով առաջացած կրճատումներ

Բառակազմության միջոցով ՏԿԶ-ի կազմումը պահանջում է մեծ զգուշություն, բառակազմական եղանակների, կաղապարների, տերմինացվող հասկացությունների, նրանց համապատասխան իմաստների

քաշ իմացութիւն: ՏԿԶ կազմելու այս եղանակը կարելի է բաժանել մի քանի ենթախմբի:

ա) Բառաբարդացում. ժամանակակից հայերենում ամենից շատ տարածված է որոշիչ-որոշյալի հարաբերութիւն ունեցող երկանդամ տերմին-կապակցութիւնների միացումը մեկ միավորի կազմում՝ գերազանցապես ա հոդակապի օգնութեամբ, այսինքն՝ տերմին կապակցութեան կրճատման հետեանքով առաջանում են կազմութեամբ բարդ համադրական (իսկական բարդութիւններ) տերմիններ, ինչպես՝ էլեկտրական էներգիա—էլեկտրաէներգիա, էլեկտրական հաղորդում—էլեկտրահաղորդում, մագային զգայունութիւն—մագագայունութիւն, լեզվական ընտանիք—լեզվաընտանիք, սկզբնական փուլ—սկզբնափուլ: Նույն կաղապարով միանում են նաև հատկացուցիչ-հատկացյալի հարաբերութիւն արտահայտող տերմին-կապակցութեան անդամները՝ շապիկի թուղք—շապկաթուղք, ներկի նմուշ—ներկանմուշ, ծալքի նմուշ—ծալքանմուշ, գրքի շապիկ—գրքաշապիկ, տառի նմուշ—տառանմուշ, օդի խուց—օդախուց, խցանի օդ—խցանօդ, փաշի ուժ—փաշաուժ և այլն: Այս տերմինների շարքը պետք է դասել նաև երկանդամ և եռանդամ այն կապակցութիւնները, որոնց կազմում կան որոշիչ որոշյալի հարաբերութիւն արտահայտող միավորներ: Դրանցից ստացված կրճատ ձևերը ևս իսկական բարդութիւններ են, որոնք պահպանում են իմաստային նույն հարաբերութիւնները, թեև ընդհանրապես դուրս է գալիս կապակցութեան մեկ անդամը, ինչպես՝ բազմաճիւղային հաշուարկութիւն—բազմաճիւղային, բառահատոր հաշուարկութիւն—բառահատորային: Նման ձևերի կազմումը հնարավոր է նաև իմաստային այլ հարաբերութիւն արտահայտող կապակցութեան անդամների միացումից՝ առանց դուրս գցելու բաղադրիչներից մեկը, օրինակ՝ սրտի զագաթնային հոռց—սրտազագաթնային հոռց:

բ) Ածանցում. այս եղանակը բարդ չէ: Հիմնական պահանջն այն է, որպեսզի տերմինի լրիվ ձևին՝ կոնկրետ դեպքում բառակապակցութեան գլխավոր բաղադրիչին, կցվի համապատասխան իմաստ արտահայտող ձևով: Իսկ դրա համար ամենից առաջ անհրաժեշտ է տվյալ լեզվի բառակազմութեան ընդհանուր օրենքների լավ իմացութիւն: Հայերենում նույնպես այս եղանակը շատ գործուն է: Այդ պետք է բացատրել մեր լեզվի ածանցական մեծ հնարավորութիւններով, օրինակ՝ իշ վերջաժանցն արտահայտում է մի քան անող իմաստ և գործածվում է ինչպես անձ, այնպես էլ իր ցույց տվող բառերի հետ, որոնցից շատերը տարբեր մասնագիտական բառապաշարում գործածվում են որպես տերմիններ: Իհարկե, ածանցման հետ մեկտեղ կարող են գործել նաև բառակազմական այլ եղանակներ (օրինակ՝ բարդացում): Այսպես

օրինակ՝ մետաղի վրա փորագրող երկար ու նկարագրական ձևի փոխարեն —իշ ածանցի օգնությամբ կազմվել է մետաղափորագրիչ կարճ ձևը: Այս առումով հայերենում բավական արտադրողական են հատկապես վերջածանցները, որոնցից շատերն արտահայտելով կոնկրետ իմաստներ, դրվում են հասկացության համապատասխան անվանումների վրա, կազմելով նոր տերմիններ, ինչպես՝ —ուրյուն, —ում, —յալ, —ոդ, —արար, —ունք, —ույկ, —ույք, —ված, —վածք, —ոց, —մունք, —ացում և այլն, ինչպես՝ կովի ծինը—կովածնուրյուն, մեղադրվող անձ—մեղադրյալ, խոտանող բանվոր—խոտանիչ, փաթեթավորման ենթաբեկեր—փաթեթավորում, բբի լայնացնելը—բբալայնացում և այլն:

դ) Հապավում. ՏԿՁ կազմելու այս եղանակը տարածուն է շատ լեզուներում, այդ թվում նաև հայերենում: Նման հապավումները տերմինային կապակցությունների և բաղադրյալ անվանումների բաղադրիչների կրճատագիր մասերն են, որոնք սովորաբար համապատասխանում են մեկ հասկացության և մեկ տերմինի իմաստ են արտահայտում: Ինչպես. ընդհանրապես լեզվի բոլոր հապավումները, այնպես էլ տերմինային հապավումները, առաջացել են տեղի և ժամանակի խնայողության կամ տնտեսման պահանջը հաշվի առնելուց: Եթե դրանք սովորական խոսքը հաճախ զրկում են գեղեցկությունից, թարմությունից, ապա գիտական գրականության մեջ, ընդհակառակն, պահպանելով իմաստի ճշգրտությունը, խոսքը դարձնում են սեղմ ու հակիրճ: Հապավումները հիմնականում կարող են կրճատվել հետևյալ սկզբունքներով. ա) կապակցության բաղադրիչների միայն մի մասի կրճատումից՝ սոցիալիստական մրցություն—սոցմրցում, բ) բոլոր բաղադրիչների որոշ մասերի կրճատումից՝ շրջանային ժողովրդական կրթության բաժնի վարիչ—շրջ-ժողկրթբաժնավար, մեքենայական բարգմանություն—ՄԹ: Թեև տերմինից կտրված առանձին բաղադրիչներն արդեն տերմին չեն և այդպիսի իմաստ էլ չեն արտահայտում իբրև առանձին միավորներ, բայց ամբողջ հապավման մեջ, որպես բարդության բաղադրիչ տարրեր, ամբողջությամբ տերմինի արժեք ունեն: Տերմինային հապավումները կարելի է խմբավորել հետևյալ կերպ⁴⁰.

ա) Տառային են կոչվում բոլոր այն հապավումները, որոնք ստացվել են տերմին-կապակցության բաղադրիչների առաջին տառերից, ինչպես՝ նավթային անման նյութ—ՆԱՆ, օդային տագնապ—ՕՏ: Նման հապավումներից շատերը հայերենին են անցել ռուսերեն հապավումների պատճենումից, բայց, իհարկե, ամեն դեպքում հաշվի են առնվել հայերենի շարահյուսական, բառակազմական ընդհանուր օրինաչափությունները, այդ իսկ պատճառով լրիվ միավորներից կտրված թեմաները

որող դեպքերում կարող են համապատասխանել կամ չհամապատասխանել ուսերենի տերմիններին, ինչպես՝ Общий центр тяжести—ОЦТ—Ծանրության ընդհանուր կենտրոն—ԾՐԿ, ежедневное обслуживание—ЕО—ամենօրյա սպասարկում—ԱՍ, техническое обслуживание № 1—ТО—1 —տեխնիկական սպասարկում—ՏՍ—1 և այլն:

Հապավումներ են կազմվում նաև այնպիսի կապակցություններից, որոնց կազմում կան ածանցավոր և բարդ բառեր, ուր ածանցը և բարդության բաղադրիչները կարևոր են տերմինի համար: ՏԿԶ-ը կազմվում է նաև այդ միավորների առաջին տառերից, ինչպես՝ հակաօդային պաշտպանություն—ՀՕՊ, սպիտակուցա-վիտամինային կոնցենտրատ—ՍՎԿ, ադրենալեզկային հորմոն—ԱԿՀ:

բ) Վանկային այն հապավումները, որոնք կազմվել են տերմինային կապակցության բաղադրիչների առաջին վանկերի (հնարավոր է 1—2 վանկի) միացումից, ինչպես՝ պրոլետարական կոլտուրա—պրոլետկոլտ, պարտադիր ուսուցում—պարտուս, պատմական մատերիալիզմ—պատմատ, գործադիր կոմիտե—գործկոմ, շրջանային գործադիր կոմիտե—շրջգործկոմ, երկրամասային կոմիտե—երկրկոմ, ռազմական ուսուցում—ռազմուս և այլն:

գ) Վանկաբառային այն հապավումները, որոնք կազմվել են տերմինային կապակցության առաջին բաղադրիչի կամ բաղադրիչների վանկերից և վերջին լրիվ բաղադրիչից, ինչպես՝ էլեկտրական էներգիա—էլէներգիա, տնտեսական հաշվարկ—տնտհաշվարկ, գազային շինարարական մոնտաժ—գազշինմոնտաժ, աշխատանքային օր—աշխօր:

Պատահում է, որ մեկ հասկացության համար ՏԿԶ-եր կազմվում են և՛ տառային, և՛ վանկատառային հապավման ձևերով, և այսպես ստացվում են եռանդամ համանշային տերմինային խմբեր՝ տերմինի մեկ երկար և երկու կարճ ձևերով, ինչպես. պետական տոհմական մատյան—պետտոհմամատյան—ՊՏՄ, պետական տոհմական բուծարան—պետտոհմաբուծարան—ՊՏԲ (անասնաբուծ.):

Երբեմն տերմինային համանշություն է առաջանում ոչ միայն կարճ և լրիվ ձևերով, այլ մինչև իսկ երկու կարճ ձևերի առկայությամբ: Այդ լինում է հատկապես այն դեպքում, երբ օտար և ազգային տերմինների բաղադրիչներից կազմված կարճ ձևերը զուգահեռաբար գործածվում են (այդպիսի հապավումներ ընդհանրապես հանդիպում են նաև ոչ տերմինային կիրառությանը), ինչպես՝ շրջկոմ—ռայկոմ, շրջգործկոմ—ռայգործկոմ, շրջսովետ—ռայսովետ, արևկոմիտե—պրոֆկոմիտե, արևկոմ—պրոֆկոմ: Դրանց տիպիկ օրինակներ են՝ պարտանդամ—կուսանդամ, պարտաշխատանք—կուսաշխատանք, պարտշրջկոմ—կուսշրջկոմ, պարտդպրոց—կուսդպրոց, պարտկազմակերպություն—կուսկազմակերպություն,

պարտաճամագումար—կուսճամագումար, պարտկոմիտե— կուսկոմիտե
ձևերը⁴¹, որոնք իրենց հերթին հանդես էին գալիս լրիվ ձևերի հետ
(օրինակ՝ պարտիական աշխատող—կուսակցական աշխատող): Նման
հապավումները ժամանակավոր բնույթ են կրում և երբեմն գիտակցա-
կան ոչ ճշգրիտ ներգործման շնորհիվ որոշակի ժամանակահատվածում
գործում են կողք կողքի, մինչև ազգային ձևի լրիվ ամրապնդումը:

Բերված օրինակները վկայում են, որ գիտության տարբեր բնագա-
վառների մասնագիտական բառապաշարում տերմինի երկար ձևերի
կողքին առկա է կարճ ձևերի մի ողջ համակարգ: Եթե դրանք ոչ տերմին-
ների համար շատ դեպքերում կարող են կերտվել մեխանիկորեն, ապա
տերմին-հապավումները կերտվում են գիտակցված կերպով, որոշակի
և հաստատուն կանոնները հաշվի առնելով: Ահա թե ինչու գիտություն-
ների հարաճուն զարգացման ներկա շրջանում բուռն թափով զարգա-
նում է տերմինաստեղծման այս եղանակը, որն ավելի զգայուն է նորա-
բանությունների ընդունման և հնաբանությունների դուրս մղման
հարցում:

Այսպիսով, կարելի է ասել, որ վերոհիշյալ բոլոր եղանակներով
կազմված ՏԿԶ-եր օբյեկտիվորեն գոյություն ունեն տերմինաբանության
մեջ: Դրանք տերմինի լրիվ ձևի (երկու և ավելի միավորներից կազմված
կապակցության) անվանման կարճ տարբերակներն են և միևնույն հաս-
կացության անվանումները, որոնց զուգահեռ գործածությունը ոչ միայն
թույլատրվում է տերմինաբանության մեջ, այլև օրինականացվում է:
Դրանից հետևում է, որ տերմինի լրիվ և կարճ ձևերը հանդես են գալիս
համանշանային հարաբերությամբ, կարող են կիրառվել տարբեր իրա-
դրություններում՝ պաշտոնական խոսքում, գիտական գրականության
մեջ, մասնագետների բանավոր խոսքում: Կրճատման բոլոր ձևերը
բխում են տեքստից, պայմանավորված են համատեքստով, կիրառելի
են գրեթե բոլոր տերմինահամակարգերում: Նման կրճատումները հը-
նարավորություն են տալիս մասնագիտական խոսքը թոթափել ավելորդ
կրկնություններից, ծանրաբեռնվածությունից:

Տերմինային համանիշների հետ չպետք է շփոթել այն դեպքերը,
երբ թեև շատ դեպքերում որոշ զուգաձևեր կիրառվում են միմյանց
փոխարեն, բայց դրանք արտահայտում են իմաստային որոշակի տար-
բերություններ, դրանով իսկ հակասում են տերմինին հատկացվող հիմ-
նական պահանջներից մեկին, հետևապես, դրանք միմյանց փոխարեն
գործածելը չի արդարացվում: Եթե դրանցից յուրաքանչյուրն արտա-
հայտում է իմաստային որևէ նրբություն, ապա պետք է նաև համապա-
տասխանի տարբեր հասկացության, հետևապես դրանց տարբերակումը
անհրաժեշտություն է, և գիտական լեզվում այդ տերմինների ճիշտ և

տեղին գործածությունը պարտադիր է: Նման միավորները մեծ մասամբ բազմիմաստ տերմիններ են, որոնց իմաստները մերթ զուգադիպում են, մերթ տարբերվում լրացուցիչ նրբերանգներով, ինչպես. բանաստեղծություն—տառնավոր, բանագող—գրագող, մակերևույթ—մակերես, դիմախաղ—մեջխաղ, գեոֆնկտություն—ֆնկտություն և այլն: Հաճախ նման տերմինների իմաստային նուրբ տարբերությունները չեն նկատում ոչ մասնագետները և դրանք կիրառում են միմյանց փոխարեն: Օրինակ՝ ուղղանայաց և ուղղագիծ բառերը բառարանում տրվում են որպես համանիշներ⁴²: Մինչդեռ մասնագիտական բառապաշարում դրանք արտահայտում են իմաստային նրբություններ. «... Ուղղահայացը»-ը ցույց է տալիս 90 աստիճանի անկյուն կազմելու գաղափար, բայց ոչ թե ինչի հետ է կապում այդ անկյունը, հետևաբար, «ուղղահայաց» բառը գործածելիս անպայման անհրաժեշտ է նաև այնպիսի բառերի առկայություն, որոնք արտահայտեն որևէ մարմնի, հարթության կամ ուղիղի մեկ ուրիշի հետ 90 աստիճանի անկյուն կազմելը: Այսինքն, անհրաժեշտ է ասել. «AB-ն ուղղահայաց է CD-ին», «Մարքսի փողոցն ուղղահայաց է լենինի պողոտային» և այլն: «Ուղղահայացը»-ը գործածելիս, եթե ցույց չի տրվում, թե ինչին է ուղղահայաց, դառնում է անիմաստ: Ուղղագիծ հասկացությունը ուղղահայացի մի տարատեսակն է. այն ցույց է տալիս գազաթնակետը տվյալ կետի հետ միացնող զծի ուղղությունը, իսկ վերջինս տվյալ կետում ուղղահայաց է հորիզոնին. «ուղղագիծն» առանց նշելու, թե ինչին է ուղղահայաց, հնարավոր է կիրառել, որովհետև այն ունի մեկ ուղղություն՝ ուղղալարի ուղղությունը: Օրինակ՝ «Նշված բոլոր տեղամասերում արդեն ավարտվել է ուղղանայաց հորատումը»: Նշված օրինակներում ճիշտ կլինեն ուղղանայացը փոխարինվեր «ուղղագիծով»⁴³: Նման սխալ թույլ է տրվում նաև տառածություն—հեռավորություն, ստորգետնյա—ստորերկրյա, մակերևույթ—մակերես տերմինների գործածության ժամանակ, երբ հաշվի չեն առնվում նրանց իմաստային տարբերությունները:

Տերմինային համանիշների հետ չպետք է շփոթել այն դեպքերը, երբ միևնույն տերմինին տրվում են տարբեր սահմանումներ: Հայտնի է, որ հասարակական—քաղաքական տերմինները կազմում են տերմինաբանության բաղկացուցիչ մասը: Դրանք արտահայտելով սոցիալ-քաղաքական բնագավառների վերաբերող հասկացություններ և երևույթներ, ավելի շատ են ենթարկվում փոփոխությունների, քան այլ համակարգերի պատկանող տերմինները: Եթե հետևելու լինենք տարբեր երկրներում լույս տեսած մասնագիտական, բանասիրական և հանրագիտարանային բնույթի բառարաններում տրված հասարակական—քաղաքական որոշ տերմինների սահմանումների, ապա կնկատենք, որ շատ

համախ դրանք բնորոշվում են համանիշ սահմանումներով: Այդ հատկապես վերաբերում է տարբեր աշխարհայացքի, փիլիսոփայական տարբեր ուղղությունների, տարբեր գաղափարախոսությունների պատկանող սահմանց կողմից տրված միևնույն տերմինի սահմանումներին: Պատահական չէ, որ որոշ հետազոտողներ առաջարկում են զանազանել տերմինների այն սահմանումները, որոնք տարբերվում են համանշունթյամբ և երկակիությամբ (СИНОНИМИЧНОСТЬ И БИНАРНОСТЬ), առաջինի տակ հասկանալով այն սահմանումները, երբ միևնույն տերմինին տրվում են մի քանի սահմանումներ, որոնք թեև բնորոշում են տվյալ երեույթի հիմնական հատկանիշները, բայց տարբերվում են այդ հատկանիշների բնութագրման համար օգտագործվող լեզվական միջոցներով, իսկ երկրորդի տակ՝ այն սահմանումները, որոնք տարբերվում են միևնույն հասարակական-քաղաքական տերմինին տրված սահմանման բովանդակությամբ: Իբրև համանշունթյան տիպիկ օրինակ բերվում են ճեղագիտություն հասարակական-քաղաքական տերմինի տարբեր սահմանումներ բացատրական և մասնագիտական տարբեր բառարաններում, հեղինակային ուսումնասիրություններում, երբեմն մինչև իսկ միևնույն հեղինակի գիտական ուսումնասիրությունում, որտեղ տերմինը տրվում է իմաստային տարբեր գունավորումով, բայց պահպանում է մաքսականինյան փիլիսոփայական ըմբռնումը: Համեմատելով այս ըմբռնումը բուրժուական փիլիսոփայության ըմբռնման հետ, նկատելի է, որ այդ տերմինը հանդես է գալիս իբրև երկակիության լավագույն օրինակ: Այսպես՝ անգլերենի ճեղագիտություն (revolution) հասարակական-քաղաքական միևնույն տերմինին համապատասխանում են իրենց իմաստով միանգամայն տարբեր սահմանումներ, որոնցից մեկը տրվում է մաքս-լենինյան, մյուսը՝ բուրժուական փիլիսոփայության հայեցակետից⁴⁴:

Տերմինային համանշունթյան խմբերը ըստ միավորների քանակային կազմի տարբերվում են: Դրանք կարելի է բաժանել երկանդամ, եռանդամ, քառանդամ և քաղմանդամ համանշային շարքերի: Երկանդամ տերմինային շարքերը քանակապես գերակշռում են՝ այն էլ ըստ գիտությունների բնագավառներում: Քիչ չեն նաև եռանդամ տերմինային շարքերը, որոնք իրենց քանակով դիջում են միայն երկանդամ խմբերին: Բաղմանդամ համանշային շարքերը շորսից ալելի տերմիններից կազմված խմբեր են, որոնք սահմանափակ են և լայն տարածում չունեն: Օրինակ՝ տեխնիկական գիտություններում դրանք գրեթե չեն հանդիպում, հասարակական գիտություններում հանդիպում են համեմատաբար սակավ քանակով: Բաղմանդամ համանշային շարքերում գերակշռում են հնաբանությունները:

Երկանդամ համանշախին խմբեր. հոլովառություն—խնդրառություն, լծորդություն—խոնարհում, հյուսվածֆածնություն—հյուսվածֆագոյացում, սաղմնափոխակերպում—ծլափոխակերպում, դրամաշրջանառություն—դրամապտույտ, լեռնաշղթա—լեռնագնացություն, բնակար—բրնապատկեր, արեակենտրոն—արեգակնակենտրոն, անձնություն—ամլություն:

Նոանդամ համանշախին խմբեր. բանասաց—ասացող—գրուցասաց, կատաղություն—շրվախություն—շրախոսություն, կեղծանուն—գրական անուն—ծածկանուն, լուսնոտ—գիշերաշրջիկ—գիշերահաձ, երկաշար—մասենաշար—շարֆ, զինահոց—զինապահեստ—ռազմապահեստ:

Բազմանդամ համանշախին խմբեր. սոֆ—պատմագրույց—ավանդագրույց—գրույց, գորախաղ—ռազմախաղ—զինախաղ—զինավարժություն—գորավարժություն, հատրնտիր—ծաղկաֆաղ—բնտիր էջեր—բնտրանի (*անթոլոգիա*), վարակագերծում—ապավարակում—ախաղաղերծում—ախտահանում—վարակահանում, ալլասերում—տարասերում—ապասերում—վերասերում, լակոնական ոճ—համառոտախոսություն—կարեաքանություն—լակոնականություն—լակոնիկ ոճ (*լակոնիզմ*), ավանդավես—ավանդագրույց, պատմական բանաստեղծություն—գոլրան երգեր—թվեյաց երգեր—վիպասանֆ—երգ առասպելաց և այլն: Համանիշ տերմիններ են հանդիպում գրեթե բոլոր գիտությունների տերմինահամակարգերում, սակայն քանակային տարբեր հարաբերությամբ: Բենեթ մի շարք օրինակներ տարբեր համակարգերից.

Անասնաբուժական տերմիններ. փետրափոխություն—փետրաքափություն, սպանդ—մորթ, ցանցառաքողություն—նոսրաքողություն, սերմնագոյացում—սերմնաառաջացում, երկամբականիներ—երկնդականիներ, բեղմնակետ—բեղմնակայան, կրկնախուզ—վերախուզ:

Լեզվաբանական տերմիններ. խոնարհում—լծորդություն, խոնարհել—լծորդել, երկսեռ բայ—կրկնսեռ բայ, հոլովառություն—խնդրառություն, համանուն բառեր—նույնանուն բառեր:

Ֆինանսական տերմիններ. բաժնետեր—փայատեր—մասնատեր, արժետոմս—արժեթուղթ, դրամաշրջանառություն—դրամապտույտ, բաժնեթուղթ—բաժնետոմս (*ակցիա*):

Բժշկագիտական տերմիններ (*բժշկագիտության տարբեր ճյուղերի*). վարակել—տարափոխել—ախտահարել, ապանեխություն—հակափտություն—վարակագերծություն, ակնաբանություն—ակնագիտություն, ախտորոշաբանություն—ախտորոշագիտություն, շերմություն—տաֆություն, ջղաձգություն—ցնցում, ժուժկություն—ինֆեզսպում, դող—սարսուռ, թմրադեղամոլություն—թմրամոլություն (*նարկոմանիա*), սակավանոթագարկություն—դանդաղանոթագարկություն, թունագրկում—

բունագերծում, այլասերում—այլափոխում, հյուսվածֆածնություն—
հյուսվածֆագոյացում, ետանում—ապան, ներծծում—կլանում, ինֆնա-
լուծում—ինֆնաֆայֆայում:

Պատմագիտական տերմիններ. դինաստիա—հարստություն—քազ-
վորություն—իշխանություն, ֆեոդալիզմ—ավատատիրություն—ավատա-
կանություն—ավատապետություն—նորտատիրություն:

Գրականագիտական տերմիններ. ծաղրանկար—զավեշտանկար—եր-
գիծանկար—ծաղրապատկերում—շարժ—կարիկատուրա, կեղծանուն—
գրական անուն—ծածկանուն, երկաշար—մատենաշար, սաղմոսարան—
սաղմոսագիրք, զրույց—ավանդագրույց—պատմագրույց—զրուցաբանու-
թյուն, բնաբան—վերտառություն, ներբող—գովերգ—օղա, լակոնական
ոն—համառոտախոսություն—կարճաբանություն—լակոնականություն—
լակոնիզմ, անթուլոգիա—հատընտիր—ծաղկաֆաղ—ընտիր էջեր—ընտ-
րանի:

Թատերագիտական տերմիններ. բեմադրել—բեմականացնել—բե-
մարկել, արար—արարված, բեմադրություն—բեմականացում, թատերա-
գիր—դրամատուրգ—թատերգու—թատերգակ, բեմառաջֆ—նախաբեմ—
առաջարեմ—առաջամաս (ավանսցենա), թատերգություն—դրամատուր-
գիա—թատերագրություն:

Պոլիգրաֆիական տերմիններ. ապաքարց—մակակետ, պայծառու-
թյուն—փայլունություն, կաշունություն—մածուցիկություն, հարպադի-
մացկունություն—յուղադիմացկունություն, օղանցիկություն—օղաթա-
փանցիկություն, նկարագարդումների էջակապում—պատկերագարդում-
ների էջակապում, անգունություն—աներանգություն:

Աստղագիտական տերմիններ. արբանյականավ—տիեզերանավ,
աստղացույց—մոլորակացույց, արեակենտրոն—արեգակնակենտրոն:

Դյուլատնտեսական տերմիններ. այլասեռ—տարասեռ (բույսեր).
այլասերում—տարասերում—ապասերում—վերասերում—վատասերում,
խոտնարֆ—խոտնունն, այգեթաղ—այգեծածկում, ակոսաֆաղ—ակոսա-
հան:

Ուղղական տերմիններ. զինամթերֆ—ռազմամթերֆ, զորագունդ—
ռազմագունդ, զինանոց—զինապանեստ, զորֆ—զորաբանակ—բանակ,
ապակենտրոնացում—տարակենտրոնացում, ապակենտրոնացնել—տա-
րակենտրոնացնել և այլն:

Արխիվագիտական տերմիններ. արխիվային տեղեկամատյան—ծա-
ռայացուցակ—օգտաֆարտ (формуляр), ուրվագիծ—պլան—նախագիծ
(проспект), հանրագիր—խնդրագիր (պետիցիա), վկայագիր—արտոնա-
գիր (патент), պայմանագիր—համաձայնություն (картель), գծագիր—

ժամկետացուցակ—գրացուցակ (график), ցուցակ—ամփոփագիր (ведомость), վկայական—վկայագիր (аттестат):

Թեև տերմինային նման խայտաբղետությունը դեռևս բնորոշ է շատ գիտությունների համար, սակայն կարևոր է արձանագրել հետևյալ փաստը. մեր լեզվից զգալի չափով դուրս են մղվել հնացած տերմինները. այդ են վկայում վերջին տասնամյակում հրատարակված մասնագիտական բառարանները, որտեղ հնաբանություններ շատ քիչ են հանդիպում: Եվ ընդհանրապես, 60-ական թվականներից հետո լույս տեսած մասնագիտական բառարաններում հնաբանություններ գրեթե չկան: Այս արդեն վկայում է այն մասին, որ վերջին տասնամյակներում մեր գիտական լեզուն զգալի չափով թոթափվել է հնաբանություններից: Եղած հիմնական զուգահեռները մեծ մասամբ օտար և ազգային համարժեքներ են կամ բացարձակ համանիշներ, ընդ որում մեծ քանակ են կազմում փոխառությունները, այնուհետև՝ բացարձակ համանիշները, ավելի պակաս են համանիշները:

Որոշ լեզվաբաններ գտնում են, որ տերմինային համանշտությունը առավել չափով բնորոշ է համապատասխան համակարգերի ձևավորման վաղ շրջանին, երբ դեռևս տեղի չի ունեցել բնական ամրացում (բնական զարգացում) կամ արհեստական միջամտություն (գիտակցական ներգործություն)՝ մի շարք զուգահեռ ձևերից միայն մեկը մնալու համար, երբ դեռևս տերմինային անվանումների մի քանի ձևեր կիրառվում են կողք կողքի¹⁵: Չնայած այս թեզի ճշտությանը, այնուամենայնիվ, լեզվում գոյություն ունեն նաև այլ պատճառներ, որոնք նպաստում են տերմինային զուգաձևերի առաջացմանը: Այս երևույթի առկայությունը և նրա տարածվածությունը ժամանակակից հայոց լեզվում պետք է բացատրել ամենից առաջ երկու հիմնական պատճառով.

1. տարբեր մասնագետներ միմյանցից անկախ միևնույն հասկացությանը տալիս են տարբեր անվանումներ և խառնաշփոթություն ստեղծում տերմինային համակարգերում: Այսպես, апогей աստղագիտական տերմինը թարգմանում են հեռակետ, վերճակետ, գագաթնակետ, անասնարուծական резистентность, жирность, мелкокостность, экстерьер տերմինները՝ դիմացկունություն — դիմադրողականություն, մաքրություն — թուլություն — ուկրադիտություն — աղիքապակություն, գիրություն — չաղություն — յուպալիություն, արտատեսuf — արտակազմվածof, простой, упор, натяжение, охлаждение ավտոմոբիլային տերմինները՝ պարապուրդ — կանգուրդ, հեռակ — հեցուկ, ձգում — պրկում, հովացում — պաղեցում, аномалия, интервал, абстиненция, извращение ֆիզիոլոգիական տերմինները՝ անկանոնություն — արատ —

անումալիա, միջադադար—ինտերվալ, ժուժկալություն—ինֆեազսպում, խեղաթյուրում—աղավաղում և այլն:

2. Բանասիրական բնույթի բառարաններում շատ հաճախ մեկ հասկացության համար տրվում են մի քանի ձևեր: Այս առումով հատկապես պետք է նշել, որ թարգմանական և բացատրական բառարաններում մեկ հասկացության համար տրվում են հնարավորին չափ շատ ձևեր, ընտրությունը թողնելով բառարանից օգտվողին: Ահա մի քանի օրինակներ ակադ. Ա. Ղարիբյանի «Ռուս-հայերեն» բառարանից՝

авария—վթարանք, վթարում, վնասվածք

акклиматизация—կլիմայավարժում, կլիմայավարժվելը, կլիմայավարժեցում, օդընտելացում, օդընտելացնելը, ակլիմատիզացիա

авиатрасса—օդային ուղի, օդագնացական ուղի

аморализм—ամորալիզմ, բարոյազանցություն, հրաժարում բարոյական սկզբունքներից

аварийность—վթարայնություն, ավարիականություն, վթարումների առկայություն

авиапочта—ավիափոստ, օդային փոստ

авантюрист—արկածախնդիր, արկածներ որոնող, բախտախնդիր, ավանտյուրիստ

газификация—գազիֆիկացում, գազիֆիկացնելը, գազ դարձնելը, գազացում, գազարտադրելը

генетик—գենետիկ, գենետիկայի մասնագետ, ծագումնաբան

гидрогенератор—ջրային էլեկտրագեներատոր, ջրագեներատոր

гипотетичность—վարկածայնություն, ենթադրականություն, հիպոթետիկություն

гипотония—հիպոտոնիա, թերլարում, արյան ցածր ճնշում, թերճնշություն և այլն:

Թարգմանական և բացատրական բնույթի բառարաններին բնորոշ վերոհիշյալ հատկանիշը չպետք է արտացոլվի մասնագիտական բնույթի բառարաններում. այնտեղ պետք է տալ միայն մի քանի ձևերից արդեն ընտրված, տվյալ բնագավառում կիրառվող կամ հանձնարարելի տերմինը: Ոչ հանձնարարելի ձևերը չպետք է տալ, իսկ տալու դեպքում էլ պետք է խիստ հետևողական լինել նշումների հարցում: Ահա թե ինչու մասնագիտական բնույթի շատ բառարաններում առկա թերությունները նպաստում են ոչ միայն տերմինային համանիշ զուգաձևերի պահպանմանը, այլև սխալ ձևերի տարածմանը, որոնք տերմինային արժեք չունեն:

Բերենք մի քանի բնորոշ թերություններ, որոնցից զերծ չեն վերջերս հրատարակված մասնագիտական մի քանի բառարաններ¹⁶:

1) Մեկ հասկացութեան համար տրվում են շատ ձևեր, ինչպես՝
мимикрия—ընդօրինակություն, տեսանմանվողություն, միմիկրիա
скот—տավար, անասուն
аутолиз—ինքնալուծում, ինքնաքայքայում
абсорбция—աբսորբցիա, ներծծում, կլանում
дача—տաժֆ, բաժին, կերաբաժին:

2) Մեկ հասկացութեան համար օտար մեկ տերմինի դիմաց տրվում
են իմաստային ոչ համարժեք, հաճախ նույնիսկ սխալ ձևեր՝

мех—մուշտակ, մորթի
мешалка—խառնվածֆ, խառնավեր
молочность—կաթնատվություն, կաթնոտություն
маслобойня—ծիրանանֆ, ձիթագործարան
плодовитость—պտղառատություն, պտղատվություն
линька—մազափոխություն, փետրափոխություն
загон—շրջափակված արոտակտար, արոտամաս, շափար:

3) Կարճ ճիշտ ձևի կողքին հաճախ տրվում են երկար, անբարե-
հնչյուն ձևեր՝

дипсомания—խմելամոլություն, հարբեցողամոլություն
отруб—մսեղիֆանաված, մսեղիֆամաս, խոտոց:

4) Տերմինի կողքին երբեմն անհարկի տրվում են նրբիմաստներ
արտահայտող և ոճական տարբեր կիրառություն ունեցող ձևեր՝

жажда—ծարավ, պապակ
морда—դունչ, ռեխ, մուր
шея—վիզ, պարանոց:

5) Տերմինային համակարգում արդեն առկա միաբառ տերմինի
կողքին տրվում են բացատրական, նկարագրական ձևեր, ինչպես՝

кардиограмма—սրտագրառում, սրտի զարկերի կորագիծը
выживание—ապրելը, կենդանի մնալը
инкубаторий—նախանառան, ինկուբատորների տեղադրման շենֆ
обработка черновая—թերամշակում, կոպիտ մշակում
торможение неполное—թերադադար, ոչ լրիվ արգելում
ваготомия—վաղուսահատում, թափառող նյարդի հատում
неполнота сгорания—թերայրում, ոչ լրիվ այրում և այլն:

Կան միևնույն հասկացությանը տրվող տարբեր անվանումներ,
որոնք հակադրվում են իրենց կիրառելիությանը և ոչ միշտ են հավասա-
րապես հանդես գալիս տերմինային արժեքով: Եթե զուգահեռ ձևերից
մեկն օգտագործվում է գիտական լեզվում, մյուսը հանրամատչելի
գրականության մեջ կամ գեղարվեստական խոսքում՝ արտահայտելով
ոճական զանազան երանգներ, ապա վերջին դեպքում մենք գործ ունենք

ոչ տերմինի հետ, օրինակ՝ հեռուստացույց—երկնագույն էկրան միավոր-
ներից երկրորդը չի կարելի տերմին համարել: Հասկանալի է, որ մաս-
նագիտական բառարաններում նման ձևերը չպետք է տալ: Իսկ ինչպե՞ս
վարվել բացարձակ համանիշների կամ նույնանիշների դեպքում, ինչ-
պե՞ս դրանք ներառել բացատրական բառարաններում: Հայտնվել է
այն կարծիքը, թե օբյեկտիվ սկզբունք կարելի է համարել այն, երբ բա-
ցատրական բառարաններում բառի բացատրության փոխարեն տրվում է
նույնն է նշումը և հղվում մի այլ բառի, այսինքն, երբ երկու տարբեր
բառերի տրվում է նույն բացատրությունը: Եթե նույնն է նշումը այլևս
չի համապատասխանում միևնույն հասկացությանը, ապա կարելի է
մտածել տվյալ համանշային շարքի տրոհման կամ ապահամանշացման
մասին⁴⁷:

Ուրեմն, ամեն դեպքում բացատրության ընթացքում պետք է ուշա-
դրություն դարձնել համաժամանակյա և տարաժամանակյա համանշու-
թյան երևույթների առկայությանը և կոնկրետ դեպքում դանազանել
դրանք:

Հաճախ ինչպես մասնագիտական, այնպես էլ բանասիրական կամ
թարգմանական բնույթի բառարաններում հանձնարարելի է համարվում
այն տերմինը, որը դրվում է սկզբում, թեև հատուկ նշումով չի առանձ-
նացվում: Բայց, եթե այդ թույլատրելի է երկրորդ տիպի բառարանների
համար, ապա մասնագիտականում դրանք պարտադիր պետք է կա՞մ
նշվեն, կա՞մ տրվեն նախօրոք ընտրված հանձնարարելիները: Երբեմն
լինում է նաև հակառակը. բառարանում մտցվում է հանձնարարելին,
բայց գիտական տեքստում ավելի հաճախակի է կիրառվում այն տեր-
մինը, որը բառարանում տրվում է հանձնարարվողից հետո: Այս հար-
ցում հետևողական լինելն անհրաժեշտություն է:

Եթե տերմին համանիշներից մեկը դուրս է գալիս տերմինային
գործառության շրջանակներից կամ դառնում է ընդհանուր գործածական
բառ, ապա այդ դեպքում ևս կարելի է խոսել տերմինային համանշա-
յին շարքի քայքայման կամ ապահամանշացման մասին: Այդպիսիք են
նաև այն տերմինները, որոնք արդեն տեղ չեն գտնում համապատաս-
խան մասնագիտական գրականության մեջ, թեև ներառված են թարգ-
մանական և բացատրական բնույթի բառարաններում: Կարճ ասած, եթե
մի քանի տասնյակ տարիներ առաջ նման տերմինները համանշային
շարք էին կազմում, ապա այժմ դրանք նման հարաբերություններ չեն
արտահայտում:

Ուրեմն՝ զուգահեռ տերմինների առատությունը մեր լեզվում, որոն-
ցից միայն մի մասն է հանդես գալիս համանշային հարաբերությամբ,
ոչ միայն հաստատում է այդ երևույթի առկայությունը լեզվում, այլև

համանիշ ձևերի միջև եղած պայքարը, մրցակցությունը, այդ շարքերի քայքայումը և վերանայելու ձգտումը:

Այսպիսով, վերը շարադրածից կարելի է հանգել հետևյալին. ընդհանուր գործածական բառերը և տերմինները (վերջիններս իբրև գիտական հասկացություն նշաններ) կարող են արտահայտել համանշային հարաբերություններ: Ընդհանուր գործածական բառերին ավելի շատ բնորոշ իմաստային այս կարգը ոչ միշտ է տարածվում տերմինների վրա: Գիտական տարբեր համակարգերի պատկանող հայերենի զուգահեռ գործածություն ունեցող տերմինների քննությունը թույլ է տալիս ասելու, որ ընդհանուր գործածական բառերը և համանիշ տերմիններն ուղեկցվում են որոշակի տարբերություններով և ընդհանրություններով:

1. Եթե ընդհանուր գործածական բառերով կազմված համանշային շարքերը մեծ մասամբ բազմաճյուղյա են, և դրանց մեջ կարելի է առանձնացնել կենտրոնական բառը կամ հիմնաբառը, որի շուրջ դասավորվում են մնացած համանիշները, ապա տերմինային համանշային շարքերը մեծ մասամբ երկանդամ են, իսկ բազմաճյուղյան շարքում հնարավոր է առանձնացնել հիմնաբառը:

2. Համանիշ բառերը որոշ դեպքերում կարող են գործածվել միևնույն նախադասության մեջ՝ առանց նախադասության իմաստը փոխելու, ընդ որում շատ անգամ թեև համանիշներն արտահայտում են իմաստային նրբերանգներ, բայց դրանք կարող են խոսքի մեջ չիրացվել և արտահայտել միևնույն իմաստը: Որքան համանիշներն արտահայտում են մոտ իմաստներ, այնքան նրանց փոխադարձ փոխարինելությունը հնարավոր է և ընդհակառակն, այդ հատկանիշն ավելի շատ է տարածվում համանիշ տերմինների վրա, քանի որ որքան բառերը չեղոք են ոճական առումով (իսկ այդ հատկանիշը պարտադիր է տերմինի համար), այնքան նրանց փոխադարձ փոխարինելության հընարավորությունները շատ են: Եթե ընդհանուր գործածական համանիշ բառերի փոխակերպման ժամանակ առաջանում են հուզաարտահայտչական զանազան նրբերանգներ (ավելանում կամ պակասում), այլև ոճական բնույթի տարբերություններ, ապա համանիշ տերմինների համար դրանք բացառված են: Եթե համանիշ բառերի փոխադարձ փոխարինելության ժամանակ էական դեր է խաղում նրանց բազմիմաստությունը, քանի որ հաճախ լինում է ոչ լրիվ փոխարինելություն՝ կապված բազմիմաստ բառի տարբեր իմաստների անհամապատասխանության հետ (համանիշները մեկ իմաստով կարող են փոխարինել, մյուս իմաստով՝ չփոխարինել)⁴⁸, ապա տերմինի դեպքում

այս հատկանիշը պակաս կարևոր է դառնում, քանի որ մենիմաստությունը տերմինի կարևոր նախապայմաններից մեկն է։ Զուգահեռ գործածություն ունեցող տերմիններից գրեթե լրիվ կերպով փոխադարձ փոխարինելության են ենթարկվում տարբերակները, բացարձակ համանիշները կամ նույնանիշները, համարժեքները, տերմին-համանիշները փոխադարձ փոխարինելության են ենթարկվում համեմատաբար ավելի պակաս շահով։

3. Եթե ընդհանուր գործածական բառերի համանշային շարքերը բառային կապակցելիության ընդհանրությունների հետ մեկտեղ հանդես են բերում նաև անհամապատասխանություններ և տարբերություններ, և դրանք հատկապես արտահայտվում են համանշային շարքի հիմնաբառի նկատմամբ ունեցած իրենց մերձավորությամբ (մերձավոր համանիշներն ավելի շատ ունեն կապակցելիության ընդհանրություններ, հեռավորները՝ տարբերություններ), ապա տերմին-համանիշները գրեթե ունեն հավասար կապակցելիություն։

4. Հայտնի է, որ բառային համանշության համար կարևոր նախապայման է նրա քերականական կարգը. համանիշ բառերը միևնույն քերականական արժեք ունեցող միավորներ են (իհարկե տարբերությունները կարող են արտահայտվել մեծ մասամբ կրկնակի խոսքի մասային արժեք ունեցող միավորների հարաբերության ժամանակ), այսինքն՝ գրեթե միշտ պատկանում են միևնույն խոսքի մասին։ Այս հատկանիշն ընդհանուր է նաև համանիշ տերմինների համար։

Համանիշ տերմինների և ընդհանուր գործածական բառերի որոշակի տարբերությունները և ընդհանրությունները կապվում են նաև նրանց առաջացման հետ, այսպես. բառային համանիշների առաջացումը շատ ընդհանրություններ ունի տերմինային համանիշների առաջացման աղբյուրների հետ։ Տերմինների առաջացման աղբյուրները փաստորեն զուգադիպում են հայոց լեզվի բառային կազմի հարստացման ներքին (բառակազմություն, գրաբար, արևմտահայերեն) և արտաքին (իմաստային պատճենումներ, փոխառություններ) աղբյուրներին։ Համանիշ տերմինների առաջացման հիմնական տարբերությունները ընդհանուր գործածական բառերից հետևյալներն են.

ա) Համանշային շարքերի ընդլայնումը, որը տեղի է ունենում բազմիմաստ բառի իմաստների հաշվին, գրեթե բնորոշ չէ գիտության լեզվին, մինչդեռ այս եղանակը ընդհանուր գործածական բառերի համար համանշային շարքերի հարստացման աղբյուր է։

բ) Գիտության լեզվի համանիշների շարքում համեմատաբար ավելի շատ են համարմատ և բառակազմության միջոցով առաջացած տերմինները։

զ) Բարբառներից եկող տերմինները շնչին քանակ են կազմում համանիշ տերմինների շարքում: Այդ կարելի է բացատրել ժամանակակից գիտության և տեխնիկայի բուռն զարգացմամբ և գիտահասարակական բնագավառներում հին հասկացությունների համապատասխան տերմինների աստիճանական նվազմամբ և արտամղմամբ:

ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ

ԻՄԱՍՏԻ ԵՎ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ
ԼԵԶՎԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Իմաստի հասկացությունը համագիտական է (общенаучное). այն հետաքրքրում է թե՛ փիլիսոփաներին, թե՛ հոգեբաններին, թե՛ մաթեմատիկոսներին ու կիրառական տիկներին, թե՛ տրամաբաններին ու լեզվաբաններին, թե՛ գրականագետներին և թե՛ նշանագիտությամբ զբաղվող մասնագետներին: Ինչպես գտնում են որոշ լեզվաբաններ, ժամանակակից գիտության մեջ առանձնացվում է երեք տիպի իմաստ. ընդհանուր, տրամաբանական և լեզվաբանական⁴⁹, որոնք թեև փոխադարձաբար կապված են միմյանց հետ, բայց մարդկային ճանաչողության հայեցակետերով տարբերվում են: Լեզվաբանական տեսակետից ուսումնասիրման համար առաջին հերթին անհրաժեշտ է բացահայտել, թե ինչ է լեզվական իմաստը, որոնք են նրա բնորոշ հատկանիշները, ինչ տատեսական կարող է ունենալ և ինչ հարաբերություններ ունի տրամաբանական իմաստի հետ: Այս վերջինը հատկապես կարևոր է տերմինների իմաստները որոշելու և ճշգրտելու տեսակետից:

Բառի իմաստների որոշումն ու դրանց հետազոտությունը ժամանակակից լեզվաբանության կարևորագույն խնդիրներից են: Այս առումով հատկապես կարևոր է բառի ընդհանուր իմաստ հասկացության բացահայտումը:

Սովորաբար ընդհանուր իմաստ ասելով հասկանում են սեռային հասկացությունն արտահայտող միավորի հավաքական հատկանիշների ամբողջությունը: Ընդհանուր իմաստը հանդես է գալիս իբրև կարգային իմաստ, այսինքն՝ այնպիսին, որը բնորոշում է լեզվական միավորի որոշակի տիպերը և նրանց կարգերը⁵⁰: Կարգային կարող են լինել քերականական և բառական իմաստները, այնուհետև նրանց ավելի փոքր ստորաբաժանումները (ձևաբանական, շարահյուսական, բառակազմական և այլն): Օրինակ՝ առաջագրածախս բառն ունի գոյականին հատուկ հատկանիշներ՝ իրի առում, հոլովի, թվի, վերացականի կարգ,

կարող է կապակցվել այնպիսի միավորների հետ, որոնք լայն կիրառություն ունեն տնտեսագիտության մեջ և այլն: Այն ունի նաև իր բառակազմական կարգային իմաստը. երկբաղադրիչ իսկական բարդություն է, իբրև տերմին կարող է շունենալ իր համանիշը և այլն: Ուրեմն՝ բառն իր մեջ ամփոփում է տարաբնույթ իմաստներ, որոնք իրենց հերթին կարող են ստորաբաժանվել ենթախմբերի: Ահա թե ինչու լեզվում գոյություն ունեն տարբեր բնույթի բազմիմաստ բառեր, որոնց կանոնադրականք քիչ հետո:

Բազմիմաստությունն ընդունված է դասել լեզվական ընդհանրություների (ունիվերսալիաների) թվին: Այն պատկանում է լեզվի արմատական կառուցվածքին: Ինչպես մեկնաբանում է Ուլմանը, այլ կերպ լինել չէր կարող, հակառակ դեպքում մենք ստիպված կլինեինք բառերի մի վիթխարի պաշար մտապահել մեր ուղեղում՝ առանձին իրերի և երևույթների անվանման համար: Այդ կհանգեցներ այն բանին, որ լեզվում չէին լինի փոխաբերություններ, և լեզուն մեծ չափով զրկված կլիներ արտահայտչականությունից և ճկունությունից⁵¹: Այս առումով Ս. Ուլմանը վկայակոչում է փիլիսոփա Ու. Մ. Ուրբանի այն միտքը, թե բառային նշանի այդ հարաբերական երկակիությունը իմաստային հատկանիշների տարբերակման հիմքն է: Գիտության և տեխնիկայի բոլոր դարգացումը, քաղաքակրթության առաջընթացը հանգեցնում են ոչ միայն նոր բառերի, այլև նոր իմաստների առաջացման: Այս առումով, ընդհանրապես, բառային բազմիմաստության քննությունը ըստ ամենայնի չի կատարվել թե՛ արտասահմանյան, թե՛ սովետական լեզվաբանության մեջ: Կարելի է վեր հանել այդ երևույթի էական կողմերը՝ կապված ժողովուրդների մշակութային առաջընթացի, սոցիալական և քաղաքական կյանքի, ընդհանրապես արտալեզվական գործոնների հետ:

Հայտնի է, որ բազմիմաստությունն ավելի շատ բնորոշ է ընդհանուր իմաստ ունեցող բառերին, որոնց իմաստները հաճախ փոփոխվում են համապատասխան համատեքստերում և ավելի քիչ՝ մասնագիտական բառերին, որոնց իմաստն ավելի կայուն է փոփոխությունների նկատմամբ: Իսկ շատ հաճախ էլ նույնիսկ դժվար է լինում կատարել իմաստների սահմանազատում, էլ չենք խոսում այն մասին, որ շատ դեպքերում միևնույն ժամանակաընթացքում լույս տեսած նույն բնույթի բառարաններում բազմիմաստ բառերի իմաստների սահմանազատումը կրում է կամայական բնույթ՝ կախված բառարանագրի սուբյեկտիվ մոտեցումից, լեզվական հոտառությունից, ձեռքի տակ ունեցած փաստական նյութից: Իհարկե, որոշ դեպքերում այդ կարող է պայմանավորված լինել նաև համապատասխան բառարանների ծավալով և ընդգրկվածությամբ: Այս անհամապատասխանությունը ավելի հետաքրքրական բը-

նույթ է կրում տարբեր լեզուներում: Պատահական չէ, որ շատ լեզվաբաններ առաջ են քաշում բառի բազմիմաստության սահմանների զուգադրական համեմատության քննության անհրաժեշտությունը տարբեր լեզուներում⁵²:

Ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից ըմբռնմամբ, բազմիմաստ են այն բառերը, որոնք արտահայտում են մեկից ավելի իմաստներ: Իսկ ինչպե՞ս սահմանադատել բառի իմաստներն իրարից, և որքա՞ն իմաստներ ունի կոնկրետ բառը: Հայտնի է, որ բազմիմաստ բառը դիտվում է որպես այնպիսի միավոր, որի կազմում կարելի է առանձնացնել բառիմաստային մի քանի տարբերակներ⁵³, այսինքն, իմաստային մակարդակում՝ բառույթում ձևը՝ նշանակիչը և բովանդակությունը՝ նշանակելին, համապատասխանում են, իսկ բառի մեջ կարելի է առանձնացնել մի քանի տարբեր միավորների ձև և բովանդակություն:

Յուրաքանչյուր լեզվում կան այնպիսի բառույթներ, որոնք թեև միատեսակ արտասանություն ունեն, բայց համաժամանակյա մոտեցմամբ լեզվի իմաստային մակարդակում տարբեր դեր են կատարում խոսողի կամ գրողի համար: Հնարավոր է, որ համանման հնչող բառույթները, որոնք ծագումնաբանորեն կապվում են, իմաստային առումով հեռու լինեն միմյանցից, իսկ տարբեր հնչվող բառույթները՝ ավելի մոտ, մինչև իսկ արտահայտեն նույն իմաստները: Օրինակ՝ հին հայերենում շատ գործածական դիվան՝ բառի դանլին, արժուճի սրան, առյան իմաստները ծագումնաբանորեն կապվում են նաև այդ բառի արխիվ, առյան, դատարան, խորհրդարան, բանաստեղծական երգերի և տաղերի ժողովածու իմաստների հետ⁵⁴: Հետագայում այս իմաստների կապը թուլանում է, և դրանցից մի քանիսը (հատկապես՝ դիվան—արխիվ, դատարան և բանաստեղծական երկերի ժողովածու) վերածվել են անկախ բառերի. «Արքունիքում պահվում էր հատուկ դիվան՝ արխիվ», «Այն օրը Շապուհի դիվանի ամբողջ հրապարակը լի էր բաղմությամբ» (Բ, հ. 7, 1956. 28): «Երեկ ստացա Զեյնեբ խանումի դիվանը..., սիրուն գազելներ կան» (ԱԻ): Այժմ այս բառերը հնացած են ժամանակակից հայերենում, թեև, ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, դրանք շատ են գործածվում պատմական անցյալը պատկերող ստեղծագործություններում: Իսկ արժա—քազավոր, արժայադուստր—քազադուստր, արժայազն—արժայորդի բառերը, ընդհակառակն, տարահունչ միավորներ են և արտահայտում են նույն իմաստները:

Բազմիմաստություն հասկացության համար էական է ոչ միայն այն, որ միևնույն հնչումով կարելի է արտահայտել տարբեր իմաստներ, այլև այն, որ այդ իմաստները տեղադրվում և դիտվում են մեկ միավորի սահմանում, մեկ բառի շրջանակում: Ահա թե ինչու միևնույն

բառի համարժեքներն իրենց իմաստային տարողությամբ կարող են չհամընկնել տարբեր լեզուներում:

Բառը նոր իմաստ է ձեռք բերում այն ժամանակ, երբ արտահայտում է նոր հասկացություն: Որքան հարուստ է միտքը, նույնքան այն իր արտացոլումը պետք է գտնի լեզվում: Բազմիմաստությունը, ինչպես գտնում է Կասարեսը, հետևանք է այն անխուսափելի համամասնության, որ գոյություն ունի խոսքի նշանների թվի և հսկայական թվով հասկացությունների միջև, որոնք իրենց արտահայտությունն են գտնում լեզվում⁵⁵:

Բառի իմաստների առարկայական համապատասխանությունը ոչ միշտ կարող է նրա իմաստների սահմանադատման հիմք հանդիսանալ: Շատ հաճախ բառի մեկ իմաստին կարող են համապատասխանել տարբեր առարկաներ կամ միևնույն առարկայի տարբեր տեսակներ, օրինակ՝ կաճույժ «կահավորանքի առարկաներ, կահկարասի» իմաստին կարող են համապատասխանել խոնանոցային, ննջարանային, աշխատասենյակի և այլ տիպի կահավորանքի իրեր, բայց այս բոլոր դեպքերում մենք գործ կունենանք այդ բառի մեկ իմաստի հետ: Ահա թե ինչու նոր երևույթի կամ նոր հասկացության առաջացումը կարող է զուգակցվել բառի նոր իմաստի առաջացմամբ, եթե այն ձևավորվում, ամրանում և կայունանում է լեզվի համակարգում:

Տերմինին հատկացվող կարևոր պահանջներից մեկը մենիմաստությունն է կամ բազմիմաստությունից զուրկ լինելը⁵⁶: Շատ մասնագետներ տերմինի բազմիմաստությունը համարում են նրա գլխավոր թերություններից մեկը, որ բազմիմաստությունը խառնաշփոթություն է ստեղծում տերմինային համակարգերում և խանգարում անհրաժեշտ և ճշգրիտ ինֆորմացիային⁵⁷: Այս հարցի կարևորությունն իրոք մեծ է, և պատահական չէ, որ դրան նվիրվել է հատուկ բանավեճ⁵⁸: Ոմանք տերմինային բազմիմաստությունը դիտում են իբրև սովորական երևույթ, պատճառաբանելով, որ դրա առկայության փաստերը բավական շատ են յուրաքանչյուր լեզվում, որ տերմինի միանշանակության մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ խոսքը վերաբերի զարգացած, իդեալական վիճակի տերմինահամակարգերի, մասնավոր, որ շատ լեզվաբաններ տերմինները համարում են ոչ թե ինչ-որ հատուկ բառեր, այլ հատուկ գործառություն ունեցող բառային միավորներ⁵⁹, որոնց համար նույնպես կարող են բնական լինել լեզվի մնացած բառաիմաստային խմբերի յուրահատկությունները: Նման մասնագետների կարծիքով, տերմինը այնպիսի բառային միավոր է, որը նույնպես, ինչպես և մընացած բառային միավորները, ենթարկվում է լեզվի հատուկ օրենքներին, գործառվում է լեզվական նշանին հատուկ օրինաչափություն:

ներով, մասնավորապես բազմիմաստութեամբ, որը բխում է լեզվի պո-
տենցիալ հնարավորություններից և լեզվական նշանների տնտեսման
անհրաժեշտությունից⁶⁰: Արդ, քանի որ տերմինային բազմիմաստու-
թյունը շարունակում է տեղիք տալ վեճերի և տարակարծությունների,
ուստի այդ հարցի վերաբերյալ արտահայտած հիմնական կարծիքները
փորձենք խմբավորել հետևյալ կերպ. որոշ լեզվաբաններ ա) բազմ-
իմաստությունը դասում են տերմինաբանության հիմնական թերություն-
ների շարքին կամ մենիմաստությունը համարում են տերմինի լեզվա-
բանական հիմնական և կարևոր հատկանիշը⁶¹, բ) բազմիմաստությունը
համարում են տերմինահամակարգերի ձևավորման վաղ շրջանին բնորոշ
և բնական երևույթ⁶²:

Տարբեր տերմինահամակարգերում առկա բազմիմաստության դրսե-
վորումները մեծ մասամբ դիտվում են նաև որպես նշանային համա-
կարգերի չկարգավորվածության հետևանք, երբ մեկ նշանակիչին չի
համապատասխանում մեկ նշանակելի: Բայց ինչպես ցույց են տալիս
կոնկրետ օրինակները, տերմինահամակարգերը, օգտագործելով լեզվա-
կան նշանը, գործառում են այն բնական լեզվին հատուկ օրենքներով,
պահպանելով լեզվական նշանին բնորոշ հատկանիշները և սկզբունք-
ները: Ահա թե ինչու տերմինի բազմիմաստությունը մեծ մասամբ իրաց-
վում է գրեթե որոշակի շրջանակներում, որոշակի պայմաններում, ո-
րոնց մասին հիշատակում է ակադեմիկոս Լոտեն, հատկապես նկատի
ունենալով այն դեպքերը, երբ որոշ տերմիններ, տվյալ տերմինահամա-
կարգերում հաստատված իմաստից բացի կիրառվում են նաև այլ ի-
մաստներով, ինչպես օրինակ, հարակից գիտություններում դրսևորվող
իմաստները⁶³:

Խոսելով բազմիմաստության մասին ընդհանրապես, շատ մասնա-
գետներ առաջ են քաշում իմաստների իրացման, համատեքստի փոխ-
հարաբերության հարցը: Հայտնի է, որ տերմինագիտության մեջ ընդուն-
ված է այն կարծիքը, որ տերմինի իմաստը հասկանալի պետք է լինի
անկախ համատեքստից, տերմինը պետք է լինի մենիմաստ, և տվյալ
իմաստը չպետք է կախված լինի տեքստային գործածությունից: Եթե
լեզվի սովորական բառերի համար համատեքստային իմաստներն ան-
հրաժեշտ են, հաճախ նույնիսկ պարտադիր, ապա տերմինը պետք է
զուրկ լինի այս հատկանիշներից: Ահա թե ինչու տերմինի բազմիմաս-
տությունը դիտվում է իբրև ոչ ցանկալի և անընդունելի երևույթ, որը
խճողում է նրա իմաստը, ընթերցողի և ընկալողի համար առաջացնում
դժվարություն և երկիմաստություն: Այս առումով ցանկալի է, որ յուրա-
քանչյուր տերմին լինի մենիմաստ:

Այլ է ընդհանուր գործածության բառերի իմաստների իրացման հարցը: Բառի տարբեր իմաստներն իրենց բազմազան կիրառություններով հանդես են գալիս կոնկրետ խոսքային իրադրության մեջ՝ տարբեր բնույթի համատեքստերում, այդ իսկ պատճառով դրանք կոնկրետացվում են, գրկվում բազմանշանակ լինելուց, դառնում մենիմաստ, ծառայելով իբրև կոնկրետ բովանդակություն արտահայտող հաղորդման միջոցների:

Բառական տարբեր իմաստների իրացումը համատեքստում կարող է դրսևորվել տարբեր ձևերով, տարբեր եղանակներով, զանազան պատճառաբանվածությամբ, կախված այն բանից, թե ինչպիսի ինֆորմացիա է հաղորդվում, ինչ ոճի տեքստ է, ինչ վերաբերմունք ունի խոսողը կամ գրողը և այլն:

Հասկանալի է, որ այս հատկանիշները ոչ միայն չեն կարող հավասարապես էական լինել նաև տերմինների համար, այլև մինչև իսկ որոշ հատկանիշներ (օր. ոճի հատկանիշը, խոսքի վերաբերմունքը) բացառվում են տերմինի իմաստների կիրառության ժամանակ:

ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ԵՎ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Բառական համանունության և բաղմիմաստության սահմանների որոշման սկզբունքները ևս վերջնականապես ճշտված չեն, թեև այս հարցին նվիրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ՝ թե՛ սովետական, թե՛ արտասահմանյան գրականության մեջ: Այդ խնդիրը այսօր էլ ոչ միայն բառագիտության, այլև ընդհանուր լեզվաբանության վիճելի և տարակարծությունների տեղիք տվող հարցերից է: Այս հանգամանքն իր արտացոլումն է գտնում նաև գործնականում, հատկապես բառարանագրության մեջ, երբ տարբեր բնույթի, իսկ երբեմն նաև միևնույն բնույթի բառարաններում (թե՛ հայերեն, թե՛ ռուսաց և օտար լեզուներում) բաղմիմաստության և համանունության սահմանազատումը նույն սկզբունքով չի կատարվում: Մի բառարանում որոշ նշանների առկայությունը բառապաշարի համակարգում դիտվում է իբրև համանունություն, մի այլ բառարանում՝ բաղմիմաստություն: Բերենք մի քանի բառերի օրինակներ վերջին շրջանում լույս տեսած բառարաններից⁶⁴: Այսպես՝ շուֆ բառը ուղղագրականում տրվում է իբրև համանուն, իսկ էդ. Աղայանի նշված բառարանում՝ իբրև համանուն. շուֆ₁—1. Շքեղություն, վեհություն: Շուֆ₂—Շվաք:

Ակ հնչյունակազմ ունեցող բաղմանդամ համանունական խումբը տարբեր կերպ է ներկայացվում բացատրական բառարաններում: էդ. Աղայանի բացատրականում տրվում է որպես եռանդամ համանունական խումբ: Ակ₁—1. Ջրի ակունք, 2. Աղբյուր: 3. Սնդու: 4. Փեթակի անցք: 5. Բողբոջ: 6. (գվռ.) Աչք, տեսողություն: 7. փխբ. Աղբնաղբյուր, աղբյուր: Ակ₂—1. Թանկագին քար: 2. Մատանու վրա ագուցված կամ զանազան իրերի, զարդերի և այլնի վրա ամրացված: Ակ₃—Անիվ: Լեզվի ինստիտուտի հրատարակած բացատրական բառարանում այս համանունները տրվում են որպես բառանդամ համանունական խումբ՝ ալ—թոնրի օղանցք, սնդու իմաստը դիտվում է որպես առանձին բառային միավոր և ոչ թե որպես բաղմիմաստ բառի իմաստներից մեկը: Կամ տաքու բառը Բարսեղյանի բառարանում տրվում է որպես համանուն, առանձնացնելով այդ բառի լեզվաբանական տերմինային կիրառությունն իբրև առանձին բառային միավոր. Տաքու₁—(գիտ. պտմ.) հպարդելք, Տաքու₂—(լեզվբ.) կախարդաբառ: Աղայանի բառարանում այն մատուցվում է իբրև բաղմիմաստ բառ. Տաքու—1. Նախնադարյան ժողովուրդների մոտ՝ որևէ գործողության՝ բառի՝ առարկայի և այլնի գործածության արգելք, որի խախտումը, ըստ սնոտիապաշտական պատկերացումների, պատժվում է զերբնական ուժերի կողմից: 2. փխբ. Արգելված բան. 3. փխբ. Արգելք: Կամ խոյ—ոչխարի արուն և խոյ₂ (ռազմ. պատմ.) պարսպակործան մեքենա իմաստները Բարսեղյանի բառարանում տրվում են որպես համանուններ, իսկ Աղայանի բառարանում՝ իբրև բաղմիմաստ բառի իմաստներ. նույնը նաև աղամախնձոր. Բարսեղյանի բառարանում տրվում է որպես համանուն, Աղայանի բառարանում՝ որպես բաղմիմաստ բառ՝ 1. (կղմխս.) Վահանաճառի դուրս ցցված մասը, 2. Բանանի ծառի մի տեսակը: 3. Բանան, աղամաթուղ: Նման օրինակները կարելի է շարունակել, բայց բավարարվենք այսքանով:

Հիմնական տարակարծությունները և միևնույն երևույթի նկատմամբ տարբեր մոտեցումները բխում են բառի իմաստները որպես առանձնակիություն (отдельность) և նույնություն դիտելուց, այսինքն՝ այն հանգամանքից, թե բառի իմաստային կապերը որքանով են մոտ կամ որքանով են մթագնված դիտվում: Այս երևույթը բնորոշ է շատ լեզուների, և պատահական չէ, որ որոշ մասնագետներ գտնում են, որ ռուսերենի շատ բառերի բաղմիմաստության և համանունության սահմանազատման հարցը մինչ այսօր մնում է բաց⁶⁵, թեև այս պրոբլեմով զբաղվող գրեթե բոլոր հեղինակներն էլ գտնում են, որ բառը բաղմիմաստ է, երբ նրա տարբեր իմաստներն ունեն ընդհանուր հատկություններ, իմաստային տեսակետից կապվում են, իսկ բառերը համա-

նուն են, երբ նրանք իմաստային ընդհանրությունից զրկվել են, իմաստային առումով չեն համընկնում կամ կապվում:

Տերմինային համաճեղքությունը տերմինագիտության մեջ հաճախ տարբեր կերպ է ըմբռնվում: Այդ անվան տակ մեծ մասամբ հասկանում են այն երևույթը, երբ միևնույն հնչյունակազմ ունեցող տարբեր տերմինները կիրառվում են միևնույն լեզվի տարբեր տերմինահամակարգերում: Ոմանք հակված են կարծելու, թե նման դեպքերում միևնույն տերմինը կիրառվում է տարբեր գիտությունների բնագավառում⁶⁰: Բայց պետք է նկատի ունենալ, որ ինչպես բառագիտության, այնպես էլ տերմինաբանության մեջ մենք գործ ունենք բառական միանգամայն անկախ, ինքնուրույն միավորների, միանգամայն տարբեր իմաստների հետ, որոնց համար ընդհանուր է այդ միավորների սոսկ արտաքին տեսքը՝ հնչյունական և գրային միևնույն ձևը: Տերմինային համանունություն մասին լավ պատկերացում կազմելու համար առաջին հերթին պետք է դասդասել լեզվի այն համանունական խմբերը, որոնց մեկ կամ երկու անդամները տերմինային արժեք ունեցող միավոր են: Այս առումով ժամանակակից հայերենի համանունները կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

1) Ընդհանուր և տերմինային համաճեղքներ. սրանց անդամներից մեկը կամ երկուսն ընդհանուր գործածական բառեր են, մյուսը՝ գիտության որևէ բնագավառում գործառնող տերմին, ինչպես. բևեռ₁—մեխ, սեպ, բևեռ₂—(աշխարհգր.) երկրի պտույտի երևակայական առանցքի և երկրի մակերևույթի հատման կետը, ակնաբլկ₁—թեթևակի, թուրքիկ նայվածք, ակնաբլկ₂—(գրկն.) վիպերգական գրական ժանր, երբ ճշգրտորեն պատկերվում են իրական անձեր, իրադարձություններ, նոթեր₁—դրժ-գոհություն կամ տխրություն արտահայտող կնճիռներ, նոթեր₂—(գրկն.) գրի առնված դիտողություններ, պատում₁—պատելը, պատվելը, պատում₂—(գրկն.)—ըրույց, գրավոր կամ բանավոր պատմություն, ինչպես նաև՝ վեպի, զրույցի տարբերակ, կապուտ₁—կանացի տնային զգեստ, կապուտ₂—(տեխ.) տարբեր կարգի մեխանիզմների, մեքենաների ծալովի ծածկոց, կափարիչ, կոտորակ₁—կապարե մանրագնդակ, կոտորակ₂—(մաթ.) ամբողջ քանակի որևէ մասը և այլն:

2) Միջգիտական տերմինային համաճեղքներ. սրանք թեև գործածական են նույն լեզվում, բայց պատկանում են գիտության տարբեր տերմինահամակարգերի: Նման տերմինները քանակապես շատ են նաև հայերենում, դրանցից են, օրինակ՝ ասպիդ₁ (կենդր.) քարը, իժ, ասպիդ₂—(հնք.) շերտաբար, թերթաբար, ավիզո₂—(ռազմ.) հետախուզանավ, ավիզո—(ֆին.) ծանուցագիր, կառարակա₁—(բժշկ.) ոսպնյակի

մթազնում, սե ջուր (աշքի հիվանդություն), կատարակտ₂—(տեխ.) մեխանիկական տատանումները թուլացնող կամ մեղմացնող հարմարանք, կոռնետ₁—(պատմ., ռազմ.) հեծելազորի և սահմանապահ զորքի սպայական առաջին աստիճանը ցարական Ռուսաստանում, կոռնետ₂—(երաժշտ.) պղնձն փողային երաժշտական գործիք, վիրաժ₁—(լսնկրչ.) երանգիչ, աղային լուծույթ, որի մեջ ընկղմում են լուսանկարը՝ գունավորելու համար, վիրաժ₂—(սպորտ.) թեքուղի, պարտեռ₁—(թատ.) թատրոնի դահլիճի այն մասը, որ տեղադրված է բեմին զուգահեռ՝ ներքևի մասում, պարտեռ₂—(սպորտ.) ըմբշամարտում ծնկաշոք դրություն և այլն:

Միջգիտական տերմինային համանունների շարքում հատկապես շատ են բազմիմաստ բառերի իմաստների տրոհումից առաջացած համանունները, որոնց միջև իմաստային կապերը մթազնվել են:

3) Ներհամակարգային տերմինային համաձայնեցումներ. այսպես կարելի է կոչել այն համանուն տերմինները, որոնք գրեթե հազվադեպ հանդիպում են միևնույն տերմինահամակարգերում, կամ միևնույն գիտության տարբեր ճյուղերում, օրինակ՝ ռուսերենում *нарекуе*—մակբայ և *нарекуе*—խոսվածք տերմինային համանունները կիրառվում են լեզվաբանության մեջ: Կամ հայերենում բոք—(բժշկ.) մաշկային վարակիչ հիվանդություն, բոք—(բժշկ.) ստոմատոլոգիական գործիք, սարքավորում, ռղնաճար—(բժշկ.) ողնախտավոր, ռղնաճար—(կզմխս.) ողնաշար համանունները ներհամակարգային են: Հաճախ ներհամակարգային համանուններ են առաջանում օտար տերմինների թարգմանության ժամանակ, հատկապես, երբ հաշվի չի առնվում նույն տերմինահամակարգի միևնույն հնչյունակազմ ունեցող միավորի առկայությունը: Օրինակ՝ փաստաթղթավարության մեջ հանդիպում են՝ *трактат*—պայմանագիր, *картель*—պայմանագիր, *договор*—պայմանագիր անհարկի և շփոթություն առաջացնող ձևերը:

Համանունությունն ունի իր զարգացման ներքին օրինաչափությունները, այն ևս, խոսքի մեջ չի խանգարում փոխըմբռնմանը և երկիմաստության տեղիք չի տալիս: Տերմինաբանության մեջ հատկապես վրտանգավոր է Յ-րդ տիպի՝ ներհամակարգային տերմինային համանունների առկայությունը, բայց այն էլ, ինչպես նշեցինք, շատ հազվադեպ է հանդիպում, իսկ մնացած երկու տիպերը (ընդհանուր և տերմինային համանուններ, միջգիտական համանուններ) շփոթ չեն առաջացնում, որովհետև միանգամայն տարբեր են դրանց գործառության շրջանակները:

Տերմինային բազմիմաստությունն առանձնահատկությունները ճիշտ գնահատելու, և այն բառային բազմիմաստության հետ համեմատելու համար դիտենք մի քանի այնպիսի բազմիմաստ բառերի տարողության յուրահատկությունները, որոնց բառիմաստային տարբերակներից մի քանիսն ունեն տարբեր բնույթի տերմինային կիրառություններ: Իբրև օրինակ վերցնենք աշտարակ, աստիճան և առագաստ բազմիմաստ բառերը, որոնց տերմինային և ոչ տերմինային իմաստներն արձանագրված են էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում»:

1. Աշտարակ. ի, գ. 1. Շրջանաձև քառակողմ կամ բազմակողմ բարձր ու նեղ կառուցվածք՝ որպես շինության մաս կամ առանձին կառույց: 2. (պատմ.): Նույնպիսի կառույց ամրոցների պարիսպների վրա՝ թշնամուն դիտելու և նրա դեմ կռվելու համար: 3. (ճարտրպ.): Շենքի տանիքի անկյուններում իբրև զարդ կառուցված աշտարակաձև փոքրիկ կառույց: 4. (ռազմ.): Տանկի՝ նավի զրահապատ շինվածք՝ հրանոթի համար: 5. Նույնն է՝ Պարաշյուտային աշտարակ: 6. (սպորտ.) Լողավազաններին՝ լճափին ևն կանգնեցված բարձր շինվածք, որից նետվում են ջրի մեջ: 7. (տեխ.): Զանազան մեքենաների վրա կանգնեցրած բարձր շինվածք, որի մեջ կանգնում է աշխատողն ու ղեկավարում մեքենայի աշխատանքը: 8. Տե՛ս նավակ: 2. Աստիճան. ի, գ. 1. Սանդուղքի ամեն մի ոտքը, սանդղամատ: 2. հոգն. Սանդուղք: 3. Բարձրություն, բարձր դիրք աշխատանքում՝ հասարակական կյանքում: 4. Զարգացման, շարժման՝ շարունակաբար կատարվող՝ տեղի ունեցող պրոցեսի յուրաքանչյուր մասը՝ փուլը, էտապը: 5. Որևէ բանի հաջորդական կարգերից յուրաքանչյուրը: Առաջին աստիճանի կրճաճանջան: 6. Որևէ բան բնութագրող համեմատական մեծությունը՝ մակարդակը, որևէ բանի չափը: Զարգացման ա: 7. Նույնն է՝ գիտական աստիճան: 8. (երկրչ.): Անկյան կամ աղեղի չափման միավոր=ըրջանի 1/360-ին: 9. Զերմության չափման միավոր: 10. Զերմաչափի, ծանրաչափի ևն ամեն մի բաժանմունք: 11. Հեղուկի խտության՝ սպիրտի թնդության չափման միավոր: 12. (մաթ.): Միևնույն արտադրիչների արտադրյալը: 13. Տե՛ս Համեմատությունյան աստիճաններ: 14. (հնց.) Աղգակցական մերձավորության չափը, պորտ: 15. (երաժշտ.): Հիմնական ձայնի համեմատությամբ ձայնի բարձրացման կամ իջեցման չափը: 16. (հնց.): Պաշտոնի հերթական կարգը: 17. կպրո. Չափ: 3. Առագաստ. ի, գ. 1. Վարագույր: 2. Նավի կայմին ամրացված հատուկ ձևով ամուր կտոր, որ քամու ուժով ուռչում և առաջ է մղում նավը: 3. փխր. Ամուսինների ննջարան՝ մահճակալ: 4. փխր.

Ամուսնական կյանք: 5. փխբ. Պատրվակ, քող, ծածկույթ (որնէ բան թաքցնելու համար): 6. (կզմխս.) Մարմնի մի գործարանը մյուսից բաժանող թաղանթ (վելում): 7. (բսբ.): Իգական ծաղիկների փոշու ընդունարանը: 8. (բսբ.) Փոճոկավոր պտուղների միջի թաղանթը, որ պտուղը մասերի է բաժանում: 9. (նրաւրպ.): Եռանկյունի գնդաձև կամար, որի վրա բարձրանում է քառանկյունի նախագծված շենքի գմբեթը: 10. (ննց.) Հնձանի այն մասը, որտեղ շինված է խաղող ճմլելու գուրը:

— Առագաստը պղծել, տե՛ս Ամուսնական առագաստը պղծել:

— Առագաստի գիշեր—ամուսնության առաջին գիշերը:

— Առագաստները կամ բոլոր առագաստները բացել՝ պարզել—1.

Նսվի առագաստները արձակել՝ բաց անել՝ ընթացքն արագացնելու համար: 2. Շատ արագ գնալ՝ շարժվել՝ վազել և այլն:

Համեմատելով այս երեք բառերի իմաստների ընդհանրությունները և տարբերությունները, ամենից առաջ նկատվում է, որ առաջին դեպքում (աշտարակ) բազմիմաստ բառի հիմնական իմաստը թեև տերմինային չէ, բայց կան նաև մի քանի իմաստներ, որոնք տերմինի արժեք ունեն և կիրառելի են տարբեր տերմինահամակարգերում (պտմ., ճրտրպ., ռազմ., սպորտ., տեխն.), երկրորդ դեպքում (աստիճան) շատ են բազմիմաստ բառի ընդհանուր գործածական իմաստները, բայց կան նաև տերմինային այնպիսի իմաստներ, որոնք կիրառվում են ինչպես հարակից (երկրչ., մաթ.), այնպես էլ ոչ հարակից գիտությունների տերմինահամակարգերում (երաժշտության, 15-րդ) և վերջապես 3-րդ դեպքում թեև ավելի շատ են ընդհանուր գործածություն ունեցող իմաստները, բայց կան նաև այնպիսի իմաստներ, որոնք կիրառում են միևնույն գիտությամբ տերմինահամակարգում (բուսաբանություն, 7-րդ, 8-րդ): Բառագիտական տեսակետից այստեղ կարևոր է, որ բազմիմաստ բառը պահպանում է իր բառային անկախությունը՝ իբրև տարբեր իմաստներ միավորող մեկ ամբողջություն, իսկ տերմինաբանական առումով այն, որ մեկ բառի բառիմաստային տարբերակների թվում կան նաև միևնույն և տարբեր գիտություններում գործառուղ տերմինային իմաստներ: Ելնելով դրանցից, կարող ենք տերմինային բազմիմաստությունը բաժանել 3 կարգի.

1) առաճաճակարգային բազմիմաստություն (աշտարակ),

2) հարաճաճակարգային բազմիմաստություն (աստիճան),

3) ներհամակարգային բազմիմաստություն (առագաստ)⁶⁷:

Այժմ դրանցից յուրաքանչյուրի մասին. առաջին դեպքում տերմինի բազմիմաստությունը վտանգ չի ներկայացնում, շփոթի և երկիմաստության մասին խոսք լինել չի կարող, քանի որ բազմիմաստ բառի տարբեր իմաստները կիրառվում են այնպիսի գիտություններում, որոնք

շատ հեռու են միմյանցից, երկրորդ դեպքում՝ հարակից գիտությունների շրջանակներում, որտեղ այդ կապն ավելի շոշափելի է, շփոթը՝ հնարավոր հմմտ. սուբյեկտ (փիլիսոփայություն, տրամաբանություն, իրավունք), ձևաբանություն (բուսաբանություն, կենդանաբանություն, բժշկագիտություն), վաճկ, շեշտ (լեզվաբանություն, գրականագիտություն, և այլն), երրորդ դեպքում տերմինի բազմիմաստությունը բոլորովին խրախուսելի և հանձնարարելի չէ, և պատահական չէ, որ տերմինաբանության հարցերին նվիրված աշխատություններում, երբ շոշափվում են տերմինների մենիմաստության և բազմիմաստության հարցերը, արդարացիորեն առաջին հերթին առաջ են քաշվում տերմինի հարաբերական մենիմաստության և «կարգային բազմիմաստության» (категориальная многозначность) տարբերակման անհրաժեշտությունը: Առաջին դեպքում տերմինը մենիմաստ է միայն առանձին գիտության տերմինահամակարգում և բնական է, որ այս դեպքում ոչ մի դժվարություն չի ըստեղծվում, երկրորդ դեպքում՝ տերմինի բազմիմաստությունն արտահայտվում է միևնույն կամ հարակից գիտությունների շրջանակներում, որը և ստեղծում է դժվարություն, անհստակություն, որոնք հաճախ արտահայտվում են հասկացության համապատասխան անվանումներին ոչ բնորոշ սահմանումներով, անճշգրտություններով: Ահա թե ինչու շատ լեզվաբաններ արդարացիորեն գտնում են, որ տերմինի մենիմաստության պահանջը չի կարելի հասկանալ բացարձակորեն, և ինչպես ցույց են տալիս լեզվից բերված կոնկրետ օրինակները, հնարավոր է առանձնացնել տարբեր բնույթի բազմիմաստություն, և պարտադիր չէ, որ տերմինը անպայման մենիմաստությամբ հանդես գա լեզվի ամբողջ բառապաշարի շրջանակներում: Դ. Ս. Լոտտեն տարբերում է բացարձակ և հարաբերական մենիմաստությունը, առաջինի տակ հասկանալով այն դեպքը, երբ տերմինը մենիմաստ է ողջ բառապաշարի սահմաններում, երկրորդի տակ՝ սոսկ որևէ գիտության համակարգի շրջանակներում⁶⁸:

Արդ, քանի որ բազմիմաստության նման տիպերից ներհամակարգային տերմինային բազմիմաստությունն է ոչ խրախուսելին և շփոթ առաջացնողը, դիտենք, թե հաճախակի՞ է այն հանդիպում տերմինահամակարգերում: Ինչպես ցույց են տալիս մասնագիտական համապատասխան բառարաններում արձանագրված իմաստները, ներհամակարգային բազմիմաստության առկայությունն ապացուցող փաստերը շատ են: Բերենք մի քանի օրինակներ «Քաղաքական համառոտ բառարանից»⁶⁹:

Ապակեւորոնացում—1) կառավարական տեղական օրգանների իրավունքների ընդլայնում՝ ի հաշիվ նրա կենտրոնական իշխանության

որոշ ֆունկցիաների հանձնման: 2) Ընդհանուր իմաստով՝ կենտրոնացման թուլացում կամ վերացում:

Ապոլիտիզմ (ապոլիտիկոթյուն)—1) անտարբեր, անվրդով վերաբերմունք դեպի քաղաքականությունն ու քաղաքական կյանքը: 2) Կեղծ անտարբերություն դեպի քաղաքական հարցերը՝ «անպարտիականություն», «չեզոքություն» անվան տակ, որ պրոպագանդում են բուրժուական որոշ գաղափարախոսներ, նպատակ ունենալով լայն մասսաներին շեղել դասակարգային պայքարից:

Գաղութ—1) բնակավայր, որ ստեղծվել է նախկինում շրջակեցված կամ նրա բնիկներից բռնագրավված տերիտորիայում: 2) Երկիր կամ մարզ, որ բռնի կերպով զրկվել է տնտեսական ու քաղաքական ինքնուրույնությունից և դարձել այն նվաճած խոշոր պետության տիրապետություն:

Դեսպան—1) Պետության դիվանագիտական ներկայացուցիչ մեկ ուրիշ պետության կառավարությանը կից, որը գլխավորում է դեսպանությունը: 2) Դիվանագիտական բարձրագույն աստիճաններից մեկը:

Թեև բառի փոխաբերական իմաստի գործածությունը, իբրև պատկերավորության և արտահայտչականության եղանակ, ավելի շատ հատուկ է գեղարվեստական խոսքին, բայց նման իմաստները կարող են ծառայել իբրև տերմինների առաջացման աղբյուրներ: Այս դեպքում բառի փոխաբերական իմաստի սահմանադատումը վկայում է բառի իմաստի կայունացման մասին, որի հետևանքով փոխաբերությամբ ընկալված իմաստը վերածվում է այնպիսի իմաստի, որն արտահայտվում է տերմինին բնորոշ հատկանիշներով, որոնց թվում նաև չեզոքությամբ: Ընդ որում, դրանք կարող են լինել ինչպես շատ նեղ մասնագիտական բնագավառում գործածվող, այնպես էլ հանրահայտ տերմիններ: Դրանց համար էականն այն է, որ կոնկրետ գիտությունների համակարգերում կիրառվում են որպես չեզոք անվանումներ, պատկերավորությունից զուրկ միավորներ: Պատկերավորությունից զրկվելը հաճախ հանգեցնում է անվանման պատճառաբանվածության մոռացության: Լեզվաբանական այս երևույթն ընդհանուր է շատ լեզուների համար: Օրինակ՝ սլավոնական լեզուներում (ռուսերենում, ուկրաիներենում) *непо́*, *рѣчѣ* և *гѣлѣ*, անգլերեն *foot* ու *և* երկարության չափ բազմիմաստ բառերի, այնուհետև դրանցից առաջացած համանունների առկայությունը բացատրվում է փոխաբերական իմաստի կիրառությամբ: Կամ հայերենում *ծոց՝ կուրծք իմաստից ծագած ձևի, գետի, ծովի, օվկիանոսի ցամաքի մեջ խորացած մասը*՝ տերմինային իմաստը, որը կիրառվում է աշխարհագրական տերմինաբանության մեջ, առաջացել է փոխաբերությամբ: Կամ ծովաբառը «Ալրվելիս առաջացող գաղանման նյութ» իմաստից ունի նաև

«Տնտեսությունը որպես հարկման միավոր» իմաստը, որն առաջացել է առաջինից՝ փոխաբերաբար:

Անտիպիոդենթ՝ «երկրի հակառակ ծայրում ապրող բնակիչներ» իմաստից փոխաբերաբար առաջացել է նաև «հակադիր համողմունքների տեր մարդիկ» քաղաքական տերմինը: Այս եղանակով կարող են նոր տերմիններ առաջանալ ոչ միայն ընդհանուր գործածություն ունեցող բառի իմաստներից, այլ նաև հենց տերմինի փոխաբերական իմաստի կիրառությունից, որը տերմինացվում է մասնագիտական մի այլ բնագավառում: Այս առումով դիտենք քաղաքական մի քանի տերմինների օրինակներ, որոնք առաջացել են մասնագիտական ուրիշ համակարգերի պատկանող տերմիններից:

Ափոխաժ—(տնտես.) ապրանքային կամ ֆոնդային բիրժայում ապրանքների և արժեթղթերի սպեկուլյացիա և (քղք.) ծայրահեղ գրգռում, հուզմունք:

Առավիզմ—(կենսո.) 1. հետասերում: (քղք.) խոր վերապրուկ, վերադարձ դեպի ծայրաստիճան հնացած, պրիմիտիվ, վայրենի ինչ-որ բանի:

Ավանգարդ—(ռզմ.) 1. ռազմական գործերում հակադիր կողմ շարժվելու ժամանակ ուժերի այն մասը, որն ընթանում է առջևից: 2. (քղք.) հասարակական դասակարգի, ժողովրդի առաջավոր, առաջատար մասը⁷⁰:

Բաղմիմաստ բառի տերմինային և ոչ տերմինային բառաիմաստային տարբերակների տարաբնույթ հարաբերությունները, նրանց բազմազանությունը բխում է բաղմիմաստության ընդհանուր հատկանիշներից: Հայտնի է, որ ընդհանուր գործածություն ունեցող բաղմիմաստ բառի իմաստների բառական և շարահյուսական կապակցելիության նմանությունն ակնհայտ է, այդ իսկ պատճառով լեզվում գոյություն ունեն զուգահեռ գործածություն ունեցող բառակապակցություններ: Բնական է, որ տերմինային և ընդհանուր գործածական իմաստի համատեքստային շրջապատը մեծ մասամբ չեն համընկնում: Հաճախ դրանց հետ կապակցվող գոյականը, բայերը պատկանում են միանգամայն տարբեր թեմատիկ խմբերի և կիրառվում են տարբեր տերմինահամակարգերում: Օրինակ՝ դրական ածականը և դրանով բաղադրված կայուն ու ազատ կապակցությունների տերմինային և ոչ տերմինային կիրառությունները հանդես են բերում ակնհայտ տարբերություններ, որոնք բխում են իմաստային կապակցելիության անհամապատասխանությունից. դրական պատասխան, դրական մարդ, դրական կարծիք, դրական վերաբերմունք, դրական ազդեցություն և դրական մեծություն (մաթ.), դրական լիցք (լսնկրչ.), դրական աստիճան (քեր.), դրական բևեռ (ֆիզ.):

Որոշ դեպքերում տերմինային և ոչ տերմինային իմաստների զուգադիպությունը կայուն կապակցություններում անհրաժեշտաբար կհանգեցնի բաղմիմաստության վերացման, քանի որ բաղմիմաստ բառի մասնագիտական և ընդհանուր գործածություն ունեցող իմաստները հնարավոր է, որ համընկնեն միևնույն համատեքստում: Իհարկե, անժխտելի չէ այն փաստը, որ ընդհանուր համատեքստը միշտ էլ հուշում է, թե որ իմաստն է գործառվել տվյալ նախադասության մեջ: Տերմինային իմաստը միշտ հասկանալի է մասնագետներին, իսկ ընդհանուր գործածություն ունեցող իմաստն ընկալվում է միշտ այն դեպքերում, երբ լսողին կամ ընթերցողին հայտնի են այդ իմաստին համապատասխանող առարկան կամ երևույթը: Այնուամենայնիվ, տերմինների և դրանց հետ ծագումնաբանորեն կապվող ընդհանուր գործածական բառերի իմաստային և շարահյուսական կապակցելիության համադրական քննությունը համատեքստում կարող է հետաքրքիր արդյունքներ տալ: Մի քանի բաղմիմաստ բառերի ընդհանուր գործածություն և տերմինային արժեք ունեցող իմաստների քննությունը բացահայտում է, որ պատկերը բավական բարդ է այն առումով, որ մի դեպքում տերմինը իր կապակցելիության հնարավորություններով հստակ կերպով առանձնանում է ընդհանուր գործածություն ունեցող իմաստների կապակցելիությունից, մի այլ դեպքում իմաստային առումով սերտ կերպով կապվում է նրա բառսիմաստային տարբերակների հետ: Այս կապերը, իհարկե, ոչ միշտ են կանոնավոր ձևով արտահայտվում, լինում են դեպքեր, երբ դրանք տարբեր բնույթ են կրում: Պատահում է, որ բառի մասնագիտական բնագավառում գործածվող իմաստը կապակցվում է ընդհանուր գործածություն ունեցող այլ իմաստների հետ, օրինակ՝ դրամա գրականագիտական տերմինը առօրյա կամ գեղարվեստական խոսքում հաճախ կապակցվում է ապրել (դրամա ապրել), կյանք (կյանքի դրամա), խոր, մեծ բառերի հետ (խոր դրամա, մեծ դրամա), որտեղ տերմինի և ընդհանուր գործածություն ունեցող իմաստի կապն ավելի սերտ է արտահայտվում: Իհարկե, բաղմիմաստ բառի հասարակական և տեխնիկական գիտություններին վերաբերող իմաստների կապակցելիությունները ևս կարող են տարբեր աստիճանի լինել: Առաջին դեպքում կապն ընդհանուր գործածություն ունեցող իմաստների հետ ավելի արտահայտված կլինի, քան երկրորդ դեպքում:

Հնարավոր է, որ հասարակական և բնական գիտությունների պատկանող տերմինները հավասար չափով չօգտվեն լեզվի բաղմիմաստության ընձեռած հնարավորություններից: Համեմատելու համար դիտենք դրանց առավել էական հատկանիշները.

հասարակական-ֆաղափական տերմիներ

1. առնչվում են սոցիալա-
կան իրականությանը

2. հասկացության առաջա-
ցումը կապվում է սոցիալական
իրականության ճանաչման հետ

3. ենթարկվում են լեզվի
բառակազմական, իմաստաբա-
նական հիմնական օրենքներին

4. թեև ավելի շատ մենի-
մաստ են, բայց քիչ չեն նաև
բաղմիմաստները

5. մեծ մասամբ տերմինաց-
վում են համընդհանուր բառերի
(հասարակաբանության) իմաստ-
ներից:

Ինչպես ցույց է տալիս դրանց բնորոշ հատկանիշների համեմատու-
թյունը, բնական և հասարակական-քաղաքական գիտությունների տեր-
մինները հակադրվում են և՛ արտալեզվական (1, 2), և՛ լեզվական (4, 5)
հատկանիշներով: Թերևս ամենից ընդհանուրը նրանց համար այն է,
որ լինելով լեզվական միավորներ, հավասար չափով ենթարկվում են
բառային համակարգում գործող օրենքներին, այսինքն՝ կարող են մաս-
նագիտացվել, կազմելով բառական, իմաստային, դարձվածաբանական
նոր միավորներ (3): Այս համեմատության համար էական է նրանց
4-րդ հատկությամբ հակադրվելու հատկանիշը, որը հիմք է տալիս եզ-
րակացնելու, որ լեզվում ավելի շատ բաղմիմաստ են հասարակական
գիտություններին վերաբերող տերմինները:

Շատ գիտությունների տերմինների համար բնորոշ են հետևյալ
երևույթները. ա) ընդլայնվում է լեզվում արդեն գոյություն ունեցող հաս-
կացության բովանդակությունը, օրինակ՝ արբանյակ. նախապես այն
ունեցել է միայն «մոլորակի շուրջը պտտվող երկնային մարմին» իմաս-
տը, իսկ այժմ նաև՝ արհեստական արբանյակ, «երկրագնդի տիեզերա-
կան տարածություն ուղարկված սարք»: բ) Հաճախ հին հասկացության
բովանդակությունն այնքանով է համալրվում, լրացվում, որ մնում է
միայն լեզվական նշանը: Օրինակ՝ օպերացիա բառը, որ նախապես նշա-
նակել է գործողություն (լատիներեն operatio), տարբեր տերմինահա-

բնական գիտությունների պատկանող տերմիներ

1. առնչվում են բնական
երևույթներին

2. հասկացության առաջա-
ցումը հենվում է բնության երե-
վույթների ճանաչման վրա

3. » — — — — — »

4. ավելի շատ մենիմաստ
են:

5. մեծ մասամբ տերմինաց-
վում են ոչ համընդհանուր բա-
ռերի իմաստներից:

մակարգեցրում ստացել է շատ իմաստներ, կայունացել այդ իմաստներով բժշկ.՝ վիրահատություն, ռազմ.՝ ռազմական գործողություն, ֆին. բանկային գործառնություն (առևտր.) առևտրական գործառնություն և այլն: գ) Տերմինի ավելի ուշ ժամանակահատվածում ձեռք բերած իմաստը, որը շարունակում է կիրառվել նույն տերմինահամակարգում, համապատասխանում է միանգամայն նոր հասկացության, որն անհամատեղելի է հին իմաստի հետ, ուստի և հարկ է լինում դրանց սահմանազատման, այսինքն՝ նոր անվանման, օրինակ՝ հենց տերմինաբանություն տերմինը այժմ շարունակում է կիրառվել երեք իմաստներով՝ որևէ լեզվի տերմինների ամբողջությունը, առանձին բնագավառների տերմինների ամբողջությունը, լեզվաբանության այն բաժինը, որը զբաղվում է տերմինահամակարգերի ուսումնասիրությամբ, դրա հետ առնչվող տեսական և գործնական հարցերով: Եվ պատահական չէ, որ վերջին ժամանակներս որոշ լեզվաբաններ արդարացիորեն երրորդ իմաստը տարանջատում են, կոչելով այն տերմինագիտություն⁷¹, որն այժմ ավելի շատ հանդես է գալիս իբրև միջգիտական օժանդակ գիտություն, որով զբաղվում են նաև ոչ լեզվաբանները:

Բառի իմաստային տարբերակներն իրացվում, ճշգրտվում են համատեքստում: Համատեքստն օգնում է ճիշտ ընկալելու բառի տարբեր իմաստները, մանավանդ, եթե դրանք կիրառվում են տարբեր բնույթի և ժանրի գրավոր տեքստում: Այստեղ էական դեր է կատարում նաև համատեքստային իրավիճակը, այն պայմանները, որտեղ լրացվում է խոսքը: Չի կարելի ասել, թե բառի իմաստի յուրաքանչյուր գործածությունն նոր իմաստ է, ինչպես կարծում են որոշ լեզվաբաններ: Բառի նոր իմաստը կարող է առաջանալ բառի հին իմաստի հիման վրա՝ լեզվում գործող օրենքների համապատասխան, ահա թե ինչու համատեքստը ոչ թե ստեղծում է այդ իմաստը, այլև կոնկրետացնում և ճշգրտում է այն:

Տերմինի քննությունը համատեքստում կամ տերմինի իմաստային առանձնահատկությունների իրացումը տեքստում տերմինագիտության ամենաքիչ ուսումնասիրված հարցերից են: Սակայն դրանք որոշ առումով հետաքրքրություն են ներկայացնում, օրինակ՝ տերմինի քննությունը համատեքստում կարող է հնարավորություն տալ վճռելու շատ հարցեր, որոնք ամենից առաջ կապվում են տերմինաբանության, բառագիտության և ընդհանրապես տերմինի համակարգային կապերի բացահայտման հետ: Նման ուսումնասիրության ժամանակ տերմինը կարելի է դիտել իբրև լեզվի բառիմաստային ընդհանուր համակարգի մեկ անդամ, որին բնորոշ են այդ մակարդակին պատկանող լեզվական միավորների էական հատկանիշները: Հենց դրանով կարելի է բացատրել

այն փաստը, թե ինչու տերմինաբանության մեջ ևս առկա է բազմիմաս-
տության երևույթը, որը պայմանավորված է լեզվի բառիմաստային
համակարգով: Այս առումով տերմինի համակարգային կապերը կարող
են արտահայտվել և՛ հարացուցային, և՛ շարակարգային պլաններում:
Հայտնի է, որ բառային միավորները համատեքստային քննության
մեթոդով համար նախ տեքստում առանձնացվում են մենիմաստ
միավորները: Համատեքստը պարունակում է ասույթը ճիշտ ընկալելու
համար անհրաժեշտ բոլոր տարրերը, ինչպես օրինակ՝ բառի քերական-
ական կարգերը, նրա կապակցելիության առանձնահատկությունները,
հաջորդող և նախորդող միավորների հտեառաջությունը և այլն: Բառի
տերմինային իմաստը (եթե իհարկե այն բազմիմաստ բառի մեկ իմաս-
տըն է), նրա տեղը բառի համակարգում պայմանավորված են համա-
տեքստով, որտեղ ավելի ստույգ են բացահայտվում և դրսևորվում նրա
տարբերությունները ընդհանուր գործածական իմաստից: Ահա թե ինչու
այն տեսակետը, թե տերմինը կարիք չունի համատեքստի և համա-
տեքստից դուրս ևս ըմբռնվում է նրա իմաստը, ոչ միշտ է արդարաց-
յալով կամ ավելի ճիշտ՝ այդ վերաբերում է մենիմաստ տերմիններին և
արտահամակարգային բազմիմաստությանը: Մենիմաստ տերմինը միայն
կարող է կախում չունենալ համատեքստից: Որոշ դեպքերում համա-
տեքստը կանխում է բազմիմաստ տերմինի բովանդակության ըմբռնման
դժվարությունները:

Հաճախ պատահում է, որ տարբեր գիտություններում տարբեր տե-
սանկյուններից կիրառում են միևնույն հասկացությունը: Այստեղ կա-
րևորություն է ներկայացնում նրանց անվանման եղանակը: Այս առու-
մով կարելի է տարբերել անվանման երկու եղանակ. 1. երբ միևնույն
հասկացության անվանումը նույնն է տարբեր տերմինահամակարգի-
րում, 2. երբ միևնույն հասկացության անվանումը տարբեր է առանձին
տերմինահամակարգերում: Օրինակ՝ բժշկությունը, մարդաբանությունը,
լեզվաբանությունը կարող են օգտագործել տերմիններ, որոնք հավա-
սարապես պատկանում են իրենց տերմինահամակարգերին. նույնը նաև
բժշկությունն ու կենսաբանությունը, փիլիսոփայությունը, գրականու-
թյունն ու լեզվաբանությունը: Եվ հասկանալի է, որ այս դեպքում թեև
մենք գործ ունենք բառային միավորի միևնույն հնչյունական ձևավոր-
ման հետ, բայց դրանք համապատասխանում են մասնագիտական տար-
բեր հասկացությունների, հետևապես արտահայտում են տարբեր ի-
մաստներ: Կասկած չկա, որ այս դեպքում մենք ակնհայտորեն գործ
ունենք տերմինային բազմիմաստության հետ: Օրինակ՝ ապառք տերմի-
նը ֆինանսական գործում հասկացվում է «Հարկի» վարձավճարի, ժամ-

կետին շմութված և վճարողի վրա որպես պարտք մնացած գումարը», իրավաբանության մեջ՝ «օրինական կերպով սահմանված՝ նախատեսված գումարը շմութելը՝ չվճարելը»⁷²։ Սակայն հարցն ավելի է դժվարանում, երբ մենք գործ ենք ունենում միևնույն նյութի, օբյեկտի և հասկացության հետ, որոնք տարբեր տերմինահամակարգերում տարբեր անվանումներ ունեն։ Հասկանալի է, որ այդ դեպքում խոսք չի կարող լինել տերմինի բազմիմաստության մասին, բայց այդ նաև համանշանություն կամ նույնանշանություն էլ չէ սովորական իմաստով, մասնավորապես, որ դրանք պատկանում են տարբեր տերմինահամակարգերի։ Անվանակարգության մեջ (ինչպես նաև տերմինագիտության մեջ) այս բնորոշ երևույթը դեռևս չունի իր անվանումը, բայց հետաքրքրական է, որ միևնույն հնչյունակազմ ունեցող անվանակարգային միավորների որքան ասեք կարելի է հանդիպել գիտատեխնիկական տերմինների շարքում։ Դրան հատկապես նպաստում է ժամանակակից տերմինակազմության և անվանակազմության պրակտիկան։ Այսպես, Պ. Վ. Վեսելովը բերում է հետևյալ օրինակը⁷³։ լավսան բառը վերջերս լայն գործածություն է ստացել և առաջացել է այն լաբորատորիայի անունից, որտեղ առաջին անգամ ստացվել է այդ նյութը։ Բայց ժնեկ քիմիական միացությունների անվանացանկում այդ նյութն անվանվում է լեզվի համար շատ անբարենչյուն և երկար տերմինով՝ պոլիէտիլենտերեֆտալատ (полиэтилентерефталат), որը լայն գործածություն ունի քիմիկոսների շրջանում։ Վերոհիշյալ հեղինակը բերում է նման բառերի մի աղյուսակ, որտեղ բերված միավորները, հնչյունական քիչ տարբերություններով, վերաբերում են նաև հայերենին, ինչպես. կապրոն-պոլիկապրոամիդ-կապրոամիդոպլաստ, օրլոն-պոլիկրիլատ-նիտեակրիլոպլաստ և այլն⁷⁴, որոնցից առաջինները առևտրական, երկրորդները՝ քիմիական, երրորդները՝ տեխնիկական անվանումներ են։ Ինչպես երևում է բերված օրինակներից, թեև այստեղ հստակորեն չեն տարբերվում տերմինները և անվանակարգային միավորները, բայց մեր ուսումնասիրության տեսակետից հետաքրքրական է, որ դրանք տարբեր գիտությունների համակարգերում տարբեր անվանումներ են կրում, այսինքն՝ միևնույն երևույթը կամ առարկան տարբեր գիտություններում կարող են դիտվել տարբեր իմաստներով և տարբերվել նաև անվանումներով։

Բազմիմաստությունը սերտորեն առնչվում է լեզվի գործառության հետ։ Ահա թե ինչու թեև գոյություն ունեն բազմիմաստության զարգացման համընդհանուր օրենքներ, որոնք հատուկ են բոլոր լեզուներին⁷⁵, ինչպես օրինակ՝ բառի իմաստների լայնացումը, փոխաբերական կիրառությունները և այլն, այնուամենայնիվ, կան որոշ օրինաչափություն-

ներ, որոնք տարբեր լեզուներում տարբեր ձևերով են դրսևորվում: Համեմատելով ռուսերենի և հայերենի որոշ կարգի տերմինների իմաստալին առանձնահատկությունները, կարելի է նկատել, որ տարբեր են համարժեք իմաստ արտահայտող միավորների բաղմիմաստության սահմանները: Հայերենի որոշ բաղմիմաստ տերմինների համարժեքներ ռուսերենում կարող են լինել մենիմաստ և հակառակը: Հաճախ իմաստալին միևնույն դաշտի պատկանող տերմինները և անվանակարգային միավորները տարբեր կերպ են օգտվում բաղմիմաստության օրինաչափություններից: Այստեղ էական դեր են կատարում նաև լեզվի բառակազմական կաղապարները, քերականական առանձնահատկությունները և դրանց հետ առնչվող շատ գործոններ: Օրինակ՝ ռուսերենում այնպիսի երկու տարբեր իմաստներ, ինչպիսիք են ծառը և այդ ծառի պտուղը, կոչվում են միևնույն բառով (բացառությամբ՝ ЯБЛОКО և ЯБЛОНЯ): Ֆրանսերենում պտղատու ծառի իմաստի արտահայտման համար լայն կիրառություն ունի -ier (er) վերջածանցը⁷⁶. պտղի և այդ պտուղը տվող ծառի իմաստները ֆրանսերենում ձևականորեն տարբերվում են: Հետևյալս իմաստային այս դաշտին (պտուղ և այդ պտուղը տվող ծառի անվանումները) պատկանող բառերի բաղմիմաստության սահմաններն այս լեզուներում տարբեր են: Հետաքրքրական է, որ այս առումով հայերենը նման է ֆրանսերենին և տարբերվում է ռուսերենից. հայերենում և գոյություն ունեն -ենի, -ի հատուկ վերջածանցները, որոնք զրկելով բառի վերջում, ցույց են տալիս մրգատու ծառ: Ինչպես օրինակ՝ կեռաս, ընկույզ, բալ, խնձոր, սալոր, թուր, փշատ, հաղարջ, հոն, կաղին և կեռասենի, ընկուզենի, բալենի, խնձորենի, սալորենի, թթենի, փշատենի, հաղարջենի, հոնի, կաղնի: Այս դեպքում, կարելի է ասել, լեզվի քերականական և բառակազմական առանձնահատկությունները նպաստում են տերմինների մենիմաստությանը, երբեմն էլ հակառակը՝ բաղմիմաստության պահպանմանը: Օրինակ՝ հայերենում կան շատ ածանցներ, որոնք իրենց իմաստային առանձնահատկություններով առաջացնում են տերմինային բաղմիմաստության երևույթներ: Այսպես՝ հայտնի է, որ հայերենում կան շատ բառեր, որոնց թվում և տերմիններ, որոնք կրկնակի խոսքի մասային պատկանելություն ունեն: Եթե այս երևույթը սովորական է ընդհանուր գործածական բառերի համար, և յուրաքանչյուր դեպքում բացատրական բառարաններում տրվում է քերականական նշումը (խոսքի մասային պատկանելությունը), ապա նույն օրինաչափությամբ էլ հանդիպում են տերմիններ: Այս դեպքում մենք գործ ունենք ավելի նուրբ եղանակով արտահայտված բաղմիմաստության հետ, որը որոշակի պետք է տարբերել: Օրինակ՝ հայերենում շատ են գրաբար-

յան անցյալ դերբայի —եալ մասնիկով կազմված ձևերը, որտեղ —եալը (նոր ուղղագրությամբ —յալ) այժմ հավասարապես հանդես է գալիս որպես գոյականակերտ և ածանցակերտ ածանց, ինչպես՝ արտադրյալ, ածանցյալ, բեկյալ, կախյալ, արտագծյալ, (մաթ.) կամ —ական, —իչ ածանցներով կազմված ձևերը՝ կոմբերիտական, կուսակցական, բրիչ, սնիչ ձևերն արտահայտում են գոյականի և ածականի իմաստներ (վերջին դեպքում ածականը կարող է դառնալ տերմինային կապակցության բաղադրիչ)։

Ռուսերենում շատ են այնպիսի տերմինները, որոնց համարժեքները հայերենում տրվում են երկու միավորներով։ Խոսքը վերաբերում է հատկապես ռուսերենի այն տերմիններին, որոնց համարժեքը հայերենում արտահայտվում է բայանվամբ և առանձին գոյականակերտ ածանցով, ինչպես.

напряжение—լարում, լարվածություն
 дермографизм—մաշկագրում, մաշկագիր
 нарезка—պարուրակում, պարուրակ
 перегрузка—գերբեռնում, գերբեռնվածք
 накол—շիկացում, շիկվածք
 установка—տեղադրում, տեղակայանք, կայանք
 распределение—բաշխում, դասավորություն
 вибрация—թրթռում, թրթիռ
 аутоинфекция—ինքնավարակում, ինքնավարակ
 контроль—հսկում, հսկողություն։

Կարևոր է նման տերմինների թարգմանության ժամանակ հաշվի առնել, թե տվյալ միավորները կոնկրետ տերմինահամակարգերում ինչպես են համապատասխանում առանձին հասկացությունների և որքանով են պահպանում իրենց տերմինային անկասկածելիությունը և ըստ այնմ համապատասխան բառարանում համարժեքները տալիս պահպանել մատուցման միօրինակությունը։ Շատ հաճախ նման տերմինները մե՛րթ մատուցվում են որպես բազմիմաստ տերմինի տարբեր իմաստներ՝ տրվելով տարբեր թվահամարների տակ, մե՛րթ որպես համանիշներ՝ նույն թվահամարի տակ։ Օրինակ՝ ավտոմոբիլային տերմինների բառարանում նման տերմինները հիմնականում տրվում են որպես մեկ տերմինի տարբեր իմաստներ, ինչպես.

нажим—1. սեղմում։ 2. Սեղմակ։
 разрыв—1. խզում, խզվածք։ 2. Ճեղքում, ճեղքվածք։
 нагрузка—1. բեռնում։ 2. Բեռնվածք։
 буксир—1. քարշակ։ 2. Քարշակում։

смазка—1. յուղում: 2. Յուղվածք, քսվածք: 3. Քսուք:

снаряжение—1. հանդերձում: Հանդերձանք:

оборудование—1. սարքավորում: Սարքավորանք:

обмуровка—1. պատում: 2. Պատվածք:

нашивка—1. վրակար: 2. Վրակարում:

недогруз—1. թերաբեռնում: 2. Թերաբեռնվածք:

Սակայն նույն բառարանում միևնույն արմատից կազմված քերականական տարբեր արժեք ունեցող միավորների բաղմիմաստության և համանշտության սահմանները ոչ միշտ են հստակորեն ընդգծվում: Օրինակ՝ разбрызгивание—ցայտում, ցողում, բայց разбрызгивающий—1. ցայտող, 2. ցողացող: Նման դեպքերում կոնկրետ միավորների տերմինային համանշտության և բաղմիմաստության արտահայտությունը տվյալ տերմինահամակարգում ճիշտ ընդգծելն անհրաժեշտ է:

Բառագիտական հարցերին նվիրված որոշ ուսումնասիրություններում փորձում են վեր հանել համանշային շարքերի անդամների միջև եղած հարաբերությունը՝ բաղմիմաստության սահմաններում: Հայտնի է, որ համանշային շարքերը, որպես իրենց իմաստներով միավորվող խմբեր, ընդհանուր առմամբ ներկայացնում են հասկացական իմաստների ամբողջություններ, որոնք կարելի է բաժանել որոշակի թեմատիկ խմբերի: Սակայն բառային համակարգում առկա համանշային շարքերը կարող են միավորվել նաև այլ հատկանիշներով, որոնք սերտորեն առնչվում են բառի բաղմիմաստության հետ, հատկապես, երբ համանշությունը դրսևորվում է բաղմիմաստ բառի տարբեր իմաստների համապատասխան համանշային շարքերի առկայությամբ: Այս տեսակետից, իհարկե, շատ կարևոր է, թե ինչպիսին են բաղմիմաստ բառի իմաստների գործածության շրջանակները: Հասկանալի է, որ ավելի հարուստ և բաղմաբնույթ կապեր կդրսևորեն այն բաղմիմաստ բառերը, որոնց իմաստներն ընդհանուր գործածական բառեր են, ավելի քիչ՝ նեղ մասնագիտական տերմինները կամ տերմինային արժեք ունեցող իմաստները: Այս առումով համանշային հարաբերություն ունեցող տերմինների շարքերի հարաբերությունը բաղմիմաստության (լինի այն ներհամակարգային, հարահամակարգային, թե արտահամակարգային) սահմաններում քննելը քիչ արդյունք կարող է տալ և այն տերմինագիտության առումով կարևորություն չի ներկայացնի:

Այսպիսով, վերը շարադրածից կարելի է անել մի շարք եզրակացություններ.

1) բաղմիմաստությունն ամբողջությամբ չի ընդգրկում տերմինային համակարգը: Շատ գիտությունների, հատկապես հասարակական

գիտութիւններ, տերմինների բազմիմաստութիւնն ավելի շատ հետեւմանք է լեզվի սոցիալ-մասնագիտական տարբերակման, որը կապւում է գիտութիւն և տեխնիկայի զարգացման հետ: Բազմիմաստութիւնն սահմաններ կարող են ընդլայնւել ինչպես լեզվաբանական, այնպես էլ արտալեզվաբանական գործոններից:

2) Բազմիմաստութիւնն առկայութիւնը ինչպես ընդհանուր բառապաշարի, այնպես էլ տերմինաբանութիւն մեջ, լեզվական ներքին օրենքներից բխող երևույթ է, որը կապւում է լեզվական նշանների տնտեսման օրենքների հետ:

3) Քանի որ օբյեկտիվ իրականութիւնն անսպառ ու բազմազան է իր հնարավորութիւններով, իսկ լեզուն չի կարող յուրաքանչյուր երևույթի, յուրաքանչյուր հասկացութիւն հատկացնել մեկ առանձին միավոր, և մարդկային միտքն էլ ի վիճակի չէ մտապահել անսահմանափակ քանակի անվանումների խմբեր, ուստի ինչպես բառային, այնպես էլ որոշ կարգի տերմինային բազմիմաստութիւնն առկայութիւնը լեզվում արդարացւում է (արտահամակարգային բազմիմաստութիւն):

4) Բազմիմաստութիւնը լեզվի գործառութիւնն անհրաժեշտ պայմաններից է և այն համանունութիւն համեմատութիւնաբ գերակշռող դեր ունի լեզվում: Ահա թե ինչու ցանկացած լեզվի բացատրական բառարանում բազմիմաստ բառերը, որոնց թվում նաև տերմինները, ավելի շատ են, քան համանունները:

5) Տերմինային բազմիմաստութիւնն տարբեր տեսակները նույն դերը չունեն լեզվի ողջ բառապաշարում և տարբեր գիտութիւնների տերմինահամակարգերում: Եթե արտահամակարգային տերմինային բազմիմաստութիւնը բնական է լեզվի համար, ապա հարահամակարգային և մանավանդ ներհամակարգային բազմիմաստութիւնը խրախուսելի չեն. դրանք խանգարում են տերմինների իմաստների հստակութիւնը և պարզութիւնը:

6) Որոշ դեպքերում բազմիմաստ տերմինի իմաստների ճիշտ ըմբռնման համար զգացւում է համատեքստի անհրաժեշտութիւնը, որը հաճախ ներհամակարգային բազմիմաստ տերմինների իմաստների ըմբռնման բանալի է ծառայում: Ընդ որում համատեքստը հնարավորութիւն է տալիս ոչ միայն ճիշտ ընկալել այն իմաստները, որոնք հաստատւած, կայունացւած են լեզվում և արձանագրւած համապատասխան մասնագիտական բառարաններում, այլև հաճախ նույնիսկ տերմինային նոր գործառութիւնները, որոնք առաջացել են համընդհանուր գործածութիւնն ունեցող բառերի իմաստների ընդլայնման շնորհիվ:

ԱՄ—Ավետիք Իսահակյան
Աստուծոյ.—անասնաբուժական
Առեւտր.—առեւտրական
Աշխատ.—աշխատողական
Երկր.—բժշկագիտական
Գիտ.—գիտական
Գր.—գրական
Գրկնգ.—գրականագիտական
Երաժշտ.—երաժշտական
Երկրլ.—երկրաչափական
Մատր.—թատերագիտական
Երկր.—լեզվաբանական
Երկրլ.—լուսանկարչական
Երկր.—կենդանաբանական

Երկր.—կազմախոսական
Դնդ.—հնագիտական
Ճարտ.—ճարտարագիտական
Մաթ.—մաթեմատիկական
Կատմ.—պատմական
Կոլիգրաֆ.—պոլիգրաֆիկական
Ուղղ.—ուղղական
Սպորտ.—սպորտային
Սին.—տեխնիկական
Ր.—Րաֆֆի
Իրատաթղթ.—իրատաթղթերի
Իրա.—իրաւաբանական
Բեր.—բերականական
Բղթ.—բաղաբանական
Ֆիզ.—ֆիզիոլոգիական
Ֆին.—ֆինանսական

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 «Լրարեր», 1969, № 1, 1971, № 1, 9;
- 2 Գ. Բ. Զանուխյան, Հայոց լեզվի տերմինաբանութեան զարգացման հարցերի ճանարկումը, «Լրարեր», 1977, № 9, էջ 95;
- 3 Գ. Սեւակ, Հանուն տերմինաբանական կարգապահութեան, «Տերմինաբանութեան և խոսքի մշակութեան հարցեր», Երևան, 1976, էջ 7;
- 4 Տե՛ս հատկապէս Է. Աղայան, «Տերմինաբանութեան», Երևան, 1978, Լ. Ղազանչյան, Հայերէնի լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծութեան, «Լեզվի և ոճի հարցեր», Երևան, 1977, № 4;
- 5 Я. А. Климовицкий, Некоторые вопросы развития и методологии терминологических работ в СССР, М.—Л., 1967, стр. 46.
- 6 Н. П. Кузина, К вопросу о сущности термина, Вестник ЛГУ, № 20, серия история языка и литературы, вып. 4, 1962, стр. 141.
- 7 Д. С. Лотте, Основы построения научно-технической терминологии, М., 1961.
- 8 Г. О. Винокур, О некоторых явлениях словообразования в русской технической терминологии. Труды МИФЛИ, 1939, т. V, стр. 4. А. А. Реформатский, Что такое термин и терминология? ВТ, М., 1961, стр. 48.
- 9 А. И. Моисеев, О языковой природе терминов, ЛПНТТ, М., 1970, стр. 132—133.
- 10 Լ. Հ. Ղազանչյան, Երկրաչափ., էջ 229;
- 11 Է. Աղայան, Երկրաչափ., էջ 21;
- 12 Լ. Հ. Ղազանչյան, Երկրաչափ., էջ 232;
- 13 Ա. Ս. Սուխայան, Հոմանիշները ժամանակակից հայերէնում, Երևան, 1977, Ն. Պառնայան, Շարահյուսական հոմանիշները ժամանակակից հայերէնում, Երևան, 1970, Պ. Ս. Բեդիրյան, Հոմանիշների և նրանց առաջացման ուղիների մա-

սին, Խ. Արթուրյանի անվան ՀԳՄԻ գիտական աշխատություններ, Երևան, 1965, էջ 120—131:

14 Տե՛ս Ա. Մ. Սուբիասյանի նշված աշխ., էջ 196—234:

15 Փ. Ժե Сосюр, Курс общей лингвистики, М., 1933, стр. 77.

16 Л. А. Новиков, Синонимические функции слов, «Русский язык в школе», 1968, № 1, стр. 11.

17 А. Черч, Введение в математическую логику, т. 1, перевод английского, М., 1960, стр. 18.

18 Л. А. Новиков, նշված հոդվածը, էջ 12:

19 Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, հ. 1:

20 В. Г. Гак, Сравнительная типология французского и русского языков, М., 1977, стр. 259.

21 В. Г. Гак, նշված աշխ., էջ 260:

22 Н. В. Арнольд, Лексикология современного английского языка, М., 1959, стр. 276—277.

23 I. P. Boone, The Petroleum Dictionary, 1952, p. 25.

24 А. Т. Бевезенко, К вопросу об абсолютных синонимах в лексикосемантической системе языка, «Актуальные проблемы лексикологии», Минск, 1970, стр. 17.

25 Н. В. Зубченко, Синонимия и антонимия в терминологической лексике сахарного производства (на материале английского языка), в кн.: Вопросы терминологии и лингвистической статистики, Воронеж, 1976, стр. 42.

26 К. С. Горбачевич, Вариантность слова и языковая норма, М., 1978, стр. 8—32.

27 О. О. Ахманова, Ю. А. Бельчиков, В. В. Веселитский, К вопросу о правильности речи, «Вопросы языкознания», 1960, № 2, стр. 37—38.

28 Н. С. Трубецкой, Основы фонологии, М., 1960.

29 Р. П. Погужникова, Соотношение вариантов слов, однокорневых слов и синонимов, в сб. «Лексическая синонимия», М., Наука, 1967.

30 Վ. Սախարյան, Հայերենի մաթեմատիկական տերմինաբանության մի քանի հարցեր, Երևանի համալսարան, 14 մայիսի, 1977 թ.:

31 Այստեղ հիմք հասկացությունը պայմանականորեն ընդունում ենք միայն առաջին բաղադրիչի համար:

32 Б. А. Горнунг, О природе синонимии в языке и теоретических предпосылках составления анонимических словарей, ВЯ, 1965, № 5, стр. 89—99.

33 Ա. Սախարյան, Հայերենի տերմինները և նրանց հոմանշության հարցերը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 3, էջ 108—109:

34 Է. Բ. Աղայան, Տերմինաբանության մի քանի խնդիրների մասին, «Լրագրեր», 1971, № 1, էջ 94:

35 Վ. Զ. Գրիգորյան, Ս. Կ. Կառապետյան, Ռ. Հ. Հարությունյան, Ռուս-հայերեն ֆիզիկա-լոգիկական բառարան, Երևան, 1977:

36 Բոլոր օրինակները վերցված են Պ. Ա. Ղանդկլյանի, Մ. Ե. Հովսեփյանի, Լ. Բ. Պետրոսյանի «Բուսաբանական բառարանից», Երևան, 1975:

37 Д. С. Лотте, Основы построения научно-технической терминологии, М., 1961, стр. 72.

38 Д. С. Лотте, Краткие формы научно-технической терминологии, М., 1971.

39 В. Н. Даниленко, Русская терминология, М., 1977, стр. 183.

- 40 Հայերենի հապավումների կաղապարների հիմնական խմբերի առանձնացումը և դրանց դասակարգումը կատարել է ահադ. Գ. Սևակը. տե՛ս նրա «Ժամանակակից հայոց լեզվի դասընթացը», Երևան, 1955, էջ 182—198; Այստեղ մենք համառոտակի անդրադառնում ենք սոսկ գիտության տարրեր համակարգերում հաճախ հանդիպող, այսինքն՝ առավել տարածուն հապավումների կաղապարներին:
- 41 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Ալ. Մարգարյանի «Հայերենի հապավումները և նրանց առանձնահատկությունները» հոդվածը, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1977, № 3, էջ 85:
- 42 Գ. Խաչատրյան, Մի քանի տերմինների և բառերի ոչ ճիշտ օգտագործման մասին, Գարուն, 1976, № 6, էջ 76:
- 43 Նույն տեղում:
- 44 М. Н. Николаев, О синонимии словарных дефиниций общественно-политических терминов английского языка, «Вопросы теории романо-германских языков», выпуск 7, Днепропетровск, 1975, стр. 71—76.
- 45 Л. А. Кутина, Формирование языка русской науки, М., 1964, стр. 203.
- 46 Ն. Ա. Մայրյան, Անասարածական տերմինների ռուս-հայերեն բառարան, Երևան, 1974, Գ. Ս. Ահադյան, Ռուս-հայերեն ավտոմոբիլային բառարան, Երևան, 1973, Վ. Զ. Գրիգորյան, Ս. Կ. Կառապետյան, Ռ. Հ. Հաղուբյանյան, Ռուս-հայերեն ֆիզիոլոգիական բառարան, Երևան, 1977, «Պոլիգրաֆիական տեղեկատու բառարան» (կազմեց Ա. Ա. Մատինյան), Երևան, 1973:
- 47 А. В. Лагутина, Абсолютные синонимы в синонимической системе языка «Лексическая синонимия», М., 1967, стр. 125.
- 48 Ա. Սուրիապյան, նշվ. աշխ., էջ 69:
- 49 В. И. Кодухов, Значение как лингвистическое понятие, в книге «Языковые значения», Ленинград, 1977, стр. 7.
- 50 Языковая номинация, Л., 1976, стр. 14.
- 51 С. Ульманн, Семантические универсалии, Новое в лингвистике, М., 1970, стр. 267.
- 52 Ս. Ուլման, նշված աշխ., էջ 269:
- 53 А. И. Смирницкий, К вопросу о слове (проблема «тождества слова»), Труды Института языкознания АН СССР, т. IV, 1954.
- 54 Հր. Ահադյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971:
- 55 Х. Касарес, Введение в современную лексикографию, М., 1958, стр. 70.
- 56 Д. С. Лотте, Основы построения научно-технической терминологии, М., 1961, стр. 7.
- 57 Р. А. Будагов, Очерки по языкознанию, М., 1953, стр. 18.
- 58 Տե՛ս «Электричество» հանդեսը, 1954, № 2:
- 59 Г. О. Винокур, О некоторых явлениях словообразования в русской технической терминологии, «Труды МИФЛИ», т. 5, «Сборник статей по языкознанию», М., 1935, стр. 5.
- 60 В. П. Даниленко, Лексико-семантические и грамматические особенности слов-терминов «Исследования по русской терминологии», М., 1971, стр. 15.
- 61 Р. А. Будагов, Указ. соч., стр. 18, А. Левковская, Теория слова, М., 1962, стр. 99, А. А. Реформатский, Что такое термин и терминология? «Вопросы терминологии», М., 1961, стр. 51, Как работать над терминологией, Основы и методы, М., 1968, стр. 39, Лингвистические проблемы научно-технической терминологии, М., 1970, стр. 7.

- 62 В. П. Даниленко, О терминологическом словообразовании, ВЯ, 1973, № 4.
- 63 Д. С. Лотте, Как работать над терминологией, Основы и методы, М., 1968, стр. 40.
- 64 «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 1—3, 1969, 1972, 1974, էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1—2, 1976, է. Խ. Բաղսեղյան, Հայերեն ուղղագրական և ուղղախոսական բառարան, Երևան, 1973:
- 65 М. И. Задорожный, О границах полисемии и омонимии, М., 1977, стр. 4.
- 66 В. П. Даниленко, Лексико-семантические и грамматические особенности слов терминов, «Исследования по русской терминологии», М., 1971, стр. 18.
- 67 Պրոֆ. էդ. Աղայանը աղանձնացնում է ներհամակարգային և արտահամակարգային բազմիմաստություն, տե՛ս նշված աշխ., էջ 42:
- 68 Դ. Ս. Լառտե, նշված աշխ., էջ 75:
- 69 Թեև նշված բառարանը Թարգմանություն է ռուսերենից, բայց ինչպես նշվում է առաջաբանում, այն վերածված է հայկական այբուբենի և կատարված են մասնակի փոփոխություններ, Երևան, 1966:
- 70 նշված բառարանը:
- 71 է. Բ. Աղայան, նշված աշխ., էջ 6:
- 72 է. Աղայան, նշված բառարանը:
- 73 П. В. Веселов, Оправданный случай синонимии в терминологии, «Русская речь», 1969, № 5, стр. 77.
- 74 նշված հոդվածը, էջ 78:
- 75 В. Г. Гак, Сравнительная типология французского и русского языков, М., 1977, стр. 256.
- 76 В. Г. Гак, նշված աշխ., էջ 257:

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ ԵՎ ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ

Պատճառաբանվածության խնդիրն* ընդհանրապես փիլիսոփայության, նշանագիտության ու լեզվաբանության և, մասնավորապես, բառագիտության ու տերմինագիտության դժվար, բազմիցս քննարկված, բայց մինևույն ժամանակ վերջնականապես չլուծված խնդիրներից մեկն է**։ Իր բնույթով վիճելի այս խնդիրն նվիրված ուսումնասիրություններում, բնական է որ, պետք է արտահայտվեն տարբեր և նույնիսկ իրարամերձ տեսակետներ***։

Տերմինների պատճառաբանվածության դրսևորումների և դրանց յուրահատկությունների ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի թե՛ տեսական և թե՛ գործնական առումով****։ Այսպես, այն կարող

* Օգտագործված և հիշատակված գրականության հղումներն ու մատնանշումները տրվում են բուն շարադրանքում՝ փակագծերի մեջ, թվային նշանակումներով։ Առաջին թիվը համապատասխանում է ներկա աշխատանքի գրականության ցանկում տեղ գտած աշխատությունների համարներին, իսկ երկրորդ և հաջորդ թվերը, որոնք ստորակետով բաժանվում են առաջինից, ցույց են տալիս համապատասխան ուսումնասիրությունների էջերը։

** Այսպես, լեզվաբանական տերմինաբանության խնդիրներին նվիրված Պրագայի (1960 թ.) ու Վարշավայի (1962 թ.) խորհրդակցություններին, ինչպես նաև 1969 թ. Լենինգրադում և 1975 թ. Կալինինգրադում կայացած սեմինարների մասնակիցների ուշադրության կենտրոնում էր տերմինների և ընդհանրապես լեզվական նշանի պատճառաբանվածության հարցը։ Այս մասին տե՛ս, օրինակ՝ (70, 149—151). (127, 443—445) (126, 372—373) (89) (105)։

*** Նպատակահարմար ենք գտնում տարբեր կարծիքների մասին խոսել այս կամ այն հարցի քննության կապակցությամբ։

**** Հասկանալի է, որ հեղինակը բոլորովին էլ չի հավանում ներկա աշխատանքի շրջանակներում սպասելի պատճառաբանվածության իրողության հետ կապված բոլոր հարցերի քննությունը։ Եղած ուսումնասիրություններին, ինչպես նաև մեր դիտարկումների արդյունքները հաշվի առնելով, այստեղ հիմնականում փորձ է արված՝ ա) գտնել ավելի լայն մոտեցում քննվող իրավությանը, բ) գիտության տարբեր բնագավառների լեզվի և տերմինաբանության վերլուծության (ընդ որում, արտալեզվական ու ներլեզվական մի շարք գործոններին) հիման վրա բացահայտել տերմինների պատճառաբանվա-